
ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
REVIEW OF ARMENIAN STUDIES
ВЕСТНИК АРМЕНОВЕДЕНИЯ



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

INTERNATIONAL REVIEW OF ARMENIAN STUDIES



2023 N 1 (31)
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
TRI-ANNUAL JOURNAL PUBLISHED SINCE NOVEMBER 2013

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2023 Թ. N 1 (31)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ · HISTORY

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ · ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ · ART

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ · PHILOLOGY

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ · PUBLICATIONS

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ · BOOK REVIEWS

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY

АЭЛИТА ДОЛУХАНЯН*
Член-корреспондент НАН РА,
доктор филологических наук, профессор,
зав. кафедрой древней и средневековой армянской литературы
и методики ее преподавания в АГПУ им. Х. Абовяна
aelita.dolukhanyan@gmail.com
DOI: 10.54503/1829-4073-2023.1.5-15

ИСТОРИЯ АРЦАХА В ТРУДАХ ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ

Ключевые слова: Арцах, Азербайджан, геноцид, зарубежные историки, территория Армении, урартская надпись, историческая истина.

Введение

Прежде чем обратиться к трудам выдающихся французских арменоведов XIX, XX и XXI веков, необходимо рассмотреть, что писали об Арцахе армянские историки. В этом контексте исключительны свидетельства отца армянской историографии Мовсеса Хоренаци и известного историка XIII века Степаноса Орбеляна, согласно которым Арцах входил в состав Армении еще в глубокой древности до нашей эры[1].

По словам Хоренаци, во времена Аждаака Мара Арцах уже являлся частью Великой Армении. Великолепный переводчик «Истории Сюника» Степаноса Орбеляна – Ашот Абрамян ссылается в своих сносках на тот отрывок из исследования академика Сурена Еремяна по «Географии» Ана-

---

* *Հոդվածը ներկայացվել է 23.09.22, գրախոսվել է 23.09.22, ընդունվել է տպագրության 28.04.23:*

[1] **Մովսես Խորենացի** 1913, 106:

нии Ширакаци, который гласит: «Область Арцах, согласно «Географии», была 10-й областью Великой Армении площадью 11.528 квадратных километров. Она включала современный Нагорный Карабах и простиралась до Иджеванского района. Она была присоединена к Кавказской Албании в 387 году, а после восстановления независимой армянской государственности стала частью Армении»[2].

Утик был двенадцатой областью Армении с 8 провинциями. Арцах, как территория Великой Армении, уже значится в урартских клинописных надписях[3].

То что Утик и Арцах являлись территориями Великой Армении, подтверждает Н. Адонц на основе иностранных источников – трудов Страбона и Диодора[4].

Микаэл Чамчянц в своей книге «История Армении» пишет, что Арцах был одной из 15 областей Великой Армении[5]. Научными источниками Чамчянца являются труды Хоренаци и Прокопия.

У Гевонда Алишана есть специальное исследование, посвященное Арцаху, в котором, помимо армянских источников, он опирается на факты, предоставленные зарубежными авторами.

Французские арменоведы об Арцахе

Когда основоположник французского арменоведения А.-Ж. Сен-Мартен писал свой монументальный труд «Исторические и географические заметки об Армении», кроме трудов армянских летописцев он использовал многочисленные разноязычные источники – греческие, латинские, арабские, персидские и др. Представляя историю Армении, Сен-Мартен проявляет критический подход. Некоторые страницы его книги посвящены истории Арцаха.

Говоря о династиях Армении, – Айказянах, Аршакидах, Багратидах, Рубенидах Киликии, о последнем Лусинянском царе, Сен-Мартен не забывает упомянуть, что в Нагорном Арцахе, южнее Гандзака и Барды, еще в

---

[2] **Ստեփանոս Օրբելյան** 1986, 429–430:

[3] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա 1981, 72:

[4] **Ադոնց** 2009, 357:

[5] **Չամչյանց** 1984, 208:

начале XIX века существовали небольшие независимые княжества, армянские владельцы которых называли себя меликами: «Мелик, имя происходит от арабского Мелик, что означает царь»[6].

К пятнадцати областям Армении, упомянутым в книге, относятся следующие: 1) Высокая Армения, 2) Тайк, 3) Гугарк, 4) Утик, 5) четвертая Армения, 6) Туруберан, 7) Айрарат, 8) Васпуракан, 9) Сюник, 10) Арцах, 11) Пайтакаран, 12) Агдзник, 13) Мокк, 14) Корчайк, 15) Персидская Армения.

Говоря о десятой области Арцах, он указывает, что в 1818 году Арцах уже был «подчинен Российской империи».

Сен-Мартен отмечает, что с XIII века Арцах носил также название Хачен, к тому же Арцах иногда называли Малым Сюником.

В своем небольшом очерке Сен-Мартен знакомит читателя с городами Арцаха. Это Гандзак, Гандзасар, Тавуш, Хачен, Джараберд, Амарас, Варанд, Дизак.

Арменовед дает толкование названия города Гандзак. По его мнению, название Гандзак восходит к армянскому слову гандз (сокровище), ибо, несомненно, он был назван так в силу того, что в этом городе хранились сокровища древних армянских царей. А Амарас был для армян святыней, поскольку там хранились мощи святого мученика Григория: «Дьяконы мощи Григория взяли, привезли в Малый Сюник и похоронили в городе Амарасе»[7].

Мари Броссе перевел труды тринадцати армянских историков на французский язык, добавив ценные предисловия и сноски. 1839 годом датируется его исследование, посвященное армянским монетам. Ученый солидарен с армянскими историками в том, что цари Кавказской Албании имели армянское происхождение[8]. Он приводит изображение медной монеты армянского царя Кавказской Албании Горика, на обеих сторонах которой армянскими буквами написаны армянские слова. Броссе посвятил двухтомный объемистый труд работе Степаноса Орбеляна «История Сюника», переведенной им с древнеармянского на французский язык. Мно-

[6] **Saint-Martin** 1818, 42–43.
[7] **Saint-Martin** 1818, 43–44.
[8] **Brosset** 1839, 34.

гие страницы исследования М. Броссе являют собой исследование топографии Сюника. Ученый приводит отрывки из трудов Шахназарянца, Алишана, Инджиджяна, отмечая, что слово Сисакан, согласно Шахназарянцу, в разговорной речи стало Сисианом. Перечисляя провинции Сюника, Броссе локализовал Хачен, иногда называемый Малым Сюником и Абандом, между Сюником и Арцахом.

М. Броссе говорит также о важной географической части Армении, Карабахе, особенно о городе Шуши. Карабахская область Армении граничит с Гандзаком или Елизаветполем с востока, а с запада – с рекой Кура и армянской областью Ордубад. Местность гористая, но лесистая, поэтому Карабах и получил название Черный Сад (Jardin noir). Карабах состоит из Арцаха, Малого Сюника и Утика. Крупнейшая река Арцаха – Тартар, впадающая в Куру; есть также река Хачен. Наряду с рассказом Орбеляна Броссе представляет связанные с регионом политические и географические факты. Область разделена на 6 провинций, одной из которых является Зангезур, ранее называвшийся Кашатаг. Здесь протекают реки Тартар, Базарчай и Воротан. Центром является поселок городского типа Горис. Из сел можно назвать Хндзореск, жители которого отличились беспримерным мужеством во время Капанской войны, Корнидзор, в котором 75 домов и большая церковь без купола, а также Караундж, Тех, Хзнавар, Хот и др. Важными населенными пунктами являются Сисиан и Брнакот. Брнакот был резиденцией знаменитых меликов Тангянов, построивших мост через Базарчай и Каравансарай. Каракилиса находится на другом берегу реки Воротан, напротив Брнакота.

Мегри расположен неподалеку от Ордубада, в состав которого входит провинция Багк. В Зангезуре находится Татев, духовный центр Сюника. В VIII–X веках он стал резиденцией духовных лидеров Сюника, а в конце XIV и начале XV веков Татев был известным научным центром Армении благодаря Овану Воротнеци и Григору Татеваци. Татевский монастырь – каменное строение с надписью князя Тарасаича в центре. Колокольня монастыря построена Ованом Воротнеци. В селе Татев насчитывается 100 домов, в числе которых дома потомков меликов Орбелянов.

Далее М. Броссе подробно описывает Татевский монастырь, говорит о его надписях, рассказывает о Великом ските Сюника, о Сатанинском мосте, Алидзоре и Шнере.

Отдельная часть книги посвящена монастырям, монастырским надписям и местности Вайоц Дзор. Во всех провинциях Броссе обособляет деревни и поселения, принадлежавшие аристократии. Село Мартирос в Вайоц Дзоре являлось старой летней резиденцией князей Прош. Арменовед повествует также о монастырях Нораванк и Танаат.

Далее он описывает монастыри Гегаркуника, остров Севана с его монастырями, монастыри Сотской области. В работе Броссе подробно говорится о монастырях Арцаха, в частности, о Гандзасаре и Амарасе, со ссылкой на рассказы путешественников, описавших их, и рассказ часто выглядит так, словно сам Броссе видел все это. Он подчеркивает, что Гандзасар был построен в 1226 году армянским князем Джалалом и являлся главной церковью. А Амарас считает резиденцией католикосов Кавказской Албании, позже перенесенной в Партав и Гандзасар. Там есть церковь, которую основал сам Григорий Просветитель.

В книге Броссе интересен отрывок, посвященный описанию горы Мрав. «В центре Арцаха возвышается гора Мрав, у подножья разбрасывая во все стороны ручьи и родники. Это очень цветущая гора, возвышающаяся, как королева среди своих слуг»[9]. Он объясняет также значение названия горы – «Мраву сар – Пик Смерти».

Фредерик Маклер с восхищением писал об Арцахе в своей книге «Вокруг Армении», которая была опубликована в 1917 году. Приводимые им факты указывают на Геноцид армян, организованный младотурками.

Арменовед напоминает, что армяне, как цивилизованный народ, давно появились на исторической арене. Достаточно вспомнить свидетельства Геродота и Страбона. Армения играла важную роль на Востоке наряду с древней Ассирией и Персией. Находясь на стыке Востока и Запада, она стала связующим звеном между Европой и Азией.

Уже в XVII–XVIII веках два ярких имени прославили армянский народ. Первый представил в Европе армянскую литературу, а второй, обращаясь

[9] Histoire de la Siounie 1864, 167.

к европейским монархам, пытался привлечь внимание европейцев к армянскому народу, изнемогавшему под исламским гнетом. При этом Ф. Маклер подчеркивал, что этот азиатско-европейский народ, окруженный кровожадными полчищами, является христианским и связан с ценностями западной цивилизации.

Первым из этих двух пионеров национального движения был Аббат Мхитар, а вторым – Исраэль Ори.

Основой политического и духовного возрождения нации становится национально-освободительное движение армян. В поисках освобождения от мусульманского ига интеллектуальные круги армянского народа обратились к русскому царю Петру Великому.

Времена крестовых походов уже прошли, они никак не способствовали освобождению Армении. Освободительное движение кавказских армян против мусульманской Персии **началось с героического Карабаха, который первым разжег пламя освободительной борьбы**[10]. План освобождения Карабаха был составлен местными армянскими дворянами-меликами. Именно они послали в Европу потомка меликов Исраэля Ори, который должен был заручиться поддержкой Европы в борьбе с мусульманским игом. На протяжении двадцати лет И. Ори обращался к европейским монархам с просьбой о содействии армянам. Он встречался с такими могущественными историческими личностями, как монарх Леопольд и русский царь Петр Великий. Казалось, последний спешил решить вопрос об освобождении Армении, но разразилась русско-шведская война, и Армянский вопрос был отложен до установления мира.

Отношения между Российской империей и армянами в книге Ф. Маклера представлены в разделе «Армянский вопрос и армянские движения в первой половине XVIII–XIX веков». Согласно легенде, вышеупомянутые имена передавались из уст в уста героическим народом Карабаха и Сюника. В этом разделе представлена борьба армян Сюника, возглавленная Давид Беком и полководцем Мхитаром, к которому присоединились князь Торос, Баяндур, Тер-Аветик и многие народные герои. В своем изложении Маклер неоднократно называет карабахцев и сюникцев

---

[10] **Macler** 1917, 19.

героическими людьми («...он переходит из уст в уста у героических народов Карабаха и Сюника»)[11]. Затем Маклер представляет русско-персидскую войну 1826–28 гг., после которой Восточная Армения была освобождена от ига мусульманской Персии и присоединена к христианской России. В этой войне армяне добровольно пролили кровь, помогая русской армии в освобождении Нахичеванского и Ереванского ханства – земли армян («Pays des Arméniens»).

Борьбу за достижение национальной независимости армянского народа возглавлял католикос Нерсес Аштаракеци, которого Маклер называет **«Гарибальди, одетый в сутану»**[12]. Генерал Паскевич нанес первый удар именно Нерсесу Аштаракеци, выслав его в Бессарабию в августе 1828 года.

Известный арменовед Жан-Пьер Маэ, член Французской и ряда европейских академий, вместе со своей супругой Анни Маэ создали ценное арменоведческое исследование «История Армении», в котором Арцах назван исконно армянской территорией. В своем труде французские арменоведы – Жан-Пьер и Анни Маэ раскрыли истинную суть карабахского движения. Данный вопрос по сей день не нашел своего справедливого решения в силу проводимой Турцией антиармянской политики и отрицания Геноцида. Вот что пишут супруги Маэ об усилиях армянской стороны по урегулированию карабахского конфликта: «Однако с самого начала своего президентства в 1991 году Тер-Петросян пытался урегулировать конфликт с Азербайджаном и нормализовать отношения с Турцией. Соглашаясь с тем, чтобы геноцид не упоминался в конституции Армении, он заявляет о своей готовности к диалогу без каких-либо предварительных условий. Поскольку глобальное соглашение по статусу Карабаха оказалось слишком сложным, он предложил действовать поэтапно. Обвиненный противниками в том, что он пошел на слишком большие уступки для достижения мира, он был вынужден подать в отставку в 1998 году»[13].

[11] **Macler** 1917, 20.
[12] **Macler** 1917, 21.
[13] **Mahé A. et J.-P.** 2012, 51.

В книге представлено, как объявленная М. Горбачевым перестройка стала причиной жестокой резни армян в промышленном городе Сумгаит в Азербайджане, а также резни армян в Баку и Кировабаде и их насильственной депортации. Советская армия и Горбачев не защитили армян.

Заключение

Арцахская область Великой Армении являлась частью Армении за тысячи лет до Рождества Христова. Об этом свидетельствуют иностранные источники, отец армянской историографии Хоренаци, урартские клинописные надписи. Ее восточные части, отделившиеся от Армении и вошедшие в Кавказскую Албанию, находились под властью армянских царей. Об этом со ссылкой на неоспоримые факты говорится в книге известного историка Асатура Мнацаканяна «О литературе Кавказской Албании»: «Это армянское царство в Агванке продержалось в течение IX–XII вв., но затем пало; лишенное самостоятельности, оно было присоединено к владениям последних армянских царей из династии Багратуни (Багратидов), затем – амирспасалара Закаре, а позднее окончательно распалось на отдельные княжества-меликства, просуществовавшие вплоть до XIX в.»[14].

Таким образом, Арцах – это армянская территория, и данный факт является исторической истиной, что подтверждают видные французские арменоведы с начала XIX века и до наших дней.

БИБЛИОГРАФИЯ

Աղոնց Ն. 2009, Երկեր, հ. IV, Երևան, ԵՊՀ հրատ., 715 էջ:

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա 1981, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 942 էջ:

Մովսես Խորենացի 1913, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տպղիս, Արագատիպ Մ. Մարտիրոսյանցի, 429 էջ:

Չամչյանց Մ. 1985, Հայոց պատմություն, հ. Ա., Երևան, ԵՊՀ հրատ., 803 էջ:

Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 614 էջ:

Brosset M. 1839, Monographie des monnais Arméniennes, SPb, 44 p.

“Histoire de la Siounie par Stépannos Orbélian, 1864, traduit de l’arménien par M.Brosset, premier liv. SPb, 1864, second liv., SPb, 1866.

Macler F. 1917, Autour de l’Arménie, Paris, lib.E. Nourry, 326 p.

Mahé Annie et Jean-Pierre 2012, Histoire de l’Arménie, Paris, Perrin, 742 p.

[14] **Мнацаканян** 1969, 8–192.

Saint-Martin J. 1818, Memoires historique et géographiques sur l'Arménie, t. I, Paris, imp. royal, 450 p.

Мнацаканян А.Ш. 1969, О литературе Кавказской Албании, Ереван, изд. АН АрмССР, 219 с.

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր՝ Արցախ, Ադրբեջան, ցեղասպանություն, օտար պատմիչներ, հայկական տարածք, ուրարտական արձանագրություն, պատմական ճշմարտություն:

Բոլոր նշանավոր ֆրանսիացի հայագետները Հայաստանի պատմությունը շարադրելիս նշել են, որ երկիրն ունեցել է տասնհինգ նահանգ, որոնցից թվով տասներորդը եղել է Արցախը, որը հայկական է եղել միշտ, մինչև որ XIX դարի սկզբին Արցախի մելիքները մահմեդականների արշավանքներից ազատվելու համար ինքնակամ միացել են ռուսական կայսրությանը: Այդ պատմական փաստերը Արցախի անցյալի մասին ֆրանսիացի հայագետները շարադրում են ոչ միայն ըստ հայկական աղբյուրների, այլև ըստ օտարազգի պատմիչների ու ժամանակագիրների վկայությունների: Ավելին՝ նրանք Շուշին հիշատակում են որպես Արցախի կարևոր կենտրոն:

Հայաստանի պատմական սահմանների մասին վկայել են նաև հին աշխարհի այնպիսի նշանավոր պատմիչներ, ինչպիսիք են Հերոդոտոսը (484–425 Ք.ծ.ա.) և Ստրաբոնը (61 Ք.ծ.ա. – 21 Ք.ծ.հ.): Ստրաբոնը նաև աշխարհագրագետ էր:

Սեն-Մարտենից սկսած (1818 թ.) մինչև մեր օրերի նշանավոր հայագետ Ժան-Պիեռ Մահեն, իրենց պատմական աշխատություններում վկայում են Արցախի մշտապես հայկական լինելը:

Արցախը հանձնվել է Ադրբեջանին 1921 թվականին Քեմալ Աթաթուրքի պահանջով՝ բոլշևիկների և Թուրքիայի քաղաքական հարաբերությունները կարգավորելու համար:

Պատմական Աղվանքում երկար տարիներ թագավորել են հայազգի արքաներ, Աղվանքի եկեղեցին ենթակա է եղել Հայաստանի եկեղեցուն, իսկ պետական լեզուն եղել է հայերենը: Իրականում Աղվանքում իշխել է հայ Բագրատունիների մի ճյուղը: Դա ևս փաստում են ֆրանսիացի հայագետները: Դա վկայում է նաև Աղվանքի հայազգի Կյուրիկե (Goric) արքայի պղնձե մետաղադրամի երկու կողմերում հայերեն տառերով և հայերեն լեզվով եղած արձանագրությունը:

Ֆրանսիացի հայագետները փաստում են նաև Արցախի ու Սյունիքի հայերի ազատագրական կռիվների մասին՝ ընդդեմ մահմեդական որևէ լծի:

THE HISTORY OF ARTSAKH IN THE WORKS OF FRENCH ARMENOLOGISTS

DOLUKHANYAN A.

Summary

Key words: Artsakh, Azerbaijan, genocide, foreign historians, Armenian territory, Urartian inscription, historical truth.

In their writings on the history of Armenia, all French Armenologists have noted that the country had fifteen provinces. Of those provinces, Artsakh was the tenth. It was always Armenian and under the control of Armenians until the beginning of the 19th century when Artsakh's Meliks (ruling princes, hereditary Armenian nobility) voluntarily joined the Russian Empire in order to protect themselves from the Muslim incursions. The French Armenologists cite those historical facts about the past of Artsakh not only on the basis of the Armenian sources, but also based on the accounts of foreign historians and the narratives of their contemporary writers. Additionally, the French Armenologists consistently cite Shushi as the important center of Artsakh.

The facts of the historical borders of Armenia are also ascertained in the accounts of Ancient Greek historians Herodotus (c. 484 – c. 425 BCE) and Strabo (61BCE – c. 21 CE). Notably, Strabo was also a geographer.

Antoine-Jean Saint-Martin (1818) and our contemporary, prominent Armenologist Jean-Pierre Mahé have documented in their works that Artsakh has always been Armenian.

Artsakh was handed over to Azerbaijan in 1921 due to of the demands made by Kemal Ataturk in order to normalize the relations between the Bolshevik government and Turkey.

Historical Caucasian Albania that was on the territory of modern-day Azerbaijan, which corresponds to the Northern Persian province of Adurbadagan ("Atrpatakan" in Armenian), for long periods of time was governed by Armenian kings. The Albanian Apostolic Church was under the religious jurisdiction of the Armenian Apostolic Church since 705 CE. Caucasian Albania's state language was Armenian. In fact, Caucasian Albania was ruled by one of the branches of the Armenian Bagratid dynasty. The French Armenologists have documented this as well. This is further reinforced by the fact that the Caucasian Albania's Armenian King Goric's copper coins have Armenian writing on both sides.

The French Armenologists have also documented the resistance and liberation movement by Armenians against any Muslim oppression or domination.

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ*
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
bznazt@gmail.com
DOI: 10.54503/1829-4073-2023.1.16-27

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՍԻՄԵՈՆ ՊՂՆՁԱՀԱՆԵՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ[1]

Բանալի բառեր՝ հայագիտություն, վրացագիտություն, միջնադարագիտություն, թարգմանական մատենագրություն, ձեռագրագիտություն, ազգային ինքնություն, Սիմէոն Պղնձահանեցի:

Ներածություն

Միջնադարագետին Կովկասի մշակութային աշխարհը ներկայանում է որպես ազգային ինքնության խնդիրների տեսանկյունից բազմադեմ և գրեթե չուսումնասիրված մի երևույթ: Վաղուց ի վեր մասնագետների (Ն. Մառ[2], Լ. Մելիքսեթ-Բեկ[3], հ. Ն. Ակինյան[4], Պ. Պետերս[5], Ի. Աբուլաձե[6], Պ. Մուրադյան[7], Զ. Ալեքսիձե[8], Մ. Ռափավա[9], Ա. Լիդով[10] և ուրիշներ) ուշադրության կենտրոնում է հայ-վրացական փոխհարաբերությունների, ազգային ինքնության խնդիրների լուսաբանումը: Իմ հրապարակման նյութը քաղել եմ թարգմանիչ

* *Հոդվածը ներկայացվել է 20.08.22, գրախոսվել է 02.09.22, ընդունվել է տպագրության 28.04.23:*

[1] Երջանկահիշատակ Հայրապետ Մարգարյանը մեծ ներդրում ունի Հայաստանում վրացագիտության զարգացման բնագավառում: Նրա վաստակի շրջանակներում արժևորվում է նաև սույն հոդվածը, որ նվիրում եմ նրա հիշատակին:

[2] **Марр** 1906, 31–40 և այլուր.

[3] მელიქსეთ-ბეგი 1928:

[4] **Ակինեան** հ.Ն., 1951:

[5] **Peeters** 1950, 160–164.

[6] აბულაძე 1985, 17–28.

[7] **Մուրադյան** 2011:

[8] ალექსიძე 2016:

[9] რაფავა 2009, 615–624:

[10] **Lidov** 1991, 7–21 ect.:

Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական ժառանգության հետ կապված հիշատակարաններից, որոնք բացառիկ տեղեկություններ են հաղորդում նրա գործունեության մի քանի դրվագների մասին:

Թարգմանական մատենագրությունը մշակութային գործունեության այն ոլորտն է, որը մեզ թույլ է տալիս գնահատել միջնադարյան վանական դպրոցների խաղացած դերը հայոց մշակույթի զարգացման գործում: Մշակութային փոխառնչությունները Հայաստանին հարևան և քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ իրենց արտահայտությունն են գտել թարգմանական մատենագրության մեջ[11]: XII–XIII դարերում Հայոց մշակույթի ինտեգրումը քրիստոնեական մատենագրությունների հետ արտացոլված է ձեռագրերի հիշատակարաններում և պահպանված թարգմանական երկերում: Խնդրի քննարկման տեսանկյունից կարևոր է ընկալել պատմաաշխարհագրական և քաղաքական միջավայրը, ինչպես նաև այն նպատակները, որոնց շրջանակներում գործել են միջնադարյան հայ թարգմանիչները:

Հիշատակված դարաշրջանը ամբողջովին համընկնում է Կիլիկիայի Հայոց պետության գոյության ժամանակաշրջանի հետ: Հատկապես մշակութային խաչասերումները ամենօրյա էին Կիլիկիայի արևմուտքում գտնվող Ամանոսի կամ Սև լեռներում, ուր հաստատված էին քաղկեդոնական (բյուզանդական, վրացական և կաթոլիկ), հակոբիկ ասորական, նեստորական և հայկական վանական միաբանություններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ հարուստ գրադարան[12]:

Այդ գրադարաններում XII դարի երկրորդ կեսին պրպտող հայ մտավորականներից ամենահայտնին Ներսես Լամբրոնացին էր, որի հեղինակած հիշատակարանները թույլ են տալիս մեզ պատկերացում կազմել XII դարի հայոց եկեղեցու ծավալած թարգմանական գործունեության ահռելի չափերի մասին: Կարճ ժամանակում նրա գործակցությամբ մի քանի տասնյակ երկեր են թարգմանվում հունարենից, ասորերենից և լատիներենից: Այդ երկերը վերաբերում են միջնադարյան գիտության գրեթե բոլոր բնագավառներին՝ աստվածաբանություն, մեկնողական գրականություն, վարքագրություն, աշխարհագրություն, իրավաբանություն և այլն: Ընդ որում, Ներսես Լամբրոնացին գործակցում էր հույն-օրթոդոքս, հակոբիկ-ասորի և կաթոլիկ այլազգի հոգևորականների հետ: Կիլիկիայի թագավորության սահմաններում մեծ թափ

[11] **Բոզոյան** 2010, 273–281:

[12] Այդ վանական հաստատությունների տեղադրման մասին տե՛ս **Բոզոյան** 2020, 294–303:

ստացած թարգմանական այս շարժումը պետական և եկեղեցական հովանավորության շրջանակներում խոստումնալից պտուղներ տվեց նաև հետագա դարերում:

Թարգմանական շարժումը հայ մատենագրության մեջ ծավալվում էր ոչ միայն Հայոց եկեղեցուն պատկանող վանական միաբանությունների շրջանակներում, այլև դավանաբանորեն հայոց եկեղեցուն հակամետ կառույցներում: Այս տեսանկյունից հատկանշական է XIII դարի վերջում Քռնայում, Ապարաներում, Նախիջևանում և Մարաղայում կաթոլիկ միսիոներների կողմից խրախուսվող միարարական շարժումը, որի ընթացքում հարյուրավոր երկեր թարգմանվեցին լատիներենից հայերեն: Իհարկե հասկանալի է, որ շարժման բուն նպատակը հայոց եկեղեցու դավանաբանական հիմքերի խարխլումն էր: Թարգմանական գործունեությանը մասնակցում էին եվրոպացի դոմինիկյան կրոնավորներ, որոնց աջակցում էին նաև Հայոց եկեղեցուց բաժանված, Գլաձորի համալսարանի երբեմնի սան եղած հայազգի թարգմանիչներ: Դավանաբանական պայքարը Հայոց եկեղեցու դեմ՝ այս դպրոցի հիմնական ուղղությունն էր, թեպետ թարգմանված երկերի մեջ քիչ չէին նաև ճանաչողական բնույթի գործերը: Հատկանշական է, որ այս թարգմանություններից շատերն ընդօրինակվում էին Հայոց եկեղեցու դավանաբանության պաշտպանների կողմից, հաճախ էլ մեկնաբանվում էին հօգուտ Հայոց եկեղեցու հավատաբանական հիմքերի: Նման աշխատանքները լայնորեն օգտագործվում էին Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու մեկնություններում:

Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական վաստակը

Հայոց մատենագրության հարստացման շրջանակներում ուշագրավ երևույթ է նաև Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական բազմակողմանի գործունեությունը: Պահպանված հիշատակարանային վկայություններն այնքան սակավ են, որ թվում է, թե նա եզակի գործիչ է եղել իր ժամանակի մատենագրության ասպարեզում: Համենայն դեպս, նույն դարաշրջանի վրացերենից հայերեն թարգմանող այլ գրական գործիչների մասին տեղեկություններ մեզ չեն հասել, թեպետ պահպանվել են վրացերենից թարգմանված երկեր: Ըստ մեզ հասած հիշատակարանների՝ Սիմեոն կրոնավորը աշխատել է Գուգարքի, կամ ինչպես ինքն է ասում Լոռեի (ըստ XIII դ. վրացական սկզբնաղբյուրների՝ Սոմխիթի) Պղնձահանք վանքում, որը XIII դարի սկզբներին Իվանե Զաքարյանի միջամտությամբ անցել էր վրաց եկեղեցու տնօրինությանը (այդ

նույն ճանապարհին է ընտրել նաև Հնեվանքը)[13]: Սիմեոնի կենսագրության և մատենագրական գործունեության մի շարք դրվագների վերաբերյալ պահպանվել են սոսկ մի քանի հիշատակարանային վկայություններ:

Հայ մատենագրության մեջ պահպանված թողոնների մեջ կարևոր նշանակություն ունեն Սիմեոն Պղնձահանեցու գրական գործունեության մասին խոսող բազմաբնույթ հիշատակարանները, որոնք հավաքված են Վիեննայի Մխիթարյան միաբան Ներսես Ակինյանի՝ հիշյալ հեղինակի մատենագրական գործունեությանը նվիրված մենագրության մեջ[14]: Հիշատակարաններից հնագույնը մեզ է հասել Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 1013 ձեռագրում[15]: Այստեղ մեզ հետաքրքրող անձնավորությունը հանդես է գալիս ձեռագիրն ընդօրինակող գրչի կարգավիճակով: Նա 1227 թ. ընդօրինակում է Գրիգոր Նյուսացու երկերի ժողովածուն, որի մեջ ընդգրկված են վերջինիս մի շարք աշխատությունները և հայ մատենագրության մեջ հաճախ նույն հեղինակին վերագրվող «Յաղագս բնութեան մարդոյ» (ԽԲ բան) երկը: Հատկանշական է, որ վերջին երկի ընդօրինակման ժամանակ, հետևելով մատենագրական ավանդույթին, ավելի ճիշտ ընդօրինակման հիմք դարձած ձեռագրի վկայությանը, թեպետ աշխատանքը վերնագրված է «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», գրիչ Սիմեոն Պղնձահանեցին արտագրված բնագրի սկզբում կատարել է բանասիրական ճշգրտում. «Նեմեսոյի եպիսկոպոսի Եմեսիոյ է գիրքս» (ՄՄ-1013, թղ. 201ա): Հ.Ն. Ակինեանի կռահմամբ, Սիմեոնը 1227 թ. սրբագրումը կատարել է հավանաբար Հովհաննես Պետրիծիոնեցու (პეტრიწი) վրացերեն թարգմանության հաշվառմամբ[16]:

Այս հանգամանքն իսկ մեզ թույլ է տալիս ենթադրել, որ գործ ունենք միջնադարյան հայ և վրաց մատենագրությանը հմուտ գրչի և մատենագրի հետ, որը լավ գիտե հայրաբանություն: Ձեռագրի հետագա հնագրական և բնագրագիտական հետազոտությունը, կարծում եմ, ավելի պիտի ամրապնդի մեր այս կարծիքը, քանի որ ձեռագրում ընդօրինակված երկերի լուսանցքներում պահպանվել են բավական թվով սրբագրություններ և լրացումներ, որոնց մանրակրկիտ հետազոտությունը հետագայում թույլ կտա ավելի հստակ ասելու, թե դրանք մեկ այլ օրինակի համեմատության, կամ թե այլալեզու (ենթադրելի է վրացերեն) բնագրի հետ համեմատության արդյունք են: Սիմեոն Պղն-

[13] Տե՛ս **Մուրադյան** 1977, 143, 203:

[14] **Ակինեան** Հ. Ն., 1951, 5–9:

[15] **ՄՑՀՁՄՄ,** հտ. Դ, 2008, 53–58:

[16] Տե՛ս **Տաշեան** 1895, 1–22, հմմտ. **Ակինեան** Հ. Ն., 1951, 6:

ձաիանեցի գրիչը ձեռագրի վերջում, սեփական հիշատակարանից առաջ, հարկ է համարել բերել հիշատակված երկերի թարգմանական հիշատակարանը (ՄՄ-1013, թղ. 241), որում ընթերցողին տեղեկացնում էր, որ, դեռևս հինգ դար առաջ, ընդօրինակված երկերը համատեղ ջանքերով թարգմանել են Դավիթ Հյուպատոսը (Կենառ[17]) և Ստեփաննոս Սյունեցին 719 թ. Կոստանդնուպոլսում, Լևոն Գ Իսավրացի կայսեր իշխանության առաջին տարում[18]: Խոսքն իհարկե վերաբերում է VIII դարի առաջին կեսի թարգմանիչներին, որոնց թարգմանած երկերի հիշատակարաններից մի քանիսը մեզ են հասել ավելի ուշ գրված տարբեր ընդօրինակություններում[19]: Ինչպես այս, այնպես էլ սրանից անմիջապես հետո գրված հիշատակարանները թվագրված են բյուզանդական արարչական թվականով, որը, ըստ Կ. Կեկելիձեի, մեծ տարածում է ունեցել նաև վրաց մատենագրության մեջ[20]: Նույն երևույթը հայ մատենագրության մեջ դիտել է Պ. Մուրադյանը[21]: Այս նույն թվագրման համակարգն օգտագործված է նաև Սիմեոնի մեկ այլ հիշատակարանում, որը վերաբերում է Պրոկղ Դիադոխոսի Աստվածաբանական Շաղկապների թարգմանությանը[22]:

Եմեսիացու երկի հիշատակարանում Սիմեոնը հավաստում է, որ Գրիգոր Նյուսացու երկերը ընդօրինակել է ընտիր և լավ հին օրինակներից («լաւ աւրինակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր»)[23], որից էլ կարելի է ենթադրել, որ ձեռագրի լուսանցքների սրբագրումներն ու հավելումները երկու կամ ավելի հին ձեռագրերի համեմատության արդյունք են: Սա նշանակում է նաև, որ գրիչն իր ձեռքի տակ ունեցել է հայերեն ձեռագրերի նշանակալի հավաքածու: Համադրելով բերված փաստերը Պ. Մուրադյանը ենթադրում է. «Հայկական և վրացական մատենագրության հանդեպ ցուցաբերած այսպիսի ծանոթությունը, հավանաբար, և՛ հարուստ գրադարանի առկայություն է ապացուցում

[17] Այս եզրույթի մասին տե՛ս **Zeibt** 1974, 369–380:

[18] Ցավոք, այս հիշատակարանի մասին խոսք անգամ չկա հղված ձեռագրացուցակում: Պետք է հիշել նաև, որ Գրիգոր Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների շուրջ ընդարձակ հոդված է տպագրել Կ. Մուրադյանը (տե՛ս **Մուրադյան** 1991, 101–110), ուր բնագրագիտական քննության է ենթարկել հիշյալ հիշատակարանը: Այս մատյանից է հիշատակարանն ընդօրինակել նաև Ա. Մաթևոսյանը (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը):

[19] Այդ մասին տե՛ս **Տաշեան** 1895, 7–12, hմմտ. **Հիշատակարաններ Ե–ԺԲ** 1988, 24–26:

[20] Տե՛ս კეკელიძე 1945, 325–341:

[21] **Мурадян** 2012, 120–132:

[22] Տե՛ս **Ակինեան** 1951, 23–25:

[23] **ՄՑՀՁՄՄ,** hտ. Դ, 2008, 56:

Պղնձահանքում, և՛ արժանավոր կրթօջախի գոյությունը»[24]: Իր ձեռքի տակ լավ գրադարան ունենալու փաստի մասին է վկայում նաև ձեռագրի պահպանակը, որը ներկայացնում է մինչև X դարը գրված երկաթագիր Ավետարանի երկու թերթ Ղուկասի ԺԵ, ԻԲ գլուխների ընդօրինակությամբ[25]: Դավանաբան հետազոտողների համար կարևոր է այն փաստը, որ պատառիկում ԻԲ գլխից բացակայում են Քրիստոսի քրտինքին վերաբերող՝ 44–46 տները, որը չեն նկատել նկարագրողները: Սիմեոն կրոնավորի եզակի ինքնագիր հիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը գրվել է «…յերկիրս Հայոց, մերձ ի Լաւռէ, ի վանքն որ կոչի Սպլենձահան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, յիշխանութիւն Իվանէ Աթապակին՝ շինողի վանիցս…» (ՄՄ-1013, թղ. 241): Այլ մանրամասների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

Թարգմանիչ Սիմէոն Պղնձահանեցին և նրա ազգային ինքնությունը ըստ հիշատակարանների

Սիմէոն Պղնձահանեցու մատենագրական վաստակի մասին պատմող մյուս հիշատակարանները վերաբերում են նրա ձեռնարկած թարգմանական գործունեությանը: Այդ ձեռագրերի մեջ հնագույնը Մխիթար Այրիվանեցու կողմից 1283 թ. ընդօրինակած «Ճառընտիրն» է, ուր «[Ա]մելափաւսի իմաստասիրի եւ հռետորի Աթենացո եպիսկոպոսի Լուծմունք Պրոկղի Դիադոխոսի անուանեցելո[յ] Աստուածաբանութեանց»[26] երկից անմիջապես հետո, Գեղարդավանքի կրոնավորը ընդօրինակում է երկի թարգմանիչ Սիմեոն Պղնձահանեցու հիշատակարանը (ՄՄ-1500, թղ. 1121բ), որն ըստ հեղինակի, գրված է «…**զերկիրս Հայոց** ի վանս վրաց, որ կոչի Պղնձահանք յաւիտենից թուականին ՑՉԾԶ (= 6756-5508 = 1248)»[27]: Նախորդ հիշատակարանից տարբերվող «ի վանս վրաց» արտահայտությունը թույլ է տվել մասնագետներին ենթադրել, որ Պղնձահանքը թեպետ գտնվում է Հայոց երկրում (**զերկիրս Հայոց**)[28],

[24] **Մուրադյան** 1977, 209–210:

[25] Հմմտ. **ՄՑՀՁՄՄ,** հտ. Դ, 2008, 54–55:

[26] Հմմտ. **ՄՑՀՁՄՄ,** հտ. Դ, 2008, 1459, այս ձեռագիր ժողովածուի գրության հանգամանքների և բովանդակության մասին մանրամասն տե՛ս **Հարությունյան** 1985, 100–145:

[27] Հմմտ. նույն տեղում:

[28] Այս երկի ու հիշատակարանի մերօրյա վրաց թարգմանիչները և հետազոտողները պնդում են, որ երկը թարգմանվել է Հարավային Վրաստանում, տե՛ս პროკლე დიადოხოსი 2009, 24 (հայերեն բնագիր), 25 (վրացերեն թարգմանություն), էջ 90 (Ամփոփում), 102 (Summary): Ցավոք, վրաց հայագետների հրապարակած երկի բնագրագիտական ծիրից դուրս են մնացել Հ. Տաշյանի պատմաբանասիրական հետազոտութ-

իր պատկանելությամբ վրաց վանք է: Հատկանշական է, որ Պրոկղ Դիադոխոսի երկի լուծմունքը Սիմեոն Պղնձահանեցին թարգմանել է վրացերենից («ի վրաց լեզուէ ի հայ լեզու»): Այս հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ երկի թարգմանության տարում՝ 1248 թ., Սիմեոնն արդեն 60 տարեկան էր և իրեն համարում էր «յոյժ ծերացեալ» և «տկարացեալ յաչաց»: Այս հիշատակարանը թույլ է տալիս Սիմեոնին ճանաչել ոչ միայն որպես ազգությամբ հայ, այլ նաև հայ և վրաց քրիստոնյա մատենագրության հմուտ գիտակ, որը հետամտում է հարստացնելու սեփական, այսինքն՝ հայ ազգային մատենագրությունը («յայն սակս թարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»): Վերջին խոսքերը փաստում են, որ անկարելի է չինական պարիսպ կանգնեցնել հայերենով պահպանված քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական մշակույթների միջև (ինչպես դա կատարվում է մերօրյա որոշ «գիտական» հետազոտություններում). թարգմանչի նպատակն է ծառայեցնել իր կողմից թարգմանված երկերը ընդհանուր ազգային նպատակին՝ հայ մատենագրության հարստացմանը:

Ի դեպ, Պրոկղի այս Լուծմունքը ընդօրինակված է նաև Չմշկածագի հայ-քաղկեդոնական միջավայրում, 1298 թ. (տե՛ս Երուս., թ. 336, գրիչ՝ Սերգիս), որը վկայում է, որ ինչպես հայոց եկեղեցու դավանաբանության ջահակիր Մխիթար Այրիվանեցու, այնպես էլ Չմշկածագի հայ քաղկեդոնականների միջավայրում եղել են հիշատակված երկերի ընթերցողներ:

Հովհան Սինայեցու «Սանդուխք աստուածային ելից» հայերեն թարգմանության՝ 1361 թ. ընդօրինակված հնագույն ձեռագրերից մեկը[29] (Բեռլին, թ. 25), Ի (XX) գլխի վերջում տեղեկացնում է, որ մինչ այստեղ թարգմանել է Մինաս Սյունակեցը Տրապիզոն քաղաքից, իսկ դրանից հետո՝ մյուս գլուխները շարունակել է թարգմանել Սիմեոն քահանան՝ վրացերեն լեզվից[30]: ՄՄ-1925 ձեռագիրը (1401 թ.) վերստին հավաստում է, որ Հովհաննես Սինայեցու հիշատակված երկը «Ի ճառէն ի վեր» վրաց լեզվից թարգմանել է Սիմեոնը (թղ. 89բ)[31]: Ենթադրվում է, որ հիշատակված Տրապիզոնցի Մինաս թարգմանիչը

յուններում առկա բազմաթիվ նկատառումներ (տե՛ս **Տաշեան** 1895, 23–48, 147–161): Հեղինակները շրջանցել են նաև իմ՝ Թբիլիսիում ընթերցված և հրապարակված հոդվածը. տե՛ս **Bozoyan** 2012, 164–172:

[29] Այս երկի հնագույն, 1329 թ. ընդօրինակությունը նկարագրված է Խաչիկ Դադյան վարդապետի ձեռագրերի մեջ տե՛ս **Թոփճեան** 1898, 83–86: Հմմտ. **Ակինեան** 1951, 108:

[30] Այս մասին տե՛ս **Ակինեան** 1951, 106–107, 110–111, 119–125:

[31] Տե՛ս **ՄՑՀՁՄՄ,** հտ. Զ 2012, սյուն 588:

Հովհաննես Սինայեցու երկի Ա-Ի գլուխները թարգմանել է հունարենից: Այս փաստը շրջանցվում է Սիմեոն Պղնձահանեցու թարգմանական երկերին անդրադարձած ժամանակակից որոշ հետազոտողների կողմից:

Նույն թարգմանչի հետ գործակցության վկայության ենք հանդիպում նաև մեկ այլ ձեռագրում: 1582 թ. Իոան գրչի կողմից Ակն գավառի Նորվան /կամ Աթմա/ վանքում ընդօրինակված «Յունական Շարակնոց»-ում ևս հավաստվում է, որ այդ ժողովածուն թարգմանել են պապա Մինասը և պապա Սիմեոնը (Բազմավէպ, 1894, էջ 328, ծան.)[32]:

Ինչպես տեսանք, Սիմեոն Պղնձահանեցու անմիջական ընդօրինակությամբ մեզ է հասել Գրիգոր Նյուսացու հունարենից հայերեն թարգմանված երկերի ժողովածուն (1227 թ.): Հետագա ընդօրինակություններով պահպանվել են նաև Սիմեոն Պղնձահանեցու կողմից վրացերենից հայերեն թարգմանված Պրոկղ Դիադոխոսի, Հովհաննես Դամասկացու և Հովհաննես Սինայեցու աստվածաբանական-փիլիսոփայական երկերը: Պահպանված հիշատակարանները ցույց են տալիս, որ Սիմեոն կրոնավորը գործակցել է Չմշկածագի, հնարավոր է նաև այլ վայրերի հայ-քաղկեդոնական մշակութային գործիչների հետ: Ակնհայտ է, որ Սիմեոն Պղնձահանեցին տիրապետել է վրացերենին, անթերի՝ դասական հայերենին: Նա անկասկած հայ մատենագրության մեծ գիտակ է եղել: Հիշատակված երկերի թարգմանությունը Սիմեոնը պայմանավորում է հայ մատենագրության մեջ հիշատակված հեղինակների երկերի բացակայությամբ («այլ զի ոչ էր սա թարքմանեալ ի մերս լեզու»): Մերս լեզու ասելով, հեղինակը նկատի ունի հայերենը:

Եզրակացություն

Հայ-քաղկեդոնականների (օրթոդոքս և կաթոլիկ) միջավայրի համար հավանաբար հատուկ էր երկակի, կարելի է ասել մասնատված աշխարհընկալումը: XIII դարում, հավանաբար դրանից հետո էլ, նրանցից շատերը իրենց դեռևս հայ էին համարում: Այդ են վկայում քաղկեդոնական միջավայրից վկայված սակավաթիվ հիշատակարանները: Դրա ապացույցներից է 1035 թ. Աթոնի մեծ Լավրայում գրված վավերագրի վերջում Թեոկտեստոս վանահոր հայերեն ստորագրությունը[33]: Կամ թե Անտիոքի շրջակայքում հայտնաբեր-

[32] Հմմտ. **Ակինեան** հ. Ն. 1951, 193:

[33] Տե՛ս **Բարթիկյան** 1973, 68–72: Նմանատիպ մի շարք վկայություններ Հր. Բարթիկյանը հավաքել է Հովհաննես Սկիլիցեսի երկի հայերեն թարգմանության ծանոթագրություններից մեկում (տե՛ս **Բյուզանդական աղբյուրներ,** Գ, 334–336, ծան. 394):

ված վրացերեն արձանագրությունը. "ეკლესიაჲ არს სომეხთოჲ" մակագրությամբ[34]: Բերված փաստերն իհարկե պահանջում են նոր հաստատումներ և փաստարկումներ, այնուամենայնիվ հիշատակված վկայությունները խոսում են հայ քաղկեդոնականների էթնիկ գիտակցության մասին, որին իրենց աշխատանքներում անդրադարձել են նաև ֆրանսիացի արևելագետ Ժոզեֆ Լորանը և բելգիացի գիտնական, արևելագետ Պոլ Պետերսը[35]:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակինեան հ. Ն. 1951, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 276 էջ [Ազգային Մատենադարան, ՃԿԴ]:

Բարթիկյան Հր. 1973, Մեծ Լավրայի առաջնորդ (պռոտոս) Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը (Աթոնում հայ քաղկեդոնականների գործունեության հարցի շուրջ). Բանբեր Մատենադարանի, 11 (1973), Երևան, Հայկ ՍՍՀ ԳԱ հրատ., էջ 68–72:

Բոզոյան Ա. 2010, Օտար թարգմանիչները հայ մատենագրության մեջ. - Լևոն Խաչիկյան-90, Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9–11 հոկտեմբերի 2008), Երևան, «Նաիրի», էջ 273–281:

Բոզոյան Ա. 2020, Սեւ լեռների վանական համալիրներն ըստ Ղ. Ալիշանի տեղադրութեան. - Բազմավէպ 178, p. 294–303:

Բյուզանդական Աղբյուրներ 1979, Գ, Հովհաննես Սկիլիցես / թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 439 էջ [Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10]:

Թոփճեան Յ. 1898, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, ժողոված 1878–1898, Մասն Ա, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ ս. Էջմիածնի, 112 էջ:

Հարությունյան Է. 1985, Մխիթար Այրիվանեցի (կյանքն ու ստեղծագործությունը), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակություն, 240 էջ:

Հիշատակարաններ Ե-ԺԲ 1988, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե–ԺԲ դդ. / Աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 368 էջ:

Մուրադյան Կ. 1991, Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների հարցի շուրջ. – առանձնատիպ ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 3, էջ 101–110:

Մուրադյան Պ. 1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. աղբյուրագիտական քննություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն (Armeno-Georgica 1), 364 էջ:

Մուրադյան Պ. 2011, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը. Աղբյուրագիտական քննություն և բնագրեր, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակություն, էջ 288:

[34] Տե՛ս **Mécérian** 1964, 111–112:

[35] Տե՛ս **Laurent** 1920, 35–55 և **Peeters** 1950, 160–164.

ՄՑՀՁՄՄ, հտ. Դ 2008, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ / Կազմեցին Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսեան, խմբագրութեամբ՝ Փ.Անթաբեանի, Յ.Քեօսեանի, Ա.Ղազարոսեանի, Տ. Շահէ քհյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դևրիկեանը, Երևան, «Նաիրի» և ԵՊՀ հրատարակչութիւններ, 1694 սյուն:

ՄՑՀՁՄՄ, հտ. Ջ 2012**,** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ջ: Ձեռագիրք 1801–2100 / Խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նաիրի» հրատարակչություն, 1888 սյուն:

Տաշեան Յ. 1895, Մատենագրական մանր ուսումնասիրություններ, Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան [Ազգային Մատենադարան, ԺՋ], էջ 296:

Bozoyan A. 2012, Le traducteur Siméon Plandzahank et la question de l'identité nationale. – Actes du colloque: L'Europe et le Caucase. Les relations interrégionales et la question de l'identité / Sous la direction de M. Dokhtourichvili, G. Dédéyan, I. Augé, Tbilissi, Edition Université d'Etat Ilia, 2012, p. 164–172:

Laurent J. 1920, Les Origines médiévales de la question arménienne. – Revue des Études arméniennes, I, p. 35–55 [վերահրատ. տե՛ս J. Laurent, Études d'histoire Arménienne, Louvain, éd. Peeters, 1971].

Lidov A. 1991, The Mural Paintings of Akhtala, Moscow, Nauka Publishers, 1991, p. VIII+129:

Mécérian J. 1964, Expédition archéologique dans l'Antiochène occidentale, Beyrouth 1964, p. 144, 84 planches, 4 cartes (Mélanges de l'université Saint Joseph, t. XL, fasc. I):

Peeters P. 1950, Le tréfonds oriental; de l'Hagiographie byzantine, Bruxelles, p. 160–164.

Zeibt W. 1974, Kynarios – Ein "Neuer" Wurdenträger am Hof des Byzantischen Kaisers. Die Lösung der Probleme um das Armenische Կենառ mit Hilfe Byzantinischer Bleisiegel. – Հանդէս Ամսօրեայ, ՁԸ տարի, էջ 369–380:

Марр Н. 1906, Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, in: Византийский временник, XII, N 1–2, Приложение, с. 68.

Мурадян П. 2012, Хронология систем летоисчислений по армянским источникам (Эра по Р.Х.). – Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Բ, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, էջ 120–132:

აბულაძე ი. 1985, რუსთაველის ხანის ქართველიდან ნათარგმნი მწერლობის ძეგლები. - ი. აბულაძე, შრომები, ტ. IV, თბ., გვ. 17–28:

ალექსიძე ზ. 2016, ქრისტიანული კავკასია. ისტორიულ-ფილოგიური ძიებანი, 3, თბილისი :

კეკელიძე კ. 1945, წელთაღრიცხვა ძველ საქართველოში. - კ. კეკელიძე. ეტიუდები, ტ. II, თბ. 1945, გვ. 325–341:

მელიქსეთ-ბეგი ლ. 1928, „ჩრდილო მხარეთა სომეხთა მოძღვარნი" და მათი ვინაობა, სომეხ ქართველთა ურთიერთობა საკითხებთან დაკავშირებით, ტფილისი, XII+261 გვ. [հայերեն թարգմ. տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., «Վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը. հայ-վրացական հարաբերություններ (պատմական հետազոտության

փորձ)], վրացերենից թարգմանեց Հր. Բայրամյանը, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակություն, 2016, 288 էջ]

პროკლე დიადოხოსი 2009, პროკლე დიადოხოსი, კავშირნი ღმრთისმეტყუელებითნი და იოანე პეტრიწის განმარტებები. სომხური ვერსია, III / ტექსტი გამოსაცემად მოამზადა, გამოკვლევა დაურთო მაია რაფავამ კრიტიკული აპარატი და ლექსიკონი მოამზადეს მაია რაფავამ, ხათუნა გაფრინდაშვილმა და ირმა ხოსიტაშვილმა, თბილისი 2016, 474 გვ. [Պրոկղ Դիադոխոսի Շաղկապք աստուածաբանականք և Իոաննէ Պետրիծիի Լուծմունք. հայերեն թարգմանություն, III / Հետազոտությունը հավելել և տեքստը տպագրության է պատրաստել Մայա Ռափավան, քննական ապարատը և բառարանը պատրաստել են Մայա Ռափավան, Խաթունա Գափրինդաշվիլին և Իրմա Խոսիտաշվիլին, Թբիլիսի 2016, 474 էջ]:

რაფავა მ. 2009, სომხური მონოფიზიტების წინააღმდეგ ქართულ მწერლობაში არსებული ნაწარმოებების სტილისტიკა. – „ბიზანტინილწგია საქართველოში“, თბ., გვ. 615–624:

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В ЛИТЕРАТУРНОМ НАСЛЕДИИ СИМЕОНА ИЗ ПЛНДЗАХАНКА

БОЗОЯН А.

Резюме

Ключевые слова: арменоведение, грузиноведение, медиевистика, переводная литература, кодикология, национальная идентичность, Симеон из Плндзаханка.

Материалом для данной публикации послужили памятные записи (колофоны), связанные с литературной деятельностью переводчика Симеона из Плндзаханка. В XIII в. им были переведены с грузинского языка на армянский труды Прокла Диадоха, Иоанна Синаита и др. Памятные записи этих переводов содержат эксклюзивные сведения о некоторых эпизодах деятельности известного переводчика. По сохранившимся записям, монах Симеон работал в монастыре области Гугарк или, как он отмечает, в районе Лоре (по грузинским средневековым источникам – в области Сомхити). При посредничестве Иванэ Закарида этот монастырь в XIII в. перешел под контроль грузинской церкви. Симеон по вероисповеданию был халкедонитом, поэтому служил в грузинской церкви. Однако в своих колофонах он подчеркивал: «для того я

перевел этот труд, чтобы [в литературе] моего народа не было пробелов» («յայն սակս թարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»):

REFLECTION OF NATIONAL IDENTITY IN THE LITERARY LEGACY OF SIMEON OF PLNDZAHANK'

BOZOYAN A.

Summary

Key words: Armenology, Georgian studies, medieval studies, translated literature, codicology, national identity, Simeon of Plndzakhank.

The material for the present publication is the colophon records on the literary activity of the translator Simeon of Plndzahank'. In the XIII century, he translated the works of Proclus Diadochus, John Sinaiticus, etc. from Georgian into Armenian. The memorable records of these translations contain exclusive information about several episodes of the famous translator's activities. According to surviving records, monk Simeon worked in the monastery of Gugark province or, as he notes, in the region of Lore (according to Georgian medieval sources – in the region of Somkhiti). In the XIII century, this monastery came under the control of the Georgian Church due to Ivane Zakarid's mediation. Simeon was a Chalcedonian by confesion, so he worked in the Georgian church. However, in his colophons he underscored: «I translated this [work], so that [the literature of] my people may have no gaps» («յայն սակս թարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»):

АРМЕН МАРУКЯН*

Доктор исторических наук,
Институт истории НАН РА
mararmts@yahoo.com
DOI: 10.54503/1829-4073-2023.1.28-43

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРИЧИН И ПРЕДПОСЫЛОК ГЕНОЦИДА АРМЯН И ДАРФУРСКОГО ГЕНОЦИДА

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, пантюркизм, Дарфурский геноцид, коренное чернокожее население, националистическая идеология, организация «Братья мусульмане».

Вступление

Выяснение причин любого геноцида – довольно сложный процесс. Геноцид, как тягчайшее международное преступление, осуществляется в силу ряда факторов: этнических, политических, религиозных, социальных и других, которые подлежат всестороннему анализу. Сравнительный анализ причин и предпосылок преступлений геноцида позволяет не только представить общности, но и выявить особенности, специфические проявления данного преступления в отношении различных групп-жертв. В связи со сказанным особый интерес представляет сравнительный анализ причин и предпосылок Геноцида армян и Дарфурского геноцида.

Положение групп-жертв двух геноцидов до осуществления этих преступлений

Как известно, христианское население Османской империи было лишено равных прав с мусульманами. К примеру, если убийство мусульманина мусульманином каралось смертной казнью, то убийство немусульманина мусульманином оставалось безнаказанным. Показания немусульман в османском суде не имели такой же доказательной силы, как показания му-

* *Հոդվածը ներկայացվել է 10.01.23, գրախոսվել է 11.01.23, ընդունվել է տպագրության 28.04.23:*

сульман. Армяне, как и другие христиане империи не служили в османской армии, они лишены были права иметь оружие[1]. В отличие от мусульман, христиане, в том числе армяне, жившие в Османской империи, были обременены различными налогами. Помимо подушного и военного налогов армяне должны были предоставлять курдам право зимовать в своих домах, а также три дня в году предоставлять бесплатное жилье турецким чиновникам[2]. Таким образом, в Османской империи сформировался «бесправный» статус армянского населения, которое было поставлено вне закона[3].

До совершения массовых преступлений в отношении коренного чернокожего населения Дарфура данный регион на протяжении нескольких столетий являлся независимым султанатом, а в состав Судана был включен после его захвата англо-египетскими войсками в 1916 г. До 2011 г. Дарфур состоял из 3 штатов: Северный Дарфур, Западный Дарфур и Южный Дарфур[4], которые граничили с Ливией, Чадом и Центрально-Африканской Республикой. В 2011 г. власти Судана изменили административное деление Дарфура, разделив его на 5 штатов: Центральный Дарфур, Восточный Дарфур, Западный Дарфур, Северный Дарфур и Южный Дарфур[5]. Новым административным делением Дарфура власти Судана пытались раздробить регион на более мелкие административные единицы и усилить свое влияние в этой части страны.

Регион Дарфур был заселен как арабскими, так и неарабскими этническими группами, которые преимущественно исповедовали ислам. Крупнейшей неарабской этнической группой в Дарфуре были фуры, откуда и возникло название региона: «Дарфур» означает «родина фуров». В Северном Дарфуре среди значительного числа населения арабских племен проживало неарабское кочевое племя загава, тогда как Западный Дарфур был заселен преимущественно неарабским населением племен фуров, ма-

[1] См. **Gunter** 2011, 2–3.
[2] См. **Gunter** 2011, 33–34.
[3] См. **Gunter** 2011, 18.
[4] См. **Totten** 2011, 2.
[5] См. URL: https://www.reuters.com/article/sudan-darfur-idAFLAE55791520110505, 01.12.2022.

салитов, даджунов и другими[6]. Жесткие климатические условия и жестокая конкуренция в вопросе ограниченных земельных ресурсов с годами привела к борьбе за землю между арабскими кочевниками-скотоводами и неарабскими племенами фермеров, доступ к водным ресурсам, право пасти скот на пастбищах и за сельскохозяйственные угодья.

Դերասան Հ. Ղափլանյանի անունը, որպես ռեժիսորի ասիստենտի, առաջին անգամ հանդիպում ենք Պատանի հանդիսատեսի թատրոնում (այսուհետ՝ ՊՀԹ) 1941 թվականի «Կամո» (Մ. Քոչարյան, ռեժ. Ա. Աղասյան) բեմադրության առիթով: Այսինքն՝ այս շրջանում նա գործում է Տիգրան Շամիրխանյանի ղեկավարությամբ և Աղասյանի բեմադրություններում ևս ընդգրկվելով՝ հմտանում է որպես ռեժիսոր: Իրար են հաջորդում «Թիկունքում» (Ա. Շայբոն, ռեժ. Ս. Քոչարյան, 1942), «Հատուկ առաջադրանք» (Ս. Միխալկով, ռեժ. Ա. Աղասյան, 1947), «Երջանիկ սերունդ» (Ա. Շայբոն, ռեժ. Տ. Շամիրխանյան, 1947), «Երիտասարդ գվարդիա» (Ա. Ֆադեև, բեմականացումը՝ Ռ.

* *Հոդվածը ներկայացվել է 16.12.22, գրախոսվել է 16.12.22, ընդունվել է տպագրության 28.04.23:*

Շիրոյանի, Ա. Տեր Հովնանյանի, ռեժ. Տ. Շամիրխանյան, 1947) բեմադրությունները, որտեղ ռեժիսորի ասիստենտի նրա ներգրավվածությունը հուսադրող է համարվում թատրոնի բեմադրիչների կողմից: Մինչ բեմադրություններ հանձնարարելը, Շամիրխանյանն իր ղեկավարությամբ Հ. Ղափլանյանին հնարավորություն է տալիս, որպես ռեժիսոր, մասնակցելու «Սուվորովականներ» (Ա. Շայբոն, Հ.Ղափլանյան, բեմ. Տ. Շամիրխանյան, 1948), «Խաչատուր Աբովյան» (Դ. Գազազյան, բեմ. Տ. Շամիրխանյան, 1948), «Բոռ» (Ա.Լ. Ժեյյաբուժսկու, ըստ Է. Վոյնիչի համանուն վեպի, բեմ. ղեկ. Տ. Շամիրխանյան, 1948), «Հետախույզներ» (Տ. Շամիրխանյան, Հ. Ղափլանյան, 1949), «Ջյունիկ» (Վ. Լյուբիմովա, բեմ. Տ. Շամիրխանյան, 1949) և այլ պիեսների բեմադրական աշխատանքներին:

Այսպիսով, մինչ ասիստենտության շրջանը, Հ. Ղափլանյանը որպես ռեժիսոր է մասնակցել թվով քսանութ բեմադրություններում:

Իր ռեժիսորական մտահղացումներով նա աչքի է ընկել այս շրջանի «Խաչատուր Աբովյան» բեմադրության մեջ: Ռիզաևը գրում է, որ Աբովյանի և հայոց կաթողիկոսի հանդիպման գլխավոր ու կարևոր տեսարանը բեմադրել էր Հ. Ղափլանյանը. «Ռեժիսորն այս տեսարանում շատ ինքնատիպ լուծում էր տվել բեմավիճակի գծանկարին, ձգտելով շարժման միջոցով արտահայտել մեծ լուսավորչի և հոգևոր առաջնորդի փոխհարաբերության էությունը»[1]: Նույն տեղում կարդում ենք, որ Հ. Ղափլանյանին է վստահված եղել ներկայացման նաև տարբեր տեսարանների մշակումը և փորձերի ղեկավարությունը: Բեմադրությունն ավարտող տեսարանի մասին ևս Ռիզաևը Հ. Ղափլանյանի անունն է շեշտում: Անհետանալու գիշերը լուսազուրկ բեմում մոմը ձեռքին Աբովյանը խորացել ու ծածկվել է մթության մեջ: Հաջորդող պատկերում մթությունը թրատող կայծականման սլաքներ են հայտնվել[2]: Նման լուծումներն արդեն իսկ հուշել են Հ. Ղափլանյանի երևակայության, բեմական գտնված վճիռներով պիեսի տեսարանները բեմադրելու կարողության մասին:

Առաջին բեմադրությունը

1950 թվականի «Կախարդական կարաս» (Պ. Մալյարևսկի) պիեսը նա բեմադրել է առանց որևէ օգնության և արժանացել թատերախոսների ուշադրությանը: Բեմադրության մասին իր «Արժեքավոր բեմադրություն» հոդվածում Ալեքսանդր Արաքսմանը հավանության է արժանացնում Սոս Սարգսյա-

[1] Հմմտ. **Ռիզաև** 1969, 31:

[2] Հմմտ. **Ռիզաև** 1969, 32:

նի Բահիրի դերակատարումը և այլ դերակատարների աշխատանքը և բեմադրական մի շարք լուծումներ. «Ներկայացումը պարզ է ու խոր, գունեղ ու դիպուկ,- գրել է նա: - Հրաչիկ Ղափլանյանի այս բեմադրությունը նրա ռեժիսորական ընդունակությունների վկայականն է»[3]: Ներկայացումը ունեցել է նաև կրկնություն (1960 թ.): (Ալ. Մանուկյանը ստորագրվել է Արաքսման, հետագայում՝ Արաքսմանյան):

Մեկ այլ հոդվածում «Կախարդական կարասը» համարվել է այս «թատրոնի նվաճումներից»[4]: Կարդում ենք դրական խոսքեր ընդհանուր հեքիաթային մթնոլորտի, ագահությունը մատնանշող սարդոստայնի ձևավորման մասին. «Ղափլանյանը շատ ճիշտ և խելացի կերպով է դրսևորել պիեսի իդեան: Նա հմտորեն է օգտագործել տեխնիկական էֆեկտները և հատկապես երաժշտությունը»:

Հ. Ղափլանյանը Շամիրխանյանի հետ համատեղ «Քեռի Թոմասի տնակը» (Ա. Բրուշտեյն, ըստ Հ. Բիչեր-Ստոուի համանուն վեպի, ռեժ. Տ. Շամիրխանյան, 1950) պիեսի բեմադրությունում տեսարանների, կերպարների կրճատումներ է իրականացրել, խմբագրումներ կատարել: Այս միջամտությունները «թերություն» համարելով՝ հոդվածի հեղինակները դրական են արտահայտվում. «բեմադրող ռեժիսորները ստեղծել են հուզիչ ներկայացում: Բեմադրության մեջ օգտագործված ռեժիսորական հնարքներից պետք է նշել ազդեցիկ և ծանր մոմենտների կոմիկական գույներով համեմված մատուցումը»[5]: Մեջբերված մտքի շարունակությունում նրանք այդ մոտեցումները համարում են այս տարիքի հանդիսատեսի համար դյուրըմբռնելի:

Ներկայացման մասին դիտողություններով է հանդես եկել այդ տարիներին դեռևս ուսանող Ռիզաևը[6], որոնք հիմնականում մի քանի տեսարանների խորը մշակման մասին են:

«Հռչակավոր կապիտանների ակումբը» (Վ. Կրիպս, Կ. Մինց, ռեժ. Հ.Ղափլանյան, Ջ. Տատինցյան, 1953) ներկայացման մասին Վարսիկ Գրիգորյանը գրում է.[7] «Ազնիվ պայքարով լի այս ներկայացումը պետք է դիտի յուրաքանչյուր դպրոցական»: Ներկայացման հերոսներն էին մանկական գրականությունից հայտնի տարբեր սիրված կերպարներ, որոնք իրենց համար-

---

[3] **Արաքսման** 1950, 124:

[4] **Հակոբյան** 1950, 3:

[5] **Գալստյան** 1950, 4:

[6] ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, «Коммунист» 17.01.1951:

[7] **Գրիգորյան** 1953, 2:

ձակ ու օրինակելի վարքագծով պայքարել են երազանքների համար: Հ. Գալստյանի հոդվածից[8] տեղեկանում ենք, որ ներկայացման սկզբում տիկնիկներ են կիրառվել: Նա նաև նույն տեղում նկատում է, որ ռեժիսորները հպանցիկ են անդրադարձել հերոսների արկածախնդրությունների նշանակետ առագաստանավի գաղտնիքի բացահայտմանը: Հոդվածագիրը պատճառը համարում է «հետաքրքրաշարժ ու զվարճալի գծերին» տուրք տալը: Ներկայացումը հաջողված է եղել, քանզի բեմը ներկայացրել է անիրական մի միջավայր, որտեղ կենդանություն են առել շնորհալի դերասանների ստեղծած հերոսները:

1953 թվականին Հ. Ղափլանյանը բեմադրել է Վ. Գումարյովի «Պավլիկ Մորոզովը»: Նա հանդես է եկել նաև որպես գլխավոր հերոս Պավլիկի դերակատար և նրան ներկայացրել է ուշադրություն գրավող համակրելի գծերով, նաև՝ խիզախ ու հանդուգն:

«Երիտասարդ ռեժիսյոր Հ. Ղափլանյանը լուրջ աշխատանք է կատարել պիեսում պատկերված ժամանակաշրջանն ու միջավայրը ճշմարիտ ու համոզիչ ներկայացնելու համար»,- գրել է Արծվի Հունանյանը[9]:

Ներկայացման երկու պավլիկներն էլ գրավոր արձագանքի են արժանացել, ընդհանուր հաջողության հետ մեկտեղ եղել են նաև բացթողումներ: Անդրադառնալով Պավլիկի երկու դերակատարների խաղին, Օֆելյա Ավետիսյանը գրում է, որ դերակատարներին չի հաջողվել խորապես ընկղմվել հերոսի ներաշխարհ. «...Պավլիկը իր ընկերների հետ երազում է լուսավոր ապագայի մասին,- գրել է նա: -Այստեղ ցանկանում ենք Պավլիկին տեսնել ավելի ոգեշնչված և նույնիսկ մի քիչ ռոմանտիկ»[10]:

Հ. Ղափլանյանի դերակատարման մասին հակասական կարծիքներ են եղել:

Հրաչյա Ղափլանյանը Հովհաննես Թումանյանին երկու անգամ անդրադարձել է այս թատրոնում: Նրա ստեղծագործություններից առաջինը «Ոսկի քաղաքը» հեքիաթն է (պիեսը՝ Գ. Յաղջյանի, 1954): Ներկայացման մասին կարծիքները ասում են, որ հեքիաթային միջավայրում են «հայտնվել» հանդիսատեսները, բեմանկարիչների (Գ. Վարդանյան, Ա. Չիֆլիկյան) ու բեմադրիչի տպավորիչ վճիռներով է ներկայացել կախարդի կողմից ցուցադրվող ոսկի քաղաքը և իրական ոսկի քաղաքը: Համլետ Գալստյանը գրում է. «...ստեղծել

---

[8] **Գալստյան** 1950, 3:

[9] Հունանյան 1953, 4:

[10] Հմմտ. **Аветисян** 1953, 3:

են գաղափարական մեծ հնչեղություն ունեցող, գեղարվեստորեն ուշագրավ մի ներկայացում»[11]: Զգեստների ձևավորման, բեմադրական հնարամիտ վճիռների, նկարիչների և դերասանների կատարած աշխատանքի մասին իր հոդվածում[12] Սուրեն Առաքելյանը գովեստի խոսքերով է հանդես գալիս և ներկայացումը թատրոնի կարևոր ձեռքբերումներից համարում:

Անդրադառնալով բեմադրության մեջ մասսայական տեսարաններին, Գալստյանը դրանք անհաջող է համարել. «Ազատ, ստեղծագործ աշխատանքը բեմադրության մեջ ներկայացված է շատ մակերեսային, թեթևակի: Չի զգացվում, որ Ոսկի քաղաքի մարդիկ աշխատում են և մարդկային աշխատանքն է երջանկության միակ աղբյուրը»[13]:

Պատանի հանդիսատեսի թատրոնի խաղացանկում քիչ չեն եղել նաև հայ հեղինակների ստեղծագործությունների բեմադրությունները: Դրանցից է և Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի բեմադրությունը (1955 թ.): Ս. Ռիզաևը գրում է, որ բեմադրության մեջ ռեժիսորը ներմուծումներ է արել, ինչպես, օրինակ՝ ծովայիններով տեսարաններն ու կերպարները, որոնք, ինչպես ինքն է գրում. «կոչված են ընդլայնելու միջավայրի բնութագիրը, հաղորդելու մթնոլորտի լիակատար պատկերը»[14]: Խաչատուր Ավագյանի կարծիքով ներկայացման մեջ. «Ղափլանյանը ջանացել էր խորացնել ու լրացնել կերպարները, և այդ բանում նրան շատ էին օգնել դերակատարները, հատկապես՝ Է. Էլբակյանը»[15]:

Բաբկեն Հարությունյանը իր հայ թատրոնի XIX–XX դարերին նվիրված գրքում նկարագրում է ներկայացման ավարտական տեսարանը: Կարդում ենք, որ Օդեսայի ծովափին կյանքն ընթացել է իր բնականոն հունով և հայտնվել է սիրած աղջկա արարքից խոցված, խռովահույզ Լևոնը՝ արդեն իսկ այն գիտակցումով, որ այլևս չի մեկնի բաղձալի Իտալիա: Նա կանգնած դիտել է հեռացող շոգենավը: Ծովի ֆոնին նշմարվել է Լևոնի ուրվագիծը: Այնուհետև, Հարությունյանը շարունակում է նկարագրությունը և մեզ հայտնում, որ լույսերը դանդաղ մարել են, ապա նորից լուսավորվել է բեմը, իսկ պատա-

[11] **Գալստյան** 1954, 4:
[12] **Առաքելյան** 1954, 3:
[13] **Գալստյան** 1954, 4:
[14] **Ռիզաև** 1969, 70:
[15] **Ավագյան** 1973, 140:

նի Լևոնի փոխարեն ցուցադրվել է ծովափից նրա ընկերների գտած բաճկոնը[16]:

Տարբեր թատերագետների կարծիքով Հ. Ղափլանյանի որոշ բեմադրություններ համարվում են աճեմյանական գծի շարունակությունը, ինչը սակայն ապացուցված չէ: Ներկայացումներում եղել են բեմավիճակներ, որոնք հիշեցրել են Վարդան Աճեմյանի բեմադրությունների նույն տեսարանների վճիռները: Այդ ներկայացումներից է «Խարդավանք և սերը» (Ֆ. Շիլլեր, 1956): Բեմադրության մեջ որոշ տեսարաններ նմանություն են ունեցել անվանի ռեժիսորի՝ մինչ այդ Լենինականի Ա. Մռավյանի անվ. թատրոնում արված բեմադրության տեսարանների հետ: Ազդեցությունը խորն է եղել, սակայն, ինչպես Ռիզաևն է գրում, «…նույնիսկ ներկայացման շրջանակը ստեղծելիս Ղափլանյանը ոչ թե պարզապես կրկնել էր Աճեմյանի մտահղացումը, այլ ստեղծագործորեն զարգացրել այն»[17]: Այդ «կրկնությունները» եղել են հիմնականում գլխավոր հերոս-սիրահարների հանդիպումների տեսարաններում: Սակայն Հ. Ղափլանյանը, ի տարբերություն Աճեմյանի, տարբեր վճիռներով լրացրել էր ու հարստացրել ներկայացումը, ինչպես, օրինակ՝ սպիտակ շուշաններով պատված սանդուղքը (տեղեկությունը՝ Ռիզաևի մենագրությունում): Բոյաջիևը այն կարծիքին էր, որ Հ. Ղափլանյանի բեմադրությունը կարելի է կոչել «Լուիզա Միլլեր», քանզի բեմադրիչը առավել կենտրոնացել էր գլխավոր հերոսուհու ապրումների վրա. «Ռեժիսորն իր ներկայացման մեջ ստեղծագործական մեծ ներշնչանքով է բաց արել հասարակ ու ազնիվ աղջկա՝ Լուիզայի ողբերգական ճակատագիրը, նրա վառ, անաղարտ, ողջամիտ, բայց սկզբից արդեն դատապարտված սերը»[18]: Թատերախոսը գովելի է համարել այն, որ բեմադրիչը ներկայացումը ավարտել է առանց անկենդան տղային հրաժեշտ տվող հոր տեսարանի, ինչպես որ պիեսում է, և այն համարձակ քայլ որակել[19]: Խոսելով Լուիզայի բեմական կերպարի մասին, Բոյաջիևը գրել է, որ Նինել Դալլաքյանի դերակատարումը եղել է նորովի, անվախորեն սիրող ու այդ սիրո անհնարինության գիտակցությամբ հասունացած աղջկա վարքագծով[20]:

---

[16] **Арутюнян** 2012, 333:

[17] **Ռիզաև** 1969, 48:

[18] **Բոյաջիև** 1956, 80:

[19] Հմմտ.՝ **Բոյաջիև** 1956, 82:

[20] Հմմտ. «Театр» 11.11.1956, 122:

«Երբ տանն աչքեր չկան» (Ա. Արաքսմանյան, 1956) ներկայացման մասին համառոտ և միայն աֆիշային բնույթի «Բանվոր» թերթում հրապարակված տեղեկատվությունից բացի, ոչինչ չի տպագրվել:

1957 թվականին Թումանյանի «Գիքորը» նորից է բեմադրվել ՊՀԹ-ում (առաջին անգամ՝ 1939): Լևոն Խալաթյանն իր թատերախոսականում[21] Հ.Ղափլանյանի և Աստղիկ Աղասյանի «Գիքոր» բեմավորման մասին գրում է. «Նրանք ձգտել են «հարստացնել» «Գիքորի» բովանդակությունը, բեմի վրա ստեղծելով կենցաղային հետաքրքրաշարժ դրություններ <…> Բայց այս բոլորից շատ բան էլ փոխվել է»: Նա գրում է, որ Գիքորը և նրա հարազատները վշտաբեկ են ներկայացել, ասես, միագիծ՝ առանց զվարթության, ուրախության: Հոդվածագիրը վկայակոչում է արդեն անկողնային հիվանդ Գիքորի տեսարանը, որտեղ նա ներկայացել է ժամանակից շուտ հասունացած ու վհատված. «Բարձրանում է Գիքորը, հենվում արմունկների վրա (իսկ բեմադրողը այդ պահին ռամպայի մի խորհրդավոր լույս է ցոլացնում նրա վրա) կանչում է «ապի՛», բայց կարծես մոնոլոգ է նրա ասածը <…> Պատճառը «զգացումներ խաղալու» այսինքն, հոգեբանական էֆեկտներին զոռ տալու մեջ է»[22]: Այս կարծիքը հնարավորություն է տալիս մտածելու, որ բեմադրիչները գրական նյութը բեմադրել են ավելի սրելով դրա ողբերգականությունը:

Ներմուծված տեսարաններից, օրինակ, գյուղ-քաղաք համեմատություններ տեսարանին կամ նամակը կարդալու տեսարանին թատերագետը հակադրվելով լոտո խաղալու և Համբոյի սրտառուչ մուտքի տեսարանը, հավաստի է համարում այն. «…Բազազի տանը լոտո են խաղում… Կողքի սենյակում մեռնում է Գիքորը…Մութ խոհանոցից Բազազի աղմկոտ սեղանատուն է նետվում Համբոն և բացականչում. «Հե՜տ տվեք իմ բալին»: Այստեղ և՛ խորը դառնություն և՛ խիստ բողոք կա: Այստեղ է, որ ռեժիսուրան, իսկապես, ներգործում է հանդիսականի վրա»[23]: Հոդվածի շարունակության մեջ թատերագետը գրում է, որ Թումանյանի Գիքորը բեմից ընթերցվել է կարծես հիշեցնելով հոգեբանական դրամա: Լևոն Խալաթյանի դրական խոսքերին են արժանացել նաև ներմուծված տեսարանները, միևնույն ժամանակ նկատվել է, որ դրանք «Գիքորի» հետ կապ չունեն:

Գրիգոր Յաղջյանի «Գիշերային հրաշք» հերոսական դրամայի (1960 թ.), բեմադրությունը մեծ իրադարձություն էր թատրոնի համար: Այն մամուլի

[21] **Խալաթյան** 1957, 39:

[22] **Խալաթյան** 1957, 41:

[23] **Խալաթյան** 1957, N 10, 41:

ուշադրության կենտրոնում էր: Մասնագիտական հրապարակումները դրվատող էին, և չենք սխալվի, եթե ասենք, որ այն բազմաթիվ փառատոնների մասնակցած և հյուրախաղային ամենահարուստ կենսագրությունն ունեցող ներկայացումն էր այդ ժամանակաշրջանում:

Հ. Ղափլանյանը, հանդես գալով իր բեմադրության մասին կարծիքով, գրում է, որ թատրոնը մեծ պատասխանատվությամբ է աշխատել այս բեմադրության վրա և նկարագրում է առավել տպավորիչ մի տեսարան, որը ներկայացնում է ուկրաինական Շեպետովկա քաղաք գերմանացիների մուտք գործելը.«... Մթության մեջ, հեռվում երևում են էլեկտրական լույսեր, որոնք ռիթմիկ քայլերգի տակ հետզհետե մոտենում են, մեծանում: Այնուհետև կամացկամաց ընդգծվում, տեսանելի են դառնում գերմանացիների սիլուետները, և այն տպավորությունն է ստացվում, որ մի ամբողջ զորք է քայլում»[24]: Այս ներկայացման մեջ ևս տեսանելի է, որ նա դիմել է պատկերավոր միջոցների՝ լույսի ու ստվերի խաղարկման միջոցով ստեղծել պատրանք, դիմել պայմանական տարբեր վճիռների, նաև հանդիսատեսի երևակայությանը:

Գրիգոր Յաղջյանը «Ինչպես եմ գրել պիեսը» վերնագրով փոքր հոդվածում պատմում է, որ մեկնել է գլխավոր հերոս Կոտիկի հայրենիք, այնտեղ ծանոթացել պատերազմի, տղայի մասին եղած բոլոր մանրամասներին. «Իմ պիեսն այդպես եմ անվանել, որովհետև հայ պիոներ Աշոտի աչքին «հրաշքով» երևում է Կոտիկն ու պատմում այն մեծ պայքարի մասին, որ մղել են սովետական մարդիկ տարիներ առաջ, երբ ծնված չեն եղել Աշոտն ու նրա ընկերները»[25]:

Ներկայացման դերակատարումները դրվատանքի խոսքերի են արժանացել: Հանդիսատեսի շարքում էր նաև ներկայացման գլխավոր հերոս Կոտիկի մայրը: Դիտելով Նինել Դալլաքյանի դերակատարմամբ իր 14-ամյա Վալիկին, Կոտիկի հուզված մայրը ասել է, թե որքան դժվար է մոր համար բեմում իր որդուն «տեսնելը». «Երբ ես դիտում էի ներկայացումը, զգում էի, որ գտել եմ իմ Վալյայի՜ն, իմ որդու՜ն...»[26]:

Ներկայացման մեջ եղել են իրատեսական, կենցաղային տեսարաններ:

Վ. Բալայանը նկարագրել է ներկայացումն ավարտող տեսարանը, որտեղ պիոներ Կոտիկը գերմանացիներից ազատվելու միակ ելքը ինքնազոհությունն է համարում. «Նա գրպանից հանում է նռնակն ու, դիմելով կարմ-

[24] **Ղափլանյան** 1960, 3:
[25] **Ղափլանյան** 1960, 3:
[26] **Ղափլանյան** 1960, 3:

րավզկապ հայ պիոներին, պայթեցնում այն <….>: Պայթյունից հետո շրջապատում լռություն և մթություն է իշխում, դանդաղ վեր է բարձրանում հերոս պիոներ Վալենտին Կոտիկի հուշարձանը»[27]:

«Սուրի և Սամի արկածները» (1960թ.) /Ա. Շահինյան և Վ. Խաչիկյան/ պիեսը թատրոնի բեմ է բարձրացել նվիրված՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 40-ամյակին և աշխույժ քննարկումներ առաջացրել:

Ներկայացումը վարել են երկու հոգի՝ մի տղա և մի աղջիկ, որոնք պատմել են պիեսի հերոսներին սպասող արկածների մասին: Վարողների մասնակցությունը տարբեր բեմավիճակներում թատերախոսները վիճելի, նաև՝ թերություն են համարել:

ՊՀԹ-ին և ռեժիսոր Հ. Ղափլանյանին նվիրված հոդվածում Բոյաջիևը ներկայացումը համարում է ուրախ և դինամիկ, որպես թատրոնի հաջողություն[28]: Բեմադրության մեջ կարևոր են եղել զվարթ երաժշտական ձևավորումը (Է. Բաղդասարյան), բեմական ձևավորումը, դեկորացիաները:

Գրիգոր Զարեյանը և Արտ. Բաբայանը գրում են, որ ներկայացման մեջ պարի և երաժշտության կիրառումները չափից շատ են: Սակայն դրա հետ մեկտեղ նրանք հավանության է արժանացրել դերասանական կատարումները, բեմավիճակների կառուցումը և հատկապես «պավիլիոնային ծանր ձևավորման սկզբունքներից» հետզհետե ձերբազատվելը[29]:

Ներկայացման մասին գրական թերթում մանրամասների նկարագրություններով հոդված է տպագրել Գևորգ Էմինը, որտեղ նա նշում է բեմադրությունից որոշ տեսարաններ՝ պատկերացում տալով ներկայացման մասին: Վարողները բեմ գալով ազդարարել են տվյալ գործողության և տվյալ տեսարանի անունը, սակայն, բացի այդ, Էմինը գրում է, որ նրանք բարձրաձայնել են գործողության վայր հուշող իրերի անունները[30]. ««Ծառ»-ասում է վարողը՝ դատարկ բեմի վրա դնելով թղթե փոքրիկ մի թուփ, «արև՛»-հայտարարում է նա և բեմի վերևից իջնում է երեխայի ձեռքով նկարված մի դեղին գույնի արև….»,- հոդվածագիրը գրում է, որ հանդիսատեսը հավատացել է իր դիտածին: Հ. Ղափլանյանի նման պայմանական լուծումները թատրոնի լեզվով էին, թատերային և հանդիսատեսի երևակայությանը դիմող:

[27] **Ղափլանյան** 1960, 3:

[28] Հմմտ. «Коммунист» 1960, 3:

[29] **Զարեյան, Բաբայան** 1960, 3:

[30] **Էմին** 1960, 3:

Հաջորդող՝ «Այսպես անցնումն էին տարիները» (Ա. Արաքսմանյան, 1960) ներկայացումը ևս խորհրդային կարգերի հաստատման հոբելյանին էր նվիրված: Ներկայացման մասին շատ քիչ տեղեկություն կա:

Հրաչյա Ղափլանյանի ղեկավարությամբ երիտասարդ ռեժիսոր Նորայր Սարգսյանը բեմադրել է «Երգ սիրո և հավատարմության» (Վ. Գևորգյան, Ռ. Ռուբինյան, ըստ Գ. Մահարու «Մանկություն» և «Պատանեկություն» վիպակների, 1961) պիեսը: Է. Մանուկյանն այս ներկայացման մասին գրում է, որ բեմադրական հետաքրքիր պահ է եղել առաջին գործողության ավարտին լուսային ձևավորումը: Գլխավոր հերոսների հանդիպման տեսարանի, ինչպես հոդվածագիրն է կոչել, «դուետային» ձևը ևս նա համարել է բեմականորեն հետաքրքիր: Ներկայացման որոշ դերակատարումների և կերպարների վերաբերող անճշտությունների մասին կարծիքի կողքին նաև գովեստի խոսքեր ենք կարդում թատերախոսականում:

Հ. Ղափլանյանը, որպես բեմադրության ղեկավար, Աղասյանի հետ պատանիներին է ներկայացրել Ս. Միխալկովի «Սոմբրերոն» (1961թ.): Այն մամուլում մասնագիտական արձագանքի չի արժանացել:

«Քեզ կանչում են հեռուները» ներկայացումը (Ա. Ռիբակով, «Կրոշայի արկածները», 1961) հավաստի դերակատարումների շնորհիվ դրական կարծիքի է արժանացել: «Սովետական արվեստի» անդրադարձում գրված է. «…ներկայացման մեջ ցայտունորեն արտահայտվում է թատերախմբի առողջ միտումը՝ բեմական վառ կերպարներով, գրավիչ ձևավորմամբ, ամեն ինչով մերձենալ մեր պատանեկության այսօրվա կյանքին ու խոհերին, արձագանքել դրանց՝ տպավորիչ ու ազնիվ արվեստով» [31]: Լ. Վանյանը իր թատերախոսականում համարում է, որ Հ. Ղափլանյանը ստեղծել է «ռոմանտիկական ներկայացում», որտեղ նա կարևորել է բեմահարթակի կիրառությունը և «քանդակագործի» նման աշխատել մասսայական տեսարանների վրա[32]: Թատերախոսականում որոշակի վերապահումների ենք հանդիպում Հ. Ղափլանյանի՝ բեմադրության մեջ մի շարք փորձարարական հնարների դիմելու պատճառով, որոնցից են կինոցուցադրությունները, կամ այն տեսարանը, որտեղ պատանիները հոգնած և ծարավ են: Այդ տեսարանում Հ. Ղափլանյանը ռետինե խողովակով ջուր է բեմ բերել:

---

[31] «Սովետական արվեստ» 1961, N 12, 61:

[32] Հմմտ.«Коммунист» 1962, N 10, 4:

Բեմավորման ժամանակ բեմադրիչը պատանիներին դիմող ավտոբազայի ղեկավարի և աշխատողների խոսքերի՝ մի կերպարից-մյուսին փոխանցելու առումով ևս դիտողության է արժանացել:

Հ. Ղափլանյանի հեղինակությամբ և բեմադրությամբ «Անհայտ դերասանի հոբելյանը» (1961) հիմնականում թատերական տարբեր գործիչների մասին երգիծական ներկայացում է: Այդ մասին աֆիշային բնույթի հրապարակում ենք գտել միայն «Թատերական Երևանում» (1962, N 2, էջ 24):

Հ. Ղափլանյանի ղեկավարությամբ «Ձյունե թագուհին» ներկայացման (Ե. Շվարց, ըստ Հ. Ք. Անդերսենի հեքիաթի, ռեժ. Ն. Սարգսյան, 1962) մասին «Կոմունիստ» թերթում հրապարակվել է Ա. Ս. Պուշկինի անվան դպրոցի ուսուցչուհու կարծիքը,[33] որը ներկայացումը համարում է «լավագույն նվեր» պատանի հանդիսատեսին:

Գ. Յաղջյանի «Գարնան շունչը» (1962) ներկայացման մասին իր թատերախոսականում Ռուբեն Սանոյանը համեմատելով Պատանի հանդիսատեսի թատրոնի ներկայացումը Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի և Լենինականի թատրոնի բեմադրությունների հետ, գրում է, որ դրաման այստեղ ստացել է «բանաստեղծական-ռոմանտիկական գունավորում»[34]: Պիեսի հիմքում գլխավոր հերոս քննիչ Սուրենյանի (Խ. Նազարեթյան) ներաշխարհում ընթացող պայքարն է իր խղճի ու պարտավորության միջև, տատանվող մարդու հոգեբանական ապրումները: Ինչպես տեղեկանում ենք հոդվածից, ռեժիսորը ներկայացման մեջ խորհրդավոր գործող անձին ներկայացրել է անդրկուլիսյան ձայնի և ցուցադրվող նրա բազմաթիվ դեմք-տեսապատկերների միջոցով: Հոդվածագիրը այս վճիռը համարել է ներկայացման համար ոչ շահեկան, քանզի ձայն-տեսապատկերը Սուրենյանի հետ ակտիվ երկխոսության մեջ է եղել. «…դրանից ոչ միայն պայքարի լարվածությունն է թուլանում, այլև դանդաղում է տեմպը»,- գրել է նա[35]:

1966 թվականին ՊՀԹ-ում Հ. Ղափլանյանը բեմադրում է իր վերջին «Աղմկալից փողոց» ներկայացումը:

Բայանդուրի պիեսը, որը օրինակելի երկու պատանու մասին է, Հ. Ղափլանյանի բեմադրությամբ ու Նորայր Սարգսյանի ռեժիսուրայով հետաքրքիր է եղել հանդիսատեսի համար: Ներկայացման մեջ Հ. Ղափլանյանը օգտագործում էր էկրան: Ռ. Հաջիկյանը այդ վճիռը ողջունելով գրում է, որ «Քաղաքա-

---

[33] «Коммунист» 1962, N 96, 4:

[34] **Սանոյան** 1963, 38:

[35] **Սանոյան** 1963, 41:

վարության վնասներ» ֆիլմից ցուցադրվող դրվագը շեղող դեր է ունեցել. «…լավ կլիներ, որ կինոնկարի ցուցադրվելը առնչվեր ներկայացման բովանդակության հետ կամ կոնկրետաբար բխեր հերոսների ներքնաշխարհից»[36]: Ս. Ռիզաևը իր հոդվածում առանձին գովեստի խոսքերի է արժանացնում նկարիչ Գ. Վարդանյանի աշխատանքը, որը հիմնականում ցուցադրել է «հերոսները ձգվող մի լայն պողոտա: Խաչմերուկում կախված է եռագույն մի լուսաֆոր»[37]: Տարբեր տեսարաններում ձևավորումը փոփոխվել է՝ ըստ ներկայացվող միջավայրի:

1956 թվականից սկսած՝ Հրաչյա Ղափլանյանը Պատանի հանդիսատեսի թատրոնում աշխատելուն զուգահեռ, բեմադրություններ է ունեցել նաև Գ. Սունդուկյանի անվան թատրոնում:

Եզրակացություն

Ելնելով Պատանի հանդիսատեսի թատրոնում Հրաչյա Ղափլանյանի բեմադրությունների մասին գրված մասնագիտական տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ նա ունի թատերային ուրույն մտածողություն, ըստ որի՝ պայմանական ու գրոտեսկային վճիռներով բեմադրել է գրական նյութը: Երբեմն նույն ներկայացման մեջ նրա վճիռները համարվել են անտեղի, այլ դեպքերում կարևորվել են: Նա իր բեմադրություններում դիմել է տարբեր հնարների ու մոնտեցումների, կինոֆիլմերից դրվագներ է ցուցադրել, զավեշտի ու տպավորություն գործելու նպատակով կենդանի հավեր բեմ բերել, կամ ռետինե խողովակով ջուր կիրառել: Ականատեսների կարծիքով Հ. Ղափլանյանի ներկայացումները հիշվող են եղել, և պատանիները դրանք հետաքրքրությամբ են դիտել:

Այսպիսով, ուսումնասիրված մամուլում, լրագրային նյութերում բոլոր բեմադրությունների մասին չէ, որ կարողացել ենք տեղեկություն գտնել, սակայն մեծ մասամբ հնարավոր է եղել նկարագրել բեմադրիչ Հրաչյա Ղափլանյանի ողջ գործունեությունը պատանիների թատրոնում:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Առաքելյան Ս. 1954, «Ոսկի քաղաք», Գրական թերթ, 31.08, էջ 3:

Ավագյան Խ. 1973, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն 1929–1970, Երևան, «Հայկական թատերական ընկերություն» 224 էջ:

---

[36] **Հաջիկյան** 1966, 4:

[37] **Ռիզաև** 1966, 3:

Արաքսման Ա. 1950, Արժեքավոր բեմադրություն, Սովետական գրականություն և արվեստ, N 5, Երևան, էջ 124:

Բոյաջիև Գ. 1956, Նրանց մասին, որ մնացել էին Երևանում, Սովետական արվեստ, N 7–8, Երևան, էջ 80:

Գալստյան Հ. 1953, Հռչակավոր կապիտանների ակումբը, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Սովետական Հայաստան, 27 մայիսի, Երևան:

Գալստյան Հ. 1954, Ոսկի քաղաք, Ավանգարդ, 19 հունիսի, Երևան, էջ 4:

Գալստյան Հ., Մարտիկյան Վ. «Քեռի Թոմասի տնակը», Երևանի Հ.Ղափլանյանի անվ. դրամատիկական թատրոնի արխիվ:

Գրիգորյան Վ. 1953, Հռչակավոր կապիտանների ակումբը, Պիոներ կանչ, Երևան, N 49:

Զարեյան Գ., Բաբայան Ա. 1960, Պատանի հանդիսատեսի համար, Սովետական Հայաստան, Երևան, N 252, էջ 3:

Էմին Գ. 1960, Սուրի, Սամի, պայմանական ռեալիզմի և ռեալիստական պայմանականության մասին, Գրական թերթ, Երևան, N 44, էջ 3:

Խալաթյան Լ. 1957, Գիքորի նոր բեմադրության առթիվ, Սովետական արվեստ, Երևան, N 10, էջ 39:

Հակոբյան Ա. 1950, Կախարդական կարաս, Ավանգարդ, Երևան, N 53, էջ 3:

Հաջիկյան Ռ. 1966, Աղմկալից փողոց, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Ավանգարդ, 05 հուլիսի, Երևան:

Հունանյան Արծ., 1953, Պատանի հերոսը բեմի վրա, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Գրական թերթ, 17 հուլիսի, Երևան:

Ղափլանյան Հ. 1960, Սիրով ձեռնարկեցինք, Պիոներ կանչ, Երևան, N 37:

Ռիզաև Ս. 1966, Մեր իղձերի փողոցը, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, Սովետական Հայաստան, 23 հունիսի, Երևան:

Ռիզաև Ս. 1969, Հրաչյա Ղափլանյան, Երևան, «Հայկական թատերական ընկերություն» 232 էջ:

Սանոյան Ռ. 1963, …Իսկ ճշմարտությունը մեկն է, Սովետական արվեստ, Երևան, N 2, էջ 38:

Սովետական արվեստ 1961, Նոր բեմադրություն, ԵԹԿՊԻ-ի գրադարանի մամուլի բաժին, N 12, էջ 61:

Аветисян О. 1953, Павлик Морозов, Сталинец, 14.07.

Арутюнян Б.Б. 2012, Армянский театр XIX–XX веков, Москва, «Гуманитарий», 412 с.

Бояджиев Г. 1956, Театр, Москва, 11.11, с. 122.

Бояджиев Г. 1960, Молодой театр и его режиссер, Коммунист, Ереван, N 284, с. 3.

Ванян Л. 1962, Школа и жизнь, Коммунист, Ереван, N 10, с. 4.

Вартанян Т. 1962, Снежная королева, Коммунист, Ереван, N 96, с. 4.

Ризаев С. 1951, Хижина дяди Тома, Коммунист, Ереван, 17.01.

СПЕКТАКЛИ ГРАЧЬЯ КАПЛАНЯНА В ЕРЕВАНСКОМ ТЕАТРЕ ЮНОГО ЗРИТЕЛЯ

АРАКЕЛЯН Р.

Резюме

Ключевые слова: Театр юного зрителя, постановщик, режиссер, спектакль, сценическое воплощение, замысел, образ.

Известный армянский режиссер и театральный деятель Грачья Капланян начал свою творческую деятельность в ереванском Театре юного зрителя, на сцене которого им было поставлено двадцать восемь спектаклей. Свою режиссерскую деятельность он начинал в качестве ассистента выдающегося театрального деятеля Тиграна Шамирханяна, что во многом способствовало его профессиональному росту. Спектакли, поставленные Грачья Капланяном в ТЮЗ-е, вписали новую страницу в летопись армянского театрального искусства. Эти спектакли производили неизгладимое впечатление как на юных, так и взрослых зрителей.

STAGE PRODUCTIONS BY HRACHYA GHAPLANYAN IN THETHEATRE OF YOUNG SPECTATOR

ARAKELYAN R.

Summary

Key words: Theatre of the Young Spectator, Stage director, director, play, stage performance, intent, character.

Armenian theatre director and theatrical organizer Hrachya Ghaplanyan (1923–1988) started his creative activities at the Theatre of the Young Spectator and produced 28 stage productions. He worked as an assistant with the prominent theatre figure Tigran Shamirkhanyan, and this greatly enhanced his professional growth. The plays he staged at the Theatre of the Young Spectator wrote a new page in the annals of Armenian theatrical art and were highly appreciated by distinguished artists and theatre experts of the time. The audiences of both young and adult viewers were greatly impressed by his amazing creative stage productions.

MARIAM VARDANYAN*

Lecturer

Chair of Armenian Art History and Theory

Yerevan State University,

mariamvardanyan@ysu.am; vardmeri@yahoo.com

DOI: 10.54503/1829-4073-2023.1.156-167

ARM RELIQUARY FROM THE COLLECTION OF THE ARMENIAN DIOCESE OF ROMANIA: ON THE PROBLEM OF LOCAL ARTISTIC INFLUENCES*

Key words: Armenian colonies, Armenian Diocese of Romania, ritual objects, reliquaries, arm reliquaries, Dexters, Cilicia.

Introduction

Among the types of reliquaries used in the Armenian Church, the Arm reliquary occupies an important place. A large number of examples of the latter have reached us, and they are preserved in various museums of Armenia and the world, in private collections, in Armenian communities. They are presented both with rich artistic decoration, with the use of complex silversmithing and goldsmithing techniques, precious stones, and with simpler solutions.

The article discusses the issue of the possible period of inclusion of Arm reliquaries in the Armenian Church, and presents an Arm reliquary preserved in the Armenian Diocese of Romania, which is being studied for the first time, emphasizing the problems of local cultural influences.

* *Հոդվածը ներկայացվել է 10.02.23, գրախոսվել է 22.02.23, ընդունվել է տպագրության 28.04.23:*

* This study became possible by the support of the Diocese of the Armenian Church in Romania, Ministry of Culture of RA and State Committee of Science MES RA, within the frame of the research project No. SCS 13–6E440.

The art works have never been studied earlier, except in 2012 when on the initiative of Bishop Datev Hakobian, the leader of the Armenian Diocese of Romania and Prof. Levon Chookaszian, Head of Yerevan State University Chair of Armenian Art History and Theory, the study of the collections started.

Observations on the Period and Conditions of Adoption of Arm Reliquaries by the Armenian Church

Actually, there are not many studies on Arm reliquaries in Armenology. But even in those cases, when they are studied, no reference has been made to the possible period of entry of this object into the ritual of the Armenian Church and the conditions contributing to it. Currently, there is a great interest in the phenomenon of "relic" in the world, due to which high-quality multifaceted studies by various scientists are available to help clarify many questions on the subject. Therefore, based on these studies, we will try to clarify the question that interests us, and offer our viewpoint on it.

As Caroline Walker Bynum and Paula Gerson noticed, the use of reliquaries in the form of parts of the human body was developed in the West approximately from the end of the 9th century, but gained more importance only from the 12th–13th centuries[1]. Reliquaries in the form of a head, foot, hand and fingers can be met. The most common were heads and hands – the most expressive and communicative parts of the human body: the role of the eyes for communication, the importance of the mouth for speech, the hand for gesture[2]. According to Cynthia Hahn, in the case of this type of reliquaries, first of all the function is important, and it is not necessary that the object correspond in its form to the part of the saint's body to which the enshrined relic refers[3]. For example, the Dexter makes the blessing gesture during the ritual more impressive[4].

Reliquaries in the shape of body-parts are not widely used in the Armenian Church. Only the Dexter is used during various rituals: for example, the role of the Arm reliquary of St. Gregory the Illuminator on the blessing of the Holy Chrism, on the occasion of the ordination of Catholicos, the most important church festivals, as well as in dire moments for the country, etc. cannot be overestimated.

The Orthodox Christian Church does not use reliquaries in the form of body-parts. In the case of the Byzantine church, perhaps as a unique example can be

[1] **Bynum, Gerson** 1997, 4.
[2] **Bynum, Gerson** 1997, 5.
[3] **Hahn** 1997, 20.
[4] **Hahn** 2010, 166.

considered the Dexter of St. John the Baptist, currently kept in the Topkapi Museum in Istanbul, which is not in its original form, but a late Italian work[5].

According to Ioli Kalavrezou, hand-shaped reliquaries do not correspond to the Byzantine canon and are unusual. Similar reliquaries were avoided probably because, being as a shrine for the holy relic, they were either too similar to a real body part, or were close to a three-dimensional sculpture[6]. The Byzantines preferred to leave the bones exposed as a proof: a silver or gold band was attached to their ends, as well as to the joints, with a note indicating whose relic it was, and then they were placed in a box[7].

The use of three-dimensional sculptures of saints was not welcome in the Armenian church either[8]. In this case, the question arises as to when and how it received arm reliquaries, many examples of which have reached us. The arm reliquary of St. Gregory the Illuminator occupies an important place among them. According to the legend, the relic of the Illuminator was enshrined in a reliquary in the shape of a right hand back in the 5th century[9]. In general, there are many references to the relics of the Illuminator in the sources. However, the right hand, as a separate relic, is mentioned much later than the 5th century, and as one of the main sanctities, only in the 12th century by Catholicos Nerses Shnoraly[10]. The reliquary in the form of an arm is not mentioned in any of the sources of the early period, whereas the reliquary of such important relic could not have gone unnoticed by historians[11]. Therefore, the point of view that already in the 5th century the relics were enshrined in the reliquary in the form of the right hand, raises doubts. Considering the fact that the use of reliquaries in the form of human body-parts was formed in the West, not in the East, from the end of the

---

[5] **Kalavrezou** 1997, 68–69; A. Ballyan also mentions the outline of Saint Marina's palm, see: **Ballian** 2012, 88.

[6] **Kalavrezou** 1997, 68–69.

[7] **Kalavrezou** 1997, 68–69.

[8] **Գիւտ Արք. Աղանեանց** 1902, 48:

[9] **Սահակյան** 2002, 417; **Ղարիբյան Ի.,** Գրիգոր Լուսավորչի աջը https://lusamut.net/%D5%A3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B9%D5%AB-%D5%A1%D5%BB%D5%A8/ 26.01.2023 թ.

[10] Թուղթ ընդհանրական 1865, 2:

[11] A detailed examination of written sources on the Dexter of St. Gregory the Illuminator see: **Kouyoumjian** 2005, 1–18.

9th century and started to be considered more important in the 12th–13th centuries, we tend to think that the reliquary in the shape of the right hand was made later.

It is an established fact that in the 15th century the arm reliquary of the Illuminator already existed. The undeniable proof of this is the Dexter depicted in the scenes of the episcopal ordination (11 b) and the consecration of the Catholicos (50 b) of the 1461 in “Mashtots of Ordination” (M 4997) of Matenadaran after Mesrop Mashtots in Yerevan. Examining the scene, art historian Edda Vardanyan came to the conclusion that the Dexter of Gregory the Illuminator is depicted[12].

As mentioned above, the use of arm reliquaries was characteristic of the Western Church. So, we can assume that this phenomenon entered our church as a result of western influence. Accordingly, it is possible to put forward the point of view that the arm reliquary began to be used in our country around the time when certain movements, tendencies towards the Catholic Church began to be noticed in the Armenian Church. In this sense, the spread of similar reliquaries in the West coincides with the period when pro-Catholic moves began to be observed in Armenian Cilicia already in the late 12th and early 13th centuries[13]. It is also important that in the context of the aforementioned tendencies, changes took place in the Liturgical vestments of the Armenian Church, borrowing many elements from the Latin Church[14]. Therefore, the introduction of arm reliquary was also possible in that period.

Among the arguments supporting our hypothesis in favor of the Cilician period are also the earliest examples of arm reliquaries with a clear dating. Among them, the cross-reliquary with the dexter of John the Baptist kept in the Mother See of Holy Etchmiadzin was made in the city of Adana in Cilicia in the 14th century[15]. The other arm reliquary, the Dexter of St. Nicholas, is the oldest example with a definite date: according to the inscription it was "bind" in 1315, again in Cilicia[16] (Museum of Catholicosate in Antelias, Lebanon).

---

[12] **Vardanyan** 2003–2004, 188.

[13] **Mutafian** 1988, 408–411; **Հովհաննիսյան** 2018, 28–29:

[14] See Տն. Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի 1838, 203–242; See **Սմբատյան** 2015, 499–513:

[15] **Բաբաջանյան** 2013, 99:

[16] **Kouyoumjian** 2015, 179–181. In his last mentioned article, D. Kouyoumjian rejects the widespread “1325” reading of the year written in the inscription on the Dexter of St. Nicholas, and confirms the date 1315. On the stylistic and artistic analysis of the Dexter of St. Nicholas see: **Ballian** 2012, 87–93.

In the composition of the cross-reliquary with the Dexter of John the Baptist, the presentation of the hand in a relief seems to suggest the gradual development of the depiction of the Arm as a three-dimensional sculpture[17], while the Dexter of St. Nicholas already represents the new ritual object completely with its characteristic features.

Another definition is noticeable in the Cilician examples, that is the principle of hiding the relic. Western reliquaries show the relic, and eastern reliquaries hide it (that is, they do not show the relic under the rock crystal typical of the west)[18]. Although the researchers note that Western reliquaries until the Gothic period also hid the relic[19], by the time the Cilician examples were made, Western reliquaries were already "opened". This circumstance also indicates that the type of object was still new in our environment: despite its Western form, it remained connected to local principles, forming it as a synthesis of Western and Eastern traditions. Later, the vast majority of arm reliquaries that have come down to us already display the relic in a visible place of the object, mostly on the forearm, under a piece of rock crystal, completely in accordance with the Western tradition. Despite this, the arm reliquary has completely become an inseparable part of the ritual items of the Armenian Church, fully bearing the features and characteristics of the Armenian art in its artistic decoration.

The given justifications can be considered as a sufficient basis for regarding the penetration of arm reliquaries into the Armenian Church through the Cilician environment. Later, if more arguments are found, this hypothesis can either be fully substantiated or denied. It also follows from the above discussed, that A. Babajanyan's opinion, according to which the initial type of reliquaries in the Armenian Church were the boxes made in the shape of body-parts of the saint, can be challenged[20].

Arm Reliquary of the Armenian Diocese of Romania

Only two arm reliquaries are preserved in the Armenian Diocese of Romania, both of which are local works. One of them was made quite recently, the other is a work of the 19th century (No. 117), which we will consider in the article.

[17] This type, with some change, is found later, see: **Landau, Marteen van Lint** 2013, 248.
[18] **Стерлигова** 2000, 29.
[19] **Hahn** 2012, 24; **Kilgore** 2017, 14.
[20] **Բաբաջանյան** 2013, 97:

Both the Arm reliquaries preserve the relics of John the Baptist[21]. After Saint Gregory the Illuminator enshrined the relics of John the Baptist in the Innakyan (St. Karapet) monastery of Mush, the saint began to be seen as the heavenly protector of the Armenian world[22]. So it is not at all surprising that the relics related to him prevail in the Armenian Church.

Contrary to examples made by the Armenian masters and preserved in the Mother See of Holy Etchmiadzin, as well as in other museums, the arm reliquary of the Holy Archangels Church in Bucharest is not rich in its design (ill. 1, 2). It is not known for certain whether the craftsman who made the arm was an Armenian or not[23]. Perhaps we can only assume judging from the Armenian writing. However, the reliquary could have been made by one craftsman and the inscription written by another. According to the inscription, the object was donated in 1892. It is not mentioned which church it was dedicated to, but *Iprail*, the present-day city of Braila in Romania, is mentioned, where the Armenian Saint Mary Church is still functioning.

The restrained decoration of the Dexter, presented in a blessing gesture typical of the Armenian church, is complemented by overlapping silver plates in the wrist and elbow areas, which are chased with a stylized simplified baroque-shaped floral ornament. The wrist plate depicts a Latin cross on the palm side, as the center of the composition. The donative inscription placed between the plates completely covering the outer surface of the forearm, also plays a designing role. The circular relic cavity, covered with a crystal glass and displaying the relic, is placed on the forearm. In addition to the relic, grains of pearl and green stone, perhaps emerald, can be seen in the cavity. The master worked out the fingers and nails in detail, giving them as realistic a look as possible. Although the use of arm reliquaries is not widespread in the Romanian church[24], as in the Armenian or Western churches, and in this case it is not known who the master is, the quality of the work shows that the latter was well acquainted with the principles of making the arm reliquaries.

[21] There is no indication of the contained relic on the object. The information about it was provided by Bishop Datev Hakobian, head of the Diocese of Armenian Church in Romania.

[22] **Օրմանեան** 2001, 44:

[23] The information about Armenian silversmiths or jewelers in Romania is fragmentary and unclear.

[24] Reliquaries in the form of right and left hands of 1641–1646 are known. See: **Dobjanschi, Cernea, Tănăsoiu** 2008, 182–183.

Chased ribbons, the donative inscription and the cavity of relics, create a rhythm and balance on a smooth, detail-free surface, serving as the main means of expression alternating with each other.

The donative inscription placed horizontally is perhaps a unique demonstration among the Armenian arm reliquaries. Anyway, we don't know any other example yet. In addition to the form of installation, it plays a major role in the composition, which is also not typical for arm reliquaries. In the compositions of the examples known to us, the inscriptions, as a rule, play a secondary role, giving way to either scenes from the life of the saint or luxurious designs. Most likely, the master followed the opinion of the donor in choosing the place of the donative inscription.

In general, the decoration of the object is completely influenced by the local culture and has moved away from the characteristic features of Armenian art. The artistic design of the arm reliquary, with its free, flat surfaces and relatively few ornaments, represents the style that became characteristic of Romanian silversmithing in the 19th century, when the emphasis began to be placed on the form of the object, defeating the ornament[25]. This style followed the post-Brancovian[*] style characterized by luxurious, lush floral motifs, introducing new, fresh artistic preferences, influenced by the Empire style popular in Europe[26].

Conclusion

Summarising, we can record that the arm reliquary preserved in the collections of the Armenian diocese of Romania despite its simple artistic solutions, comes to complete another link in the range of similar reliquaries with various designs of the Armenian Church. Although the master is not known, and

---

[25] **Simion** 1997, 35–36.

[*] In the second half of the 17th century, significant changes were also made in the local Romanian art, as in the art of the the territory of Ottoman Empire, Iran, Russia and Christian East in general. The Brancovan style was a combination of Renaissance and Byzantium, Baroque and Orientalism, echoes of Western rococo and borrowings of iconographic models from the Balkans or from Russia and Ukraine. Lush plant and floral motifs became characteristic of the artistic interpretation of decorative-applied art samples. This manifestation of art and culture entered the history of Romanian art called “Brancovian style”, named after the Wallachian Prince Constantin Brancovianu of the same period, and the subsequent slightly simplified phase – “post-Brancovian”. See: **Văetişi** A. Barancovan Art https://www.academia.edu/20315722/Brancovan_Art_The_last_synthesis_in_Romanian_Art. 7, 33, 140 (seen 21. 03. 2021).

[26] **Simion** 1997, 35.

the influence of the local Romanian art is evident in the artistic solution of the object, the example fully complies with the canon of the Armenian Church. The fact that the arm reliquary appears in these collections, indicates that, despite being in a Christian country where similar objects do not occupy a place in the ritual, the Armenian church has preserved the accepted series of ritual objects typical of itself, without assimilating into the local tradition.

As for the appearance of Arm reliquaries, having found their permanent place in the ritual of the Armenian Church, they are the result of the influence of the Western Church, introduced not earlier than the Cilician period. Before that, as we conclude, other, most likely Byzantine or unknown local traditions of presenting the right hands of saints* were followed.

BIBLIOGRAPHY

Բաբաջանյան Ա. 2013, Հովհաննես Մկրտչի աջով խաչ-մասունքարան, Երևան, ՎԷՄ համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր թիվ 4 (44), էջ 94–106:

Գիւտ Աղանեանց 1902, Կարգ Աստվածապաշտութեան Հայաստանեայց Ս.Եկեղեցւոյ, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 144 էջ:

Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ Սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ. 1865, Ս. Էջմիածին, տպ. Ս. Էջմիածնի, 497 էջ:

Հովհաննիսյան Ա. 2018, Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում, Երևան, Հեղինակային հրատ., 217 էջ:

Ղարիբյան Ի., Գրիգոր Լուսավորչի աջը https://lusamut.net/%D5%A3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B9%D5%AB-%D5%A1%D5%BB%D5%A8/ (seen 26.01.2023)

Սահակյան Ս. 2002, Լուսավորչի աջ // Քրիստոնեա Հայաստան հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխ. խմբ., էջ 417–418.

Սմբատյան Ն. 2015, Հայկական եկեղեցական սաղավարտների և վակասների գեղարվեստական նկարագիրը (Բուխարեստի հայկական եկեղեցու թանգարանի նմուշների օրինակով) //«Անտառ ծննդոց». Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին նվիրված հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 499–513:

Տն. Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք. 1838, Ի Վենետիկ, Ս. Ղազար, 244 էջ:

---

* I wish to express my appreciation and thanks to the leader of Armenian Diocese of Romania Bishop Datev Hakobian and my scientific supervisor Dr. Levon Chookaszian for organizing the study of the Armenian art treasures of Romania and constant support. My deepest thanks to Dr. Seyranush Manukyan, Dr. Lusine Ghushchian, deacon Haik Azarian and, of course, Union of Armenians of Romania for being always by my side during the research and supporting in all matters.

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում: Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած. Հատ. Ա. Անթիլիաս, 830 էջ:

Стерлигова И. 2000, Новозаветные реликвии в древней Руси // Христианские реликвии в московском Кремле. Редактор-составитель А. Лидов, Москва, «Радуница», с. 19–83.

Ballian A. 2012, "The Treasury of the Monastery of Saint Sophia at Sis" in "Armenian Relics of Cilicia. From the Museum of the Catholicosate in Antelias, Lebanon" ed. by A. Ballian, Athens, "Olkos", pp. 87–93.

Bynum C., Gerson P. 1997, Body-Part Reliquaries and Body Parts in the Middle ages // «Gesta», Vol. 36, № 1, Chicago, "The University of Chicago Press", 3–7 pp.

Dobjanschi A., Cernea E., Tănăsoiu C. 2008, National Museum of Art of Romania. Medieval and Early Modern Romanian art, Bucharest, „Adpoint", 194 p.

Hahn C. 1997, The Voices of the Saints: Speaking Reliquaries //Gesta, Vol. 36, no. 1, Chicago, "The University of Chicago Press", 20–31 pp.

Hahn C. 2010, "The Spectacle of the Charismatic Body. Patrons, Artists adn Body-part Reliquaries" in "Treasures of Heaven: Saints, Relics and Devotion in Medieval Europe", ed. By **Bagnoli M., Klein H., Mann G., Robinson J.**, Baltimore MD, "Walters Art Museum", 2010, pp. 163–172.

Hahn C. 2012, Strange Beauty: Issues in the Meaning and Making of Reliquaries, 400 – circa 1204, University Park, „The Pennsylvania State University Press", 302 p.

Kalavrezou I. 1997, Helping Hands for the Empire: Imperial Ceremonies and the Cult of Relics at the Byzantine Court // Byzantine Court Culture from 829 to 1204, ed. by Henry Maguire, Washington D.C., Dumbarton Oaks, pp. 53–79.

Kilgore C. 2017, "Viewing Heaven: Rock Crystal, Reliquaries, and Transparency in Fourteenth-Century Aachen", Theses, Dissertations, and Student Creative Activity, School of Art, Art History and Design, Lincoln, Nebraska, 121 p.

Kouyoumjian D. 2015, The Armenian Catholicosate of Cilicia. History, Treasures, Mission. Ed. by S. Dadoyan, Lebanon-Anthilias, 400 p.

Kouyumjian D. 2005, The Right Hand of St. Gregory and other Armenian Arm Relics // Les objets de la mémoire. Pour une approche comparatiste des reliques et de leur culte, Bern, Berlin, Bruxelles, Frankfurt am Main, New York, Oxford, Wien, "Peter Lang", pp. 1–18.

Landau S., T. Marteen van Lint 2013, "Sacred and Religious Objects" in "A Legacy of Armenian Treasures: Testimony to a People –The Alex and Marie Manoogian Museum" ed. by **Azadian Ed. Y., Merian S., Ardash L.,** Michigan, "The Alex and Marie Manoogian Foundation", pp. 235–289.

Mutafian Cl. 1988, La Cilicie au Carrefour des empires, Tome I, Paris, Société d'édition "Les belles lettres", 475 p.

Simion V. 1997, Masterpieces of the Precious Metalwork Art in Romania (Capodopedere ale Artei metalor Pre̠țioase din România), Bucharest, „Editura Technicâ", 127 p.

Văetişi M. A. Barancovan Art https://www.academia.edu/20315722/Brancovan_ Art_The_ last_synthesis_in_Romanian_Art. (seen 21.03.2021).

Vardanyan E. 2003–2004, Un Maštoc‘ d'ordination et de sacre royal du XVᵉ siècle // «Revue des Études Arméniennes», № 29. Paris, "Sorbonne University", pp. 167–231.

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԱՍԱՆՑ ԱՋ-ՊԱՀԱՐԱՆԸ. ՏԵՂԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Մ.

Ամփոփում

Բանալի բառեր՝ հայկական գաղթօջախներ, Ռումինիայի հայոց թեմ, ծիսական իրեր, մասանց պահարաններ, մասանց աջ-պահարաններ, աջեր, Կիլիկիա:

Հայոց եկեղեցում մարմնի մասերի ձև ունեցող մասանց պահարանները լայն գործածություն չունեն: Միայն աջերն են, որ միշտ կիրառվում են տարբեր ծեսերի ժամանակ: Հայտնի է, որ դրանց գործածությունը ձևավորվել է արևմուտքում, թերևս IX դարի վերջից, բայց առավել կարևորում է ստացել միայն XII–XIII դարերից սկսած:

Քանի որ աջ-պահարանների գործածությունը բնորոշ էր Արևմտյան եկեղեցուն, այս երևույթը ենթադրաբար մեր եկեղեցի է ներթափանցել արևմտյան ազդեցության արդյունքում: Այս առումով, մասանց նմանատիպ պահարանների տարածումն Արևմուտքում վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ կաթոլիկամետ քայլեր սկսեցին դիտվել Հայկական Կիլիկիայում՝ արդեն XII դարի վերջին և XIII դարի սկզբին: Վերոհիշյալ հակվածությունների համատեքստում փոփոխություններ տեղի ունեցան Հայոց եկեղեցու սպասավորների ծիսական հագուստի մեջ՝ փոխառվեցին Լատին եկեղեցու բազմաթիվ տարրեր: Հետևաբար աջ-պահարանի ներմուծումը նույնպես հնարավոր էր այս շրջանում, մանավանդ, որ հստակ թվագրությամբ աջ-պահարանների ամենավաղ պահպանված օրինակները նույնպես պատրաստվել են Կիլիկիայում՝ XIV դարում:

Ռումինիայի հայոց թեմում պահվող՝ XIX դարում պատրաստված աջն ամփոփում է Սուրբ Հովհաննես Կարապետի մասունքը: Ըստ արձանագրության, առարկան նվիրաբերվել է 1892 թվականին: Հայտնի չէ աջը պատրաստող վարպետը, սակայն ակնհայտ է որ վերջինս քաջածանոթ է եղել աջ-պահարանների պատրաստման սկզբունքներին: Առարկայի հարդարանքն ամ-

ամբողջովին կրում է տեղական մշակույթի ազդեցությունը և հեռու է հայ արվեստի ավանդույթներից: Աջ-պահարանի գեղարվեստական ձևավորումն իր ազատ, հարթ մակերեսներով, համեմատաբար քիչ զարդանախշերով ներկայացնում է XIX դարի ռումինական արծաթագործությանը բնորոշ ոճը, երբ շեշտը սկսեց դրվել առարկայի ձևի վրա:

РЕЛИКВАРИЙ-ДЕСНИЦА ИЗ СОБРАНИЯ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ РУМЫНИИ: О ЛОКАЛЬНЫХ ХУДОЖЕСТВЕННЫХ ВЛИЯНИЯХ

ВАРДАНЯН М.

Резюме

Ключевые слова: армянские колонии, армянская епархия Румынии, ритуальные предметы, реликварий с Десницей, реликварии, Десницы, Киликия.

Реликварии в виде частей тела не получили широкого распространения в Армянской церкви. Во время различных ритуалов использовались только Десницы. Известно, что они стали использоваться на западе примерно с конца IX века, но большее распространение получили лишь с XII–XIII веков.

Поскольку это было характерно для западной церкви, предполагается, что наша церковь ввела в обиход данный тип реликвариев в результате западного влияния. Распространение подобных реликвариев на Западе совпадает с периодом, когда в Армянской Киликии уже в конце XII и начале XIII веков стали соблюдаться прокатолические традиции. В контексте указанных тенденций произошли изменения в одежде служителей Армянской церкви, многие элементы были заимствованы из латинской церкви. Поэтому использование Десницы в церковных ритуалах также было возможно в этот период, тем более что сохранившиеся самые ранние образцы Десницы с четкой датировкой также были сделаны в Киликии в XIV веке.

В Деснице XIX века, хранящейся в Армянской епархии Румынии, находятся мощи святого Иоанна Крестителя. Согласно дарственной надписи, Десница была преподнесена в дар в 1892 году. Мастер, изготовивший

Десницу, неизвестен, но очевидно, что он был хорошо знаком с принципами изготовления подобных предметов. Элементы декорировки Десницы нехарактерны для армянского искусства. Художественный замысел Десницы с ее свободными, гладкими поверхностями и сравнительно небольшим количеством орнаментов характерен для румынского серебряного дела XIX века.



No. 117. Arm reliquary, 19th century (before 1892), Romania. Armenian Church of Holy Archangels, Bucharest, Romania. Photo: Armenian Archbishopric of Romania.

No. 117. Arm reliquary, 19th century (before 1892), Romania. Armenian Church of Holy Archangels, Bucharest, Romania. Reverse side. Armenian Archbishopric of Romania.



ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետ
artashesmartirosyan@yandex.ru
DOI: 10.54503/1829-4073-2023.1.168-183

«ԱՆՁԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱՌԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՄԵԿ ՄԻԿՐՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ իմաստաբանական վերլուծություն, բառային դաս, բառաիմաստային խումբ, իմաստային կառուցվածք, աստիճանակարգային փոփոխություններ, միջուկային և ծայրամասային իմաստույթներ, իմաստային տարբերակում:

Ներածություն

Յուրաքանչյուր լեզվի բառային կազմի իմաստաբանական վերլուծության համար ելակետային է համարվում այն խոսքի մասերի տրոհելը: Վերջիններս՝ իրենց քերականական կարգերով ու ձևերով, ըստ էության, բարձրակարգ վերացարկումներ են տվյալ խոսքի մասը ձևավորող բոլոր միավորների բառային նշանակություններից: Բառապաշարի ընդհանուր դասակարգում կատարելիս լեզվաբանությունը տարբերակում է աշխարհի լեզվական պատկերն արտացոլող բառեր նշանակելու տարբեր դասեր, ինչպես՝ բառեր, որոնք *մատնանշում են* (**դերանուններ**), բառեր, որոնք *անվանում են* (**գոյական, ածական, թվական անուններ, մակբայներ, բայեր**), բառեր, որոնք *կապում են* (**շաղկապներ** և **շաղկապական բառեր**), բառեր, որոնք *գնահատում են* (**ձայնարկություններ, վերաբերականներ** (եղանակավորող բառեր), **ազատ**

* *Հոդվածը ներկայացվել է 28.03.23, գրախոսվել է 04.04.23, ընդունվել է տպագրության 28.04.23:*

և կայուն կապակցություններ)։ Նշված դասերը ներկայացնող յուրաքանչյուր բառային միավոր նյութական լեզվական նշան է, որն արտացոլում է ֆիզիկական և հասկացական աշխարհի իրողությունները և հարաբերությունները նրանց միջև։ Յուրաքանչյուր խոսքի մաս ներկայանում է բառերով, որոնք խմբավորված են բազմաճյուղ բառային դասերում՝ գագաթից դեպի հիմք հասկացական աստիճանավորմամբ։ Դասն օժտված է սեփական կառուցակարգով, այն է՝ նրանում ընդգրկված բառաիմաստային ենթաբազմությունների քանակով ու ծավալով և փոխկապակցվածության բնույթով, սեփական՝ ներխոսքիմասային քերականական ձևավորվածությամբ, սեփական բառակազմական, ինչպես նաև դարձվածքների կազմում հանդես գալու հնարավորություններով, իմաստային կառուցվածքի զարգացման ներունակությամբ և այլն[1]։

Քննության առարկան, նպատակը և խնդիրները

«Անառակություն, ցոփաբարոյություն, կնամոլություն, գինեմոլություն» բառաիմաստային խումբը[2] գոյական անուն խոսքի մասի՝ մակրոդասի «Անձերի անվանումներ» բառաիմաստային բազմությունում գործառող «*Ըստ բնավորության գծերի և դրանցով բնորոշվող վարքագծի*» ենթաբազմության 22 բառաիմաստային խմբերից՝ միկրոհամակարգերից մեկն է[3]։ Եվ քանի որ բառաիմաստային խումբը ձևավորվում է՝ ըստ նրանում ընդգրկված բառույթների հասկացական ընդհանրության, ուստի մեզ համար հետաքրքրություն է

---

[1] Հարկ է նշել, որ բառային դասերի (բառաիմաստային դաշտերի) մասին հայ լեզվաբանության մեջ տեսական հիմնարար ուսումնասիրություններ չկան, հետևաբար և՝ հայերենի իմաստաբանական բառարան. այն ունենալու տեսլականը տակավին հեռու է իրականություն դառնալուց (տե՛ս և հմմտ. Պ. Բեդիրյան, Բառերի և արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարան [թեզաուրուս], Ե., 2019, 224 էջ)։ Իմաստաբանական հիմնարար աշխատություն է «Ռուսերենի իմաստաբանական բառարանը»՝ 6 ստվարածավալ հատորներով, որի Առաջաբանում ռուսերենի «….բառային համակարգի կառուցվածքը ներկայացված է հասկացությունների և տերմինների որոշակի ստորակարգությամբ՝ խոսքի մասեր, բառային դասեր, բառային բազմություններ և ենթաբազմություններ, բառաիմաստային շարքեր (հմմտ. Русский семантический словарь. Толковый словарь, систематизированный по классам слов и значений, РАН. Ин-т рус.яз. под общей ред. Н.Ю. Шведовой, М., 2002, т. I, էջ X)։

[2] Մեր քննությունից դուրս են մնացել այս խմբում գործառող **բաքոսի քրմուհի, բորբորիտ, սատիր, սիրատածու** բառույթները՝ հոդվածի ծավալային հնարավորությունների պատճառով։

[3] Հմմտ. **Шведова** 94, 107–108։

ներկայացնում քննել նրանում ընդգրկված բառային միավորների՝ բառույթնե-րի իմաստային կառուցվածքի զարգացումը:

Հայտնի փաստ է, որ լեզվի զարգացման յուրաքանչյուր գոյավիճակում կյանքը՝ հասկացական աշխարհը, թելադրում է *նոր բառեր* ստեղծել նոր իրողությունների համար կամ *հին բառերով* արտահայտել նոր իմաստներ: Վերջին իրողությունը, ի դեպ, լեզվի զարգացման որոշակի ժամանակաշրջաններում ավելի հաճախադեպ է, ուստի բառի ներքին՝ իմաստային կառուցվածքի տեղաշարժերը կքննենք տարաժամանակյա կտրվածքում՝ վերհանելով այն սոցիալ-պատմական նախադրյալները, որոնք տվյալ բառույթի իմաստային կառուցվածքում հարուցել են աստիճանակարգային փոփոխություններ՝ տեղաշարժեր միջուկային և ծայրամասային իմաստույթների միջև: Այս համատեքստում մենք քննության առարկա ենք դարձնելու վերոնշյալ բառաիմաստային ենթաբազմության բառույթների իմաստային կառուցվածքների զարգացման բառարանագրական մշակումները ժամանակագրական կարգով՝ հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը, ի հայտ ենք բերելու բառույթների՝ պատմական այդ հսկա ժամանակահատվածում կրած իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմները, նաև **այլ** բառաիմաստային խմբերի հետ հարաբերվելը:

Քննության վարկածը

Լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում փոփոխվում է ոչ թե բառաիմաստային դաշտ-համակարգը, այլ նրա ներսում առկա որոշ հատվածներ և հարաբերությունները նրանց միջև, որովհետև բառային դասի՝ դաշտի (բառաիմաստային բազմության, ենթաբազմության, խմբի) ցանկացած անդամ բազում իմաստային թելերով՝ հարաբերություններով կապված է ողջ համակարգում գործառող մյուս անդամների հետ: Արդյունքում վերջինիս ամեն մի փոփոխություն հանգեցնում է լեզվի բառային կազմի որակական տեղաշարժի:

Այսպես.

ԱՆԱՌԱԿ

- Հին հայերենում ածականի արժեքով իրացրել է «անամոթ, անպատկառ, վատնող, զեխ և շռայլ» միջուկային (հմմտ. «ա. Անամօթ, անպատկառ,

անարգել, վատնիչ ընչից, զեղխ և շռայլ») և «անօրեն, անկարգ, խառնակ» ծայրամասային իմաստույթները[4]:

- Հետագայում միջուկային «անամոթ» ընդհանրական իմաստույթը վերառրակվել է՝ առնչվելով անձի բարոյական արժեհամակարգին ու նկարագրին, իսկ «անօրեն, խառնակ» իմաստույթները հնացել են՝ չեզոքացվել (հմմտ. «ա. 1. Անբարոյական, շուայտ, զեղխ: *Անառակ կին*, անբարոյական կին, բոզ: 2. Անկարգ, վատ, անբարոյական: *Անառակ կեանք վարել*: 3. Խառնակ, անօրէն: Անառակ-որդի, Չար, անհանդարտ (երեխաներին տրվող մակդիր)»[5]:

- Նոր շրջանի[6] վկայություններում հինհայերենյան միջուկային իմաստույթի հոմանիշային ծայրանդամները մի դեպքում մղվել են առաջ, իսկ ծայրամասայինները ստացել են փոխաբերական կիրառություն (հմմտ. «ա. 1. Զեխ, ցոփ, շվայտ, անբարոյական: 2. փխբ. Անկարգ, անամոթ, չար (անձ): դրձվ. **Անառակ որդի** – ծնողներին չհնազանդվող, հայրենական տունը լքող զավակ»)[7], մյուս դեպքում բառույթը դրսևորել է խոսքիմասային տարարժեքություն՝ պահպանելով նախորդ վկայությունների[8] միջուկային իմաստույթները, հավելելով նոր ծայրամասային իմաստույթ՝ *հնացած* նշումով (հմմտ. «ա., գ. 1. Անբարոյական: 2. Շվայտ, զեխ: 3. Մոլությունների անձնատուր եղած, խառնագնաց»[9]:

- Պատմականորեն բառույթի հոմանիշային շարքում, որպես կանոն, ևս ընթացել են «զարգացումներ»՝ *իմաստային փարբերակումներ*՝ ուղեկցված շարքի անդամների աստիճանակարգային փոփոխություններով (հմմտ. **հին հայերեն**՝ «ա. 1. Անամօթ, անպատկառ: 2. Զեղխ, շուայտ: 3. Անկարգ, խառնակ»[10], **արևելահայ աշխարհաբար**՝ հմմտ. «տե՛ս 1. Անբարոյական, Պոռնիկ: 2. Շվայտ (1)»[11]: Ըստ այդմ, բառույթը պահպանել է իր հասկացական դաշտի

---

[4] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 110:

[5] **Մալխասեանց** 1944, 90:

[6] Նկատի ունենք XX դարի վերջին քառորդը, որից հետո արդի հայերենը ցայսօր չունի ակադեմիական լիակատար բացատրական բառարան, որով կարելի լինի դիտարկել բառիմաստի զարգացման ընթացքը:

[7] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 75:

[8] Հմմտ. **Մալխասեանց** 1944, 90:

[9] **Աղայան** 1976, 46:

[10] **Ղազարեան** 2006, 29: Միջինհայերենյան վկայություններ չկան, քանի որ միջին հայերենի միակ բառարանում վկայված չեն այն բառային միավորները, որոնք գործառել են գրաբարի բառային կազմում (տե՛ս և հմմտ. **Ղազարյան, Ավետիսյան** 2009):

[11] **Սուքիասյան** 2009, 35:

բացասական երանգավորումը. *անամօթն* ու *անպարկառը* դուրս են մղվել շարքից, իսկ *խառնակ* ծայրանդամի «պիղծ, անմաքուր» իմաստույթը[12] նոր շրջանի արժեհամակարգում ճշգրտվել է և շարքում առաջ մղվել՝ մի դեպքում համարժեք *անբարոյականին, պոռնիկին*, մյուս դեպքում՝ *ցոփին, զեխին* ու *շվայտին*՝ վերջինիս բացասական երանգավորմամբ, որն ի դեպ ժողովրդախոսակցականում *ուտող-խմողն* է՝ «կերուխումի անձնատուր եղածը»:

- Արևմտահայերենի XX դարի առաջին կեսի բառարանագրական վկայություններում հինհայերենյան «անկարգ» ծայրամասային իմաստույթը վերածվել է միջուկայինի՝ նոր, հեգնական երանգավորմամբ ծայրամասային իմաստույթների հավելմամբ (հմմտ. «ա. անկարգ, ստահակ. զեղխ, ցոփ, շռայտ. **բարիպտուղ, բարիծաղիկ**»[13], որոնք վկայվել են նաև դարձվածքի արժեքով (հմմտ. «Բարի պտուղ (հեգն.) Չար, անարժան, անպէտք»[14], ավելի ուշ շրջանում կայունացել են ածականի արժեքով «շփացած, չար, չարաճճի» միջուկային իմաստույթները[15]:

ԳԻՆԵՄՈԼ

- Հին հայերենում իրացրել է ածական-գոյականի արժեքով «հարբեցող» միջուկային (հմմտ. «ա. Մոլեալ ի գինի. և գինւով արբեցօղ. արբեալ [*Բազմութիւն արանց գինեմոլաց*][16]» և «գինեսէր» ծայրամասային իմաստույթները (հմմտ. «ա. գինիի մոլի՝ խենդ, գինեսէր, հարբեցող»)[17]: Այս շրջանում «հարբեցող» ընդհանրական իմաստույթն իրացվել է նաև **արբշիռ** ածական-գոյականի տարարժեք ձևում՝ մի շարք ծայրամասային իմաստույթներով (հմմտ. «Արբեցօղ. արբեալ. մոլեալ զհետ ուտելեաց և ըմպելեաց. հանգանակող. և անառակ. շռայլ, զեղխ»)[18]:

---

[12] Հմմտ. **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 926:

[13] **Գայայեան** 1938, 16:

[14] **Մալխասեանց** 1944, 344, հմմտ. նաև՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 296, **Աղայան** 1976, 176:

[15] Հմմտ. **Սարգսյան** 1991, 18, **Սաքապետոյեան** 2011, 23:

[16] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 553, նաև՝ **Ջախջախեան** 1837, 359:

[17] **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 215:

[18] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 342, տե՛ս և հմմտ. նաև՝ **Ջախջախեան** 1837, 226, **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 131: Հայկազյանում վկայված սույն բառահոդվածի գրաբարյան *անառակ* իմաստույթը հետագա վկայություններում չեզոքացվել է, *հանգանակող*-ը փոխարինվել *զեխ* ու *շվայտ* հոմանիշներով: Աշխարհաբարի խորհրդային շրջանի վերջին վկայություններում նշված իմաստույթները պահպանվել են (հմմտ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 210, **Աղայան** 1976,

- Միջինհայերենյան շրջանում «հարբեցող» իմաստույթն իրացվել է **գինէճան** ձևով[19]:
- Աշխարհաբարի նախախորհրդային շրջանի արևմտահայ վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքում պահպանվում է «ոգելից խմիչքի նկատմամբ մոլություն ունենալու» հինհայերենյան միջուկային գերիմաստույթը[20], վկայվում է նաև «խման» միջուկային իմաստույթով[21]:
- Բառույթի հոմանիշային շարքում հինհայերենյան *գինեսէր* հոմանիշին հետագայում հավելվում են բառապաշարի տարբեր շերտերին պատկանող բառույթներ, ինչպես՝ «*գինախում, գինեպաշտ, գինարբու, գինեճան, հարբեցող, արբշիռ* (բնստ.), (ժող.)՝ *խմող, գինագիժ*, (հզվդ.)՝ *մոլարբու, բաժակարբու, գինու փոպրակ, գինիի սպունգ* (արևմտհ.), *ալկոհոլամոլ, Բաքոսի երկրպագու*»[22]: Տակավին հինհայերենյան շրջանից ձևավորվել է նաև հականիշ *գինատեաց* եզրը, որը վկայաբերվում է նաև խորհրդային շրջանի վերջին բառարանում[23]:

ԿՆԱՄՈԼ (-Ի)

- Հին հայերենում ածականի արժեքով իրացրել է «մոլի իգասերի» միջուկային իմաստույթ (հմմտ. «ա[ծ]. Մոլեալն ՚ ի սէր կանանց. իգասէր»)[24]:
- Միջինհայերենյան շրջանում իրացվել է **կնասիրություն** բաղադրությունը (հմմտ. «ն. Կնասեր լինելը, կնամոլություն: *Չի նախ եգիփ սափանայ իւր զէն զորկրամոլութիւն, ապա զկնասիրութիւն, ապա զսպանութիւն* (ՎՊՏ, 12)»[25]: **Կնասէր-ի** միջուկային բացասական երանգավորումը հետագայում փոխարինվել է դրականի (հմմտ. «ած. 1. Իւր կնոջը սիրող, ամուսնասէր: *Կնասէր*

---

126): Հարկ է նշել, որ «հարբեցող» միջուկային իմաստույթն այսօր չեզոքացել է, իսկ փոխաբերականը՝ կայունացել, վերածվել միջուկայինի:

[19] Հմմտ. **Ղազարյան, Ավետիսյան** 2009, 141:

[20] Հմմտ. **Գաբամաճեան** 1910, 193, **Ճիզմեճեան** 1954, 59, **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1992, 392:

[21] Հմմտ. **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1968, 91:

[22] Հմմտ. **Սուքիասյան** 2009, 143, 196: Հավելենք, որ Մալխասյանցի մոտ վկայաբերված է գինեմոլության մղող **գինեդև** բարբառային ձևը («գ. Ըստ սնահաւատութեան՝ դև, որ մարդուն դարձնում է գինեմոլ, դրդում է դէպի հարբեցութիւն [*Նա գինեդև ուներ*]», հմմտ. **Մալխասեանց** 1944, 436):

[23] Հմմտ. **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 214, տե՛ս և հմմտ. նաև **Մալխասեանց** 1944, 436, **Աղայան** 1976, 237:

[24] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 1104:

[25] **Ղազարյան, Ավետիսյան** 2009, 377/**ՎՊՏ**՝ Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:

ամուսին», հմմտ. նաև՝ «ած. Իր կնոջը սիրող: 2. Կանանց հետևից ընկնող, կնամոլ, ցանկասեր»)[26]:

- Նոր շրջանի վկայություններում **կնամոլ**-ը հանդես է գալիս որպես գոյական՝ մեկ միջուկային իմաստով, բացասական երանգավորմամբ (հմմտ. «գ. Կանանց հետևից ընկնող, առանց լուրջ մտադրության՝ միայն մարմնական հաճույքի համար կանանց հետ կապվող, ցանկասեր, իգամոլ»), վկայվում է նաև **կնամոլական** ածականական ձևը[27]:
- Բառույթի հոմանիշային շարքի աստիճանավորումը հինհայերենյան շրջանից (հմմտ. «ա. Իգամոլ (ի), իգասէր, կնասէր»)[28] գրեթե չի փոխվել. հավելվել են գոյական-ածականի արժեքով բառապաշարի տարբեր ոճական շերտերին պատկանող բառույթներ (հմմտ. «Իգամոլ, ցանկամոլ, կնասեր, կնապաշտ, իգասեր, ցանկասեր, կնորս, կինորս, բոզարած (ժող.), (գրք.) դոն ժուան, լովելաս[29], (հզվդ.) կնամոլի, կնախնդիր, կնաշրջիկ, իգամոլի, իգախազ, շոռաչք (գվռ.)....»)[30]:

ՀԱՅՐԱՏ

- Հին հայերենում վկայվել է ածականի արժեքով «անառակ» միջուկային իմաստով, նաև՝ **այրատ, արատ** ձևով՝ ծավալուն ծայրամասային իմաստույթներով (հմմտ. «**ՅԱՅՐԱՏ** կամ **ՅԱՐԱՏ,** Անառակ, համարձակ, լիրբ, անամօթ, անպատկառ, պագշոտ, խենէշ, անժուժկալ, անկարգ (անձն կամ աչք և այլն), [*Զհայր և զայր յամօթ առնէ յայրատն (կին)*]»), նաև՝ մակբայի արժեքով (հմմտ. «Անառակաբար, լրբաբար, անպատկառաբար, պագշոտութ[ամբ [*Որ ոչ հայիցի յայրատս (յն. Յայրատ աչօք) ի կին ընկերին, յայտ է թէ ոչ պոռնկի*]»)[31]:
- XX դարի արևմտահայ վկայություններում բառույթը վկայվել է մակբայ-ածականի տարարժեքությամբ, հինհայերենյան միջուկային ածականական իմաստի (հմմտ. «անառակ») փոփոխմամբ՝ հատկանիշի «մեղմացմամբ»

[26] **Մալխասեանց** 1944, 741, նաև՝ **Աղայան** 1976, 742:

[27] **Աղայան** 1976, 741:

[28] **Ղազարեան** 2006, 386:

[29] Ռուսերենից փոխառյալ ձևերի հոմանիշային այս շարքին հարկ է հավելել **սելադոն** հնացած ձևը, որը հեգնաբար «կպչուն, որպես կանոն, ծեր սիրատածուն, կանանց հետևից քարշ եկողն» է, որն ի դեպ վկայվել է միայն թարգմանական բառարաններում (հմմտ. **Ղարիբյան** 1977, 1086):

[30] **Սուքիասյան** 2009, 531:

[31] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 322:

(հմմտ. «մ. անամօթ նայուածքով, պագշոտ, անառակ, լիրբ, անկարգ»)[32], ավելի ուշ վկայություններում բառույթը վկայվել է *հնացած* նշումով[33]:

ՀԱՐՃ

- Հին հայերենում իրացրել է գոյականի արժեքով «երկրորդական կին» իմաստույթը՝ վրացերենի *խարճա* ձևի համաբանությամբ (հմմտ. «գ. Երկրորդական կին՝ առ եբրայեցիս, կամ՝ առ հեթանոսս [*Բազումք ի նոցանէ ի հարճից էին ծնեալ*]»)[34]:
- Հետագա վկայություններում բառույթի գերիմաստույթը չի փոփոխվել. կախված պատմական տարբեր շրջափուլերում հանրային կյանքում գերիշխող գաղափարաբանությունից՝ միջուկային իմաստույթը վերաձևակերպվել է, հավելվել են նոր ծայրամասային իմաստույթներ (հմմտ. «գ. երկրորդական կին, աղախին (կանանոցի)», հմմտ. նաև՝ «գ. Օրինաւոր կնոջ հետ միաժամանակ պահվող երկրորդական կին, որից ծնված զաւակը զուրկ էր օրինական զաւակի իրաւունքներից», «գ. 1. (պատմ.) Օրինական կնոջ հետ պահվող կինսիրուհի: 2. Տարփուհի, սիրուհի»)[35]:
- Արևմտահայ վկայություններում բառույթը պահպանել է իր հինհայերենյան միջուկային իմաստույթը՝ երբեմն ծայրամասայինների տարբեր ձևակերպումներով (հմմտ. «3. վիճակ կնոջ մարդու քով ապրող առանց ամուսնության»)[36]:
- Բառույթի հոմանիշային բառաշարքը վերստին փաստում է բառույթի հինհայերենյան իմաստային կառուցվածքի «կայունությունը» (հմմտ. «գ. 1. Սիրուհի, սիրեկան (խոսցկ.), տարփուհի, տարփածու, հոմանի, հոմանուհի, ցնծուհի, սիրող, (հնց.) սեղեխ, տլոն, (բրբ.) խասա, խասաքի: 2. Տե՛ս Աղախին»)[37]:

[32] **Գաբամաճեան** 1910, 967, **Ճիզմեճեան** 1954, 1061:

[33] Հմմտ. **Մալխասեանց** 1944, 388, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 286, **Աղայան** 1976, 813:

[34] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 65–66, նաև՝ **Ջախջախեան** 1837, 857, **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 482:

[35] **Գայայեան** 1938, 280, նաև՝ **Մալխասեանց** 1944, 71, **Աղայան** 1976, 846:

[36] **Ճիզմեճեան** 1954, 820, նաև՝ **Գաբամաճեան** 1910, 795, **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1968, 425, **Սաքապետոյեան** 2011, 181:

[37] **Սուքիասյան** 1967, 379: Շուրջ կես դար հետո հոմանիշների լիակատար բառարանի երկրորդ հրատարակության մեջ ճշգրտվել է շարքի անդամների՝ այս կամ այն ոճական շերտին պատկանելը (հմմտ. «գ. 1. (բնստ.) Սիրուհի, տարփուհի, տարփածու, հոմանի, հոմանուհի, ցնծուհի, սիրեկան (ժող.), (հնց.) սեղեխ, տլոն, խասա, բոզ (ժող.) (ոչ օրինական կին): 2. Տե՛ս «Աղախին» (հմմտ. **Սուքիասյան** 2009, 612): Այս շարքում կարող է ընդգրկվել նաև **հետերա** փոխառյալ ձևը [< гетера < հուն. heteria, բառացի՝ ընկերուհի, սիրուհի]

ՊՈՌՆԻԿ[38]

- Հինհայերենյան շրջանից դրսևորել է ածական-գոյականի տարարժեքություն՝ «անբարոյական» ընդհանրական իմաստույթով, առնչվելով օրինական ամուսնություն չունեցող թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, իսկ ծայրամասային իմաստույթով՝ նաև ամուսնացյալ կանանց (հմմտ. «ա. գ. Որ խառնակի ընդ այլում, ընդ որում չէ ամուսնացեալ օրինօք՝ եթէ այր իցէ և եթէ կին. Եւ մանաւանդ՝ որպէս Բոզ, կամ՝ որպէս կին արամբի շնացեալ»)[39]:
- Միջինհայերենյան շրջանում *պոռնիկ* սերող հիմքով իրացվել է **պոռնկահայեաց** բաղադրությունը՝ ածականի արժեքով (հմմտ. «ա. Պոռնիկի պես նայող, անառակի նայվածք ունեցող: [*Եւ վայրավափնեալ պոռնկահայեաց աչօքն կաթեցուցանէր արփօսր*] (ԳՏ, 353)»)[40]:
- Հետագա վկայություններում պահպանելով խոսքիմասային տարարժեքությունը՝ մեկնվել է որպես գավառաբանություն՝ «անբարոյական» ընդհանրական իմաստույթում չեզոքացնելով տղամարդուն առնչվելը. վերջինս պահպանվել է միայն բարբառներում (հմմտ. «ած. գ. Ինքն իրան վաճառող կին, բոզ: 2. Ամուսնացած կին, որ շնանում է ուրիշ տղամարդու հետ: 3. մոծ. Անառակ տղամարդ, շնացող: 4. գվռբ. Տղամարդ, որ երեք անգամ ամուսնանում է կույս աղջիկների հետ»)[41]: Իրացվել է նաև կայուն կապակցություններում, ինչպես՝ *պոռնիկ գրիչ*՝ «Վաճառված գրիչ, մարդ, որ փողի կ[ա]մ շահի համար պատրաստ է ամեն ինչ գրել, ստել, զրպարտել, շողոքորթել ևն», *քա-*

(հմմտ. «գ. 1. Հին Հունաստանում՝ ազատ կյանք վարող կրթված ամուրի կին: 2. փխբ. Թեթևաբարո կին, տարփուհի» (հմմտ. **Աղայան** 1976, 864), հմմտ. նաև՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 344, «տե՛ս Տարփուհի, Պոռնկուհի» (հմմտ. **Սուքիասյան** 2009, 627), **Հայրապետյան** 2011, 325): Ի դեպ, փոխաբերական կիրառությունը օտար բառարաններում վկայվում է որպես հնացած (հմմտ. **Кузнецов С.А.,** Большой толковый словарь русского языка, «Норинт», С.-Петербург, 1998):

[38] Ըստ Հր. Աճառյանի՝ փոխառություն է հունարենից՝ «պաշարի խառնակվող այր կամ կին» իմաստով, որոնց համար հունարենն ունեցել է տարբերակված բառակազմական դրսևորումներ: Իգական բառաձևում «արտահանելով վաճառել» հիմքակազմիչ բայն է. «....նախնաբար պոռնիկները գերուհի էին լինում, այն է վաճառքի առարկայ....Հայերէնի -իկ վերջաւորութիւնը ցոյց է տալիս թէ բառը նախ անցել է Պարթևներին և այնտեղից էլ հասել մեզ» (տե՛ս **Աճառեան** 1971, 99, հմմտ. նաև՝ **Ջահուկյան** 2010, 642):

[39] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 659:

[40] **Ղազարյան, Ավետիսյան** 2009, 659/**ԳՏ**՝ Գիրգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972:

[41] **Մալխասեանց** 1944, 115: Ըստ Հր. Աճառյանի՝ այս իմաստով գործածական է եղել Բաբերդի բարբառում (տե՛ս **Աճառեան** 1913, 922):

ղաքական պոռնիկ՝ «Նա, որ քաղաքական հարցերում սկզբունք չունի և միջոցների մէջ խտրություն չի դնում»[42]:

- Նոր շրջանի վկայություններում խոսքիմաստային տարարժեքության մեջ առաջնային է դառնում գոյականականը, երբ բառույթի ընդհանրական միջուկային իմաստույթը ներկայանում է արդեն հանրության անդամի շեշտադրմամբ, ծայրամասային իմաստույթներում չեզոքանում է ամուսնացած լինելու հանգամանքը՝ հասցեագրված առավելապես կանանց, կայունանում է «ծախու» իմաստույթի փոխաբերական կիրառությունը (հմմտ. «գ. ած. 1. Հասարակաց կին: 2. Առհասարակ՝ շնություն անող մարդ (առավել. կին), շնացող: 3. փխբ. Ծախու՝ ծայրահեղորեն անսկզբունք մարդ»)[43]: Վերջին՝ անկախության շրջանում խոսակցական բառաշերտում կայունացել է նաև ռուսերենից պատճենյալ *գիշերային թիթեռնիկ* (հմմտ. ночная бабочка) կապակցությունը, որն առնչվում է առավելապես գիշերային ժամերին դրսում պոռնկությամբ զբաղվող կանանց:
- Բառույթի հոմանիշային շարքի տարաժամանակյա վերլուծությունը ի հայտ բերեց մի ուշագրավ փաստ. հինհայերենյան շրջանից սկսած՝ բառույթի *իմաստային տարբերակումները* հոմանիշային շարքում 1 անդամից[44] ծավալվել-հասել են 72-ի[45]: Ի դեպ, այդ տարբերակներից գրեթե մեկ տասնյակը վկայված եղել են Հայկազյանում (հմմտ. անառակ, լիրբ, անզգամ և այլն), սակայն իմաստույթների այլ աստիճանավորմամբ: Այս ստվար հոմանիշային շարքում անդամների մի զգալի մասը *հնացած* են (հմմտ. *խենեշ, հայրապ, ճակաճան, խառնակ* և այլն), *ժողովրդախոսակցական* ձևեր (հմմտ. *ծախված, ծախու*), գավառաբանություններ (հմմտ. *հրապարակ, փոսփալ, ջլթիկ, թեթև վարքի տեր, ի նոցանե, առու թռչող*/ած, *դուրս ընկած*[46], *աչքը դուրս, ծամը կտրած, փեշից կորած*):

ՎԱՐՁԱԿ

- Հինհայերենյան շրջանում հանդես է եկել «երգող, պարող կին և կատակերգակ տղամարդ» գոյականի միջուկային (հմմտ. «գ. Կին երգեցիկ՝ երա-

---

[42] **Մալխասեանց** 1944, 115:

[43] **Աղայան** 1976, 1225:

[44] Հմմտ. **Ղազարեան** 2006, 593:

[45] Հմմտ. **Սուքիասյան** 2009, 944:

[46] Հմմտ. նաև **հանեալ՝** «ած. դուրս ըրած (կնիկ)» (**Աւգերեան, Ճէլալեան** 1865, 474), նաև՝ **հանեալ կին** *հնացած* կայուն կապակցությամբ՝ «արձակված կին» իմաստույթով, «գործից՝ պաշտոնից հանված»-ի համաբանությամբ (հմմտ. **Մալխասեանց** 1944, 49):

ժիշտ. և կաքաւիչ ի խնջոյս և ի թատրոնս (իբր վարձեալ, կամ վարժեալ, վարուք արձակ.) և կատակերգակ (այր). [*Կամ թէ լսիցեմ փակաւին զձայն գուսանաց և վարձակաց*]») և «պոռնիկ» ծայրամասային իմաստույթներով (հմմտ. «Վարձակ ոք (յն. պոռնիկ կամ բոզ) ի բաց հանիցէ յանձնէ զոսկին: Գուսան և հացակատակ. վարձակ. բոզ՝ և երգեցիկ. (յն. մի բառ ևեթ, միմոս՝ որ է հասարակօրէն արական)....»)[47]: Ուշագրավ է, որ Հայկազյանից երեք տասնամյակ հետո տպագրված Առձեռն-ում բառույթը կորցրել է իր բացասական երանգավորումը՝ իրացնելով «երգող-պարող կին» միջուկային իմաստույթը (հմմտ. «գ. երգող՝ խաղցող կնիկ (վարձած, կամ վարժած)»[48], չեզոքացել են բառույթի «կատակերգակ այր», «գուսան և հացակատակ», «պոռնիկ և բոզ» ծայրամասային իմաստույթները:

- Հետագա՝ խորհրդային շրջանի արևմտահայ վկայություններում բառույթը պահպանել է Առձեռն-ում վկայված իր դրական երանգավորումը (հմմտ. «գ. վարձուած երգչուհի, գուսան. պարուհի»[49]՝ միջուկայինի պահպանմամբ (հմմտ. *վարձուած երգչուհի*), ծայրամասայինների դրական (հմմտ. «գ. 1. վարձուած երգչուհի, 2. պարուհի, 3. վարձող»)[50] կամ բացասական երանգավորմամբ (հմմտ. «գ. 1. վարձուած երգչուհի, 2. պարուհի, 3. պոռնիկ»)[51], նաև՝ միջուկայինի փոփոխությամբ (հմմտ. «գ. 1. հարճ, սիրուհի, 2. վարձուած երգչուհի՝ գուսան՝ պարուհի. 3. պոռնիկ»)[52]:
- Խորհրդային շրջանի արևելահայ ավելի վաղ վկայություններում հինհայերենյան ծայրամասային իմաստույթներին հավելվել է «անբարոյականության» ընդհանրական իմաստույթ (հմմտ. «2. Թեթև վարքի տէր՝ անպարկեշտ կին»)[53], ավելի ուշ՝ *հնացած* նշումով[54], իսկ վերջին վկայությունում նախորդ միջուկային իմաստույթը (հմմտ. «խնջույքներում երգող-պարող կին»)

---

[47] **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 795–796:

[48] **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 753, տե՛ս և հմմտ. նաև՝ **Գաբամաճեան** 1910, 1243, **Ջահուկյան** 2010, 707: Ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է պահլավերենի varzak > պարսկերենի barza ձևից (հմմտ. **Աճառեան** 1926, 322):

[49] **Գայայեան** 1938, 470:

[50] **Ճիզմեճեան** 1954, 1319:

[51] **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1968, 799:

[52] **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1992, 883:

[53] **Մալխասեանց** 1944, 313:

[54] Հմմտ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 380:

հավելվել է ծայրամասայիններին, և իմաստային կառուցվածքում հայտնվել է նոր միջուկային իմաստույթ (հմմտ. «գ. 1. Հարճ»)՝ *պատմաբառ* նշումով[55]:

- Բառույթի հոմանիշային շարքը հինհայերենյան շրջանից ևս ենթարկվել է իմաստային-աստիճանակարգային տարբերակումների (հմմտ. **գրաբար**՝ «գ. 1. Վարձական: 2. Վարձկան, պոռնիկ, բոզ: 3. Միմոս, խեղկատակ»[56], **աշխարհաբար**՝ «գ. 1. Պարուհի (հնց.) վարձական, վարձկան (զվարճավայրերում ևն պարող կին): 2. Տե՛ս Հարճ: 3. Տե՛ս Պոռնիկ»)[57]. չեզոքացվել է բառույթի սեռային պատկանելությունը, հնացած է դիտվել շարքի *վարձական* («գուսան, կատակերգու, միմոս») իմաստույթը՝ «վարձու» գերիմաստույթով իմաստային-կիրառական եզր ձևավորելով *հարճ* և *պոռնիկ* բառույթների հետ:

Եզրակացություններ

Այսպիսով, *«Անառակություն, ցոփաբարոյություն, կնամոլություն, գինեմոլություն»* բառաիմաստային խմբի բառույթների իմաստային-տարաժամանակյա վերլուծությունն ի հայտ բերեց զարգացման հետևյալ միտումներն ու ուղղությունները.

1. Քննվող բառույթների իմաստային կառուցվածքի զարգացման «ակտիվությունը» մեծապես կանխորոշված է եղել պատմական որոշակի ժամանակաշրջանում հանրության շրջանում գործառող բարոյականության արժեհամակարգի ընկալմամբ: Բառաիմաստային խմբի բառույթների քանակական կազմը հինհայերենյան շրջանից հիմնականում պահպանվել է՝ պատմական տարբեր փուլերում «կուտակելով» նոր բառաիմաստային տարբերակներ, որակական փոփոխություններ: Չնայած իմաստային կառուցվածքի աստիճանակարգային փոփոխություններին՝ հինհայերենյան շրջանից բառույթները պահպանել են *ցոփաբարոյություն* գերիմաստույթը (архисема):

2. Բառաիմաստային խմբի գրեթե բոլոր բառույթների իմաստային կառուցվածքը կրել է էական փոփոխություններ հինհայերենյան շրջանից՝ բառի նույնականության տեսակետից. փոխվել է բառի *նշանակողական-իմաստատարբերակիչ բաղադրիչը* մի դեպքում *շեղման* (девиация) միջոցով, երբ գերիմաստույթը պահպանվում է, իսկ միջուկային և ծայրամասային իմաստույթները՝ ձևափոխվում (հմմտ. *անառակ, կնամոլ, հարճ, վարձակ, պոռնիկ*), մյուս

[55] **Աղայան** 1976, 1367:
[56] **Ղազարեան** 2006, 632:
[57] **Սուքիասյան** 2009, 1051:

դեպքում *փոխաբերության* (հաճախ՝ փոխանվանական) տիպով, երբ գերիմաստույթի պահպանմամբ պատմական զարգացման ընթացքում նախնական փոխաբերական նշանակությունն ամրապնդվում է որպես հիմնական (հմմտ. *անառակ, պոռնիկ*):

3. Դիտվել է բառույթների հոմանիշային շարքի ընդլայնում (հմմտ. *պոռնիկ, կնամոլ*), հականիշ եզրերի առաջացում (հմմտ. գինեմոլ-*գինապեաց*, կնամոլ-*կնասեր-կնամեծար*), ինչպես նաև բառաիմաստային տարբերակների աճ՝ ոճական նշույթավորվածությամբ կայուն կապակցություններում (հմմտ. *պոռնիկ գրիչ, քաղաքական պոռնիկ, Բաքսուի երկրպագու*):

4. Դիտվել է փոխառյալ բառերի ներխուժում ենթաբազմության տիրույթ (հմմտ. *դոն ժուան, լովելաս, սելադոն, հեպերա*):

5. Քննվող ենթաբազմության կազմում կան բառույթներ, որոնց իմաստային կառուցվածքը հինհայերենյան շրջանից ցայսօր մնացել է անփոփոխ (հմմտ. *գինեմոլ, կնամոլ*): Որպես կանոն, նման բառույթների բոլոր իմաստույթները լինում են միջուկային, ծայրամասային և պոտենցիալ իմաստույթներ չկան: Վերջին իրողությունը պայմանավորված է մարդու ճանաչողական գործունեությամբ, երբ պատմական որոշակի փուլում լեզվակիրների մտածական տիրույթում արդիականությունը կորցնում են որոշ մասնավոր երևույթներ և հասկացություններ՝ վերածվելով հնաբանությունների և պատմաբառերի (հմմտ. *հայրապ, վարձակ, հարճ*):

6. Հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներում որոշ բառույթների իմաստային կառուցվածքում նկատվել են *ապաիմաստավորման* զգալի տեղաշարժեր. նրանց միջուկային և ծայրամասային իմաստույթները տվել են իրենց աճանցյալները «Անձերի անվանումներ» բառաիմաստային դաշտի **այլ** բառաիմաստային ենթաբազմություններում և խմբերում՝ նաև փոխաբերական իմաստի կայունացմամբ գործառելով բառապաշարի տարբեր շերտերում և ոճերում, ինչպես՝ «*Ըստ սոցիալական ապահովվածության, ըստ գոյապահման միջոցների ձեռք բերման եղանակի*» (հմմտ. *ՊՈՌՆԻԿ* ≈ **գիշերային թիթեռնիկ** (խսցկ.), **հացկատակ** (հնց.), **թոշակառու** ևն), «Ըստ սպասարկման ոլորտում ոչ որակյալ ֆիզիկական աշխատանք կատարելու» (հմմտ. *ՀԱՐՃ* ≈ **աղախին, լակեյ, ծառա, սպասավոր, աշկերտ** (հնց.) ևն), «Կենակցություն, արտաամուսնական կապեր» (հմմտ. ՎԱՐՁԱԿ ≈ **հարճ, պոռնիկ, սիրած** (ժող.), **կենակից** (հնց.), **հարսնակալ** ևն), «Խաբեություն, խորամանկություն, անսկզբունքայնություն, կեղծ բարեպաշտություն» (հմմտ. ՊՈՌՆԻԿ ≈ **ծախված, լակեյ, բախտախնդիր, աֆերիստ** (խսցկ.), **պնակալեզ** ևն) և այլն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:

Աճառեան Հր. 1926, Հայերէն արմատական բառարան, հհ. 1-4, Երեւան, Հրատարակութիւն Հայաստանի Խ.Ս. Հանրապետութեան Պետական Համալսարանի, 2705 էջ:

Աճառեան Հր. 1913, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, 1178 էջ:

Աւգերեան Մ., Ճէլալեան Գ. 1865, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Ս. Ղազար, Վենետիկ, տպ. ի Սրբոյն Ղազարու, 856 էջ:

Աւետիքեան Գ., Սիւրմելեան, Աւգերեան Մ. 1836, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 2235 էջ:

Գաբամաճեան Ս. 1910, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ.Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սագաեան, 1414 էջ:

Գայայեան Յովհ. 1938, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, Գալֆա, 550 էջ:

Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 643 էջ:

Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ 1969, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1–4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2763 էջ:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. 2009, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 841 էջ:

Ղազարեան Ռ. 2006, Գրաբարի հոմանիշների բառարան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, 707 էջ:

Ղարիբյան Ա. 1977, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան», 1472 էջ:

Ճէրէճեան Գ., Տօնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, 2530 էջ:

Ճիզմեճեան Պ. 1954, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հհ. 1-2, Հալէպ, Տպարան Անի, 2224 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հհ. Ա-Դ, Երևան, ՀՍՍՌ պետհրատ, 2409 էջ:

Ջախջախեան Մ. 1837, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Տպարան Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1535 էջ:

Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 820 էջ:

Սարգսյան Ա. 1991, Արևմտահայերենի բառարան, Երևան, «Արևիկ», 320 էջ:

Սաքապետոյեան Ռ. 2011, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, «Տիգրան Մեծ», 382 էջ:

Սուքիասյան Ա. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 685 էջ:

Սուքիասյան Ա. 2009, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1242 էջ:

ИССЛЕДОВАНИЕ ОДНОЙ МИКРОСИСТЕМЫ ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ «НАЗВАНИЯ ЛИЦ»

МАРТИРОСЯН А.

Резюме

Ключевые слова: семантический анализ, лексический класс, лексико-семантическая группа, семантическая структура, иерархические изменения, ядерные и периферийные семы, семантическая дифференциация.

В статье впервые проводится диахронический анализ семантической структуры лексем лексико-семантической группы «Развратность, волокитство, пьянство» на материале армянского языка, сдвиги между ядром и периферийными значениями изучаемых лексем. Тестовая гипотеза позволяет утверждать, что на разных этапах развития языка изменяется не лексическая система лексических полей, а отдельные ее части и отношения между ними, поскольку любой член поля лексического класса (семантического множества, подмножества, группы) многими семантическими нитями связан с другими членами, действующими во всей системе. В результате всякое изменение последней приводит к качественному сдвигу в словарном запасе языка.

STUDY OF ONE MICROSYSTEM OF THE LEXICO-SEMANTIC FIELD “NAMES OF PERSONS”

MARTIROSYAN A.

Summary

Key words: semantic analysis, lexical class, lexico-semantic group, semantic structure, hierarchical changes, nuclear and peripherial semes, semantic differentiation.

For the first time, the article provides a diachronic analysis of the semantic structure of the lexemes of the lexico-semantic group “Depravity, philandering, drunkenness” on the material of the Armenian language, shifts between the core and peripheral meanings of the studied lexemes. The task is to identify the cognitive-semantic mechanisms of changing the meaning of words in this huge historical period, as well as their relationship with other word-formation groups. The test hypothesis leads to the statement that at different stages of language development, it is not the lexical system of lexical fields that changes, but its individual parts and the relationships between them, since any member of the field of a lexical class (semantic set, subset, group) with many semantic threads is connected with other members operating throughout the system. As a result, any change in the latter leads to a qualitative shift in the vocabulary of the language.

ԱՄԱԼՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ*
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
amalyabarseghyan42@gmail.com
DOI: 10.54503/1829-4073-2023.1.184-193

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ Հ. ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ շարահյուսական կապակցություններ, համաձայնություն, խնդրառություն, առդրություն, ենթակա, ստորոգյալ, որոշիչ:

Ներածություն

Ի տարբերություն արձակ ստեղծագործության՝ բանաստեղծական խոսքում առդրություն շարահյուսական կապակցության եղանակն ունի առանձնահատուկ դրսևորում (հատկացուցիչը հատկացյալից, որոշիչը որոշյալից շատ դեպքերում հետադաս է դրվում): Դա պայմանավորված է բանաստեղծական խոսքի յուրահատկությամբ:

Համաձայնության (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում) և խնդրառության շարահյուսական կապակցության եղանակների դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին:

Շարահյուսագիտության մեջ տարբերակում են կապակցության տեսակ, կապակցության բնույթ, կապակցության եղանակ և կապակցության միջոցներ: Այժմ քննենք և ներկայացնենք կապակցության եղանակները (համաձայնություն, խնդրառություն, առդրություն) Հ. Էդոյանի բանաստեղծություններում:

ա) **Համաձայնություն**: Արդի հայերենի շարահյուսության մեջ ընդունված է, որ համաձայնության եղանակով կապակցվում են ենթական ու ստորոգյալը և բացահայտիչն ու բացահայտյալը: Ենթական և ստորոգյալը, ավելի ճիշտ՝ դրանց կապակցությունը կազմում է նախադասության կառուցվածքային հիմքը: Ինչ վերաբերում է միակազմ նախադասությանը, ապա այն, նախ, անհա-

* *Հոդվածը ներկայացվել է 16.12.22, գրախոսվել է 07.04.23, ընդունվել է տպագրության 28.04.23:*

սեմատ փոքր կշիռ ունի շարահյուսական կառուցվածքի համակարգում և, երկրորդ, կարելի է ասել, որ նրա ընկալումը զգալի չափով կատարվում է երկկազմի հիմքի վրա, նրա հետ զուգորդմամբ:

Պատահական չէ, որ նախադասության քերականական կարգերը հիմնականում հանդես են գալիս ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ: Այդ կարգերից է համաձայնությունը, որը, ինչպես հայտնի է, կատարվում է դեմքով ու թվով: Համաձայնությունը՝ որպես քերականական կարգ, այնքան կարևոր է, որ բնականաբար, շարահյուսության ամեն մի դասագրքում էլ քննվել ու քննվում է: Նկատի ունենալով, որ ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունը հանգամանորեն քննված է, և նրանում չկան տարակարծությունների տեղիք տվող երևույթներ, ուստի անդրադարձել ենք Հ. Էդոյանի պոեզիայում ենթակայի ու ստորոգյալի թվային համաձայնությանը:

Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է. այն դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգը, ուրեմն՝ համապատասխան քերականական ձևավորում: Եվ բնական է, որ այդ կապակցության բաղադրիչները՝ ենթական և ստորոգյալը, պետք է համապատասխանեն միմյանց: Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայնությունն ունի շատ յուրահատկություններ՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով: Ենթակայի և ստորոգյալի համաձայնության վերաբերյալ կարևոր դիտողությունների ենք հանդիպում հայերենի շարահյուսությանը նվիրված մի շարք աշխատություններում:

Ներկայացնենք ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը Հ. Էդոյանի պոեզիայում[1]:

Բանաստեղծություններում երբեմն հանդիպում ենք բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածության դեպքերի: Այսպես՝

«Հեռու է Ճապոնիան,
Ավստրալիան,
քաղաքը, գիշերը,

---

[1] Առանձնացրել ենք «Ընտրանի» գիրքը, որտեղ զետեղված են հեղինակի հրատարակած հետևյալ ժողովածուների նյութերը (Անդրադարձումներ (1964–1976), Պատկեր և կեսօր (1976–1980), Երկրային ժամանակ (1980–1983), Այժմ և միշտ (1983–1986), Քայլեր և ստվերներ (1987–1995), Հետգրություն (1996–2000), Երեք օր առանց ժամանակի (2002–2005), Փողոցի բաժանվող մասում (2005–2006), Կանգ առ, ես այստեղ եմ (2011–2012), Հենման կետ (2015):

հեռու է վաղը,

ուր հոսում են Ավստրալիան,

Ճապոնիան,

գիշերը, քաղաքը,

հեռու են աչքերը առաջին մարդու» (էջ 24):

«Չկա սկիզբ ու վերջ,

կրակ ու մոխիր, կասկած ու հույս,

ամեն ինչ այստեղ մեկ է, եզակի,

չկան սահմաններն երկնքի ու երկրի» (էջ 71):

«Դարպասներին և պատերին քաղաքի,

Ուր քո անունն ու քո բառն է պատկերված» (էջ 50):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը: Սա գրական լեզվի կանոնների խախտում է:

Միակազմ նախադասությունները չունեն երկկազմ նախադասություններին հատուկ կառուցվածք, այսինքն՝ հատկանիշը և այն կրող առարկան տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի ու ստորոգյալի միջոցով: «Միակազմ նախադասությունը,- գրում է ակադեմիկոս Ս. Աբրահամյանը,- ունենում է մեկ գերադաս կամ գլխավոր անդամ, և, եթե նախադասությունն ընդարձակ է, վերջինս ունենում է իր լրացումը կամ լրացումները»[2]: Հայտնի է՝ միակազմ նախադասությունները բաժանվում են երկու ենթատեսակների՝ անդեմ միակազմ նախադասություններ և դիմավոր միակազմ նախադասություններ՝ պայմանավորված քերականական դեմք ունենալու և չունենալու հատկանիշով (Լուցկիներ: Լույս: Արդեն մթնում է: Ուշ է արդեն):

Անվանական անդեմ միակազմ նախադասություններ հանդիպում են հատկապես գեղարվեստական խոսքում: Միակազմ նախադասությունները վարպետորեն է օգտագործում Հ. Էդոյանը իր «Ընտրանի» գրքում: Բերենք բանաստեղծությունների օրինակներ, որոնք միայն անվանական անդեմ միակազմ նախադասություններով են գրված:

«Մի անուն մենակյացի:/ Հռետոր՝ անապատում:/ Մի կայծակ՝ արևի տակ:/ Մի խարույկ՝ ծաղկի վրա:/ Մի վճիռ աններդաշնակ:/ Մի անձրև-ներկայացում:/ Մի քնած հանդիսատես:/ Մի ճիչ անարձագանք:/ Մի մեխված պատուհան:/ Մի անցորդ անվերադարձ:/ Մի փողոց անգծագիր:/ Մի քայլ անն-

[2] **Աբրահամյան** 2004, 60:

պատակ:/ Մի անկում բառերի մեջ:/ Արթնացում բառերից դուրս» (Կենսագրական տվյալներ, էջ 659):

Կամ՝ «Գիշերվա մեջ ձգվող ծառուղիներ:/ Հանգած գլանակներ լապտերների տակ:/ Բարձերի վրա ննջող տառապանքներ:/ Լուցկիներ:/ Լույս»: (էջ 15)

Բերենք նաև բայական ձևական դիմավոր միակազմ նախադասությունների օրինակներ՝

«Դանդաղում: Եվ անշարժանում»: (էջ 378)

«Արդեն մթնում է»: (էջ 588)

Անվանական ձևական դիմավոր միակազմ նախադասություն է՝

«Դրսում անձրև է»: (էջ 739)

բ) **Խնդրառություն:** «Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է, որի ժամանակ ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը (հոլովը)՝ պայմանավորված լրացյալի իմաստով, իսկ եթե այն բայ է, նաև սեռով»[3]: Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է համարում նաև անվանի հայագետ Մ. Աբեղյանը: Նա խնդրառությունը անվանում է կախման հարաբերություն: «.... Լրացումի կապակցության եղանակն ու հարաբերությունն իր լրացյալի հետ՝ կախված է լրացյալից»[4]: «Կախման հարաբերությունը՝ խնդրառությունը կամ վարումը,- գրում է Մ. Աբեղյանը,- արտահայտվում է՝

1. Անմիջապես հոլովներով միայն,- **անմիջական կապակցություն**:

2. Հոլովների հետ նաև կապերով, որոնց միջոցով խնդիրը կապակցվում է իր խնդրառուի հետ,- **միջական կապակցություն**»[5]:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ **խնդրառություն** և **հոլովառություն** եզրույթների փոխարեն պետք է գործածել **կառավարություն** եզրը, քանի որ հասկացությունը նեղացվում է: Գ. Ջահուկյանը գրում է. «Հայտնի է, որ՝ ա) կառավարությունը կարող է լինել ոչ միայն «խնդրառություն», այլև «պարագաառություն» (հմմտ. «Պատկանում է քաղաքին» և «Բնակվում է քաղաքում»). բ) կառավարությունը կարող է արտահայտվել ոչ միայն իբրև «հոլովառություն», այլև որպես «կապառություն»: Կառավարությունը քերականական կախման այն եղանակն է, որ իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական և

[3] Տե՛ս **Աբրահամյան** 1976, հ. 3, 406:

[4] **Աբեղյան** 1974, հ. Զ, 324:

[5] **Աբեղյան** 1974, հ. Զ, 324:

կապային ձևավորմամբ»[6]: Ընդունելով Գ. Ջահուկյանի կարծիքը՝ այնուամենայնիվ գործածում ենք «խնդրառություն» եզրը, որը լայն գործածություն ունի հայ քերականագիտության մեջ:

Խնդրառություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները Հ. Էդոյանի «Ընտրանի» գրքում համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին: Այսպես՝

«Դու որքան մոտեցար **նրան**, նա այնքան/ հեռացավ **քեզանից**»: (էջ 630)

«Այդ կինը ժպտում էր, և նրա ժպիտը **մահը քեզ** էր մեկնում/գեղեցիկ **ծաղկեփնջով**»: (էջ 410)

«Ես **ճակատս հողին** եմ խոնարհում,/ գոյության քաղցը ստիպում է **ինձ** բարձրանալ/ կամ իջնել միևնույն **աստիճանով**»: (էջ 597)

«**Տարածության մեջ** օրն էր բողբոջում»: (էջ 618)

Ոչ կանոնական հոլովաձևեր՝ պայմանավորված խնդրառական առանձնահատկություններով.

«որոնք սարսափահար փախչում են ուղիներով, թաքնվում երկնքի վարագույրի ետև (փխ.՝ ետևում) (էջ 672)»:

Իմ վրա, մեր վրա կապակցությունները հատուկ են խոսակցական լեզվին, քանի որ առաջին դեմքի (նաև երկրորդ դեմքի) անձնական դերանունով արտահայտված կապի խնդիրը դրվում է տրական հոլովով, իսկ մյուս դերանուններով կապի խնդիրը՝ սեռականով:

Օրինակ՝ «Երկնքի կորցրած աստղերն **իմ վրա** (փխ.՝ ինձ վրա)

վառվում են իմ ձեռքերին և իմ տանիքին ....»(էջ 70)

«...մի՞թե **իմ վրա** (փխ.՝ ինձ վրա) չի շողում հավիտյան անշարժ մի աստղ», (էջ 259)

«Ճակատագրի ինչ ցանց է փռված մեր շուրջն ու **մեր վրա** (փխ.՝ մեզ վրա)», (էջ 427)

Թեև ունի ճիշտ գործածությունը.

«Պահը կիջնի, կանշարժանա **ինձ վրա»**, (էջ 51)

Ժամանակակից գրական հայերենում **ինձանից, մեզանից** և **ինձնից, մեզնից** ձևերից ավելի օրինաչափական և նախընտրելի են կարճ ձևերը (ինձնից, մեզնից և այլն)[7]:

Օր.՝ «Ամեն ինչ փոխվում է, **ինձանից** (փխ.՝ ինձնից) բացի»:

---

6 **Ջահուկյան** 1974, 424:

7 **Աբրահամյան** 1981, 179:

Ես նույնն եմ մնում (էջ 593)։

Թեև ունի նախընտրելի ձևը. «Նրա հայացքը իմ մեջ է և **ինձնից** դուրս» (էջ 181)։

Հ. Էդոյանի պոեզիայում շարահյուսական կապակցության եղանակների (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության և խնդրառության հարցում) դրսևորումները համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին։ Թեև նույնը չենք կարող ասել առդրության դեպքում, որը պայմանավորված է բանաստեղծական խոսքի առանձնահատկությամբ։

գ) **Առդրություն**։ «Առդրությունը նախադասության անդամների կամ բառակապակցության բաղադրիչ բառերի ստորադասական շարահյուսական կապի ձևերից մեկն է, երբ մի բառի կախվածությունը մյուսից չի արտահայտվում բառաձևով, այլ տեղով, իմաստով, դրսևորած քերականական հարաբերության ոչ ինքնուրույն բնույթով»[8]։

The Committee of Union and Progress, which had been wavering in April and May in their Armenian program, resolved at the end of May on the murder, deportation, and spoliation of the entire Armenian people in Turkey (see J. Lepsius, Deutschland und Armenien, 1919, page 19).

Telegraphic instructions were issued by the Turkish Govt. to provincial authorities to "evacuate" all Armenians from the military zones, where they represented "danger" to Turkish defense and deport them to the deserts of Mesopotamia and Syria. This scheme was carried out in June–July 1915, with unparalleled barbarity; men, women and children were murdered indiscriminately, and the remainder driven to the desert to fend for themselves. This "evacuation" of the Armenians produced a fundamental change in the attitude of Entente Powers toward the Armenian question. The Grand Duke

Nicholas, who had replaced the former Viceroy, occupied Erzerum, Trebizond and the upper valleys of Euphrates and Tigris. This achievement enabled the Grand Duke to proclaim in the summer of 1916 "the liberation of Armenia from the Turkish yoke." He tried, however, to bar the native surviving Armenians from returning to settle in the occupied region, because Tsarist Russia had planned to plant Cossack settlements in the Araxes and Euphrates valleys on Armenian Kurdish fertile lands.

This "Euphrates Cossack" idea had its repercussion in Great Britain. In spite of the secret treaties concluded by the Allied Powers for the partition of Turkey, the British Prime Minister declared in his Guildhall speech in 1916 "that H. M. Govt. was resolved to secure the liberation of this ancient (Armenian) people".

Soviet Russia and Armenia. – The Russian Revolution of 1917 eventually resulted in the secession of Transcaucasia from Russia after the dispersal of the Russian armies. On his accession to power, Lenin proclaimed the unity of Armenian lands and sent Shahumian to organize it. By the Brest-Litovsk Treaty of March 1918, however, Soviet Russia was compelled to cede the Batum, Kars and Ardahan districts to Turkey. The Federated Republic of Georgians, Armenians, and Tatars, which was formed in consequence of the Bolshevik Revolution, attempted to resist the Turkish advance. But misunderstanding broke out among the three peoples; and the Turks occupied the three ceded districts.

After the Armistice the victorious Allied Powers again promised to reconstitute Armenian nationality. Some efforts were made to concentrate the surviving Armenians in Turkey in Cilicia, then occupied by British troops, presumably with the idea of making that area the home of the Ottoman Armenians, whereas in Transcaucasia the British military authorities in occupation were indifferent to Armenian legitimate rights. A small war between Georgia and Armenia was stopped by them.

Armenian Delegates at the Paris Conferences. – At the Peace Conference in Paris the Armenian Delegation was induced to demand a "great Armenia" extending from sea to sea. President Wilson was being urged to accept a mandate for this "great Armenia." Consequently, the two Armenian delegates, Boghos Nubar Pasha and Mr. Aharonian, presented a memorandum to the Supreme Council in Feb. 1919. The demand was conditional on the acceptance of a mandate by the United States, which the American Senate did not want. While the negotiations for peace with Turkey were dragging on, the Armenian delegates

concluded an Agreement with Sherif Pasha, the Kurdish delegate to the Peace Conference, in Oct. 1919. In the Conference held in London in March 1920, the Armenian delegates again pleaded their case. In April at the San Remo Conference the Supreme Council offered the mandate for Armenia to the League of Nations. The arrangements made with regard to oil at San Remo, however, hastened the reappearance of Russia at Baku.

This approach of Soviet Russia had its immediate effect in Armenia and Georgia, both of which negotiated peace treaties with her in May. The Armenian delegates in Moscow were offered assistance if the Armenian Govt. allowed the transport of Russian troops over the railway line of Alexandropol-Kars-Erzerum to go to the rescue of the Turks, who, hard pressed by the Greeks in the west, were willing to make any concession. The Armenian Govt., after consultation with the British representatives, rejected the Russian offer. In the summer of 1920, the Turkish Nationalist Govt. at Angora repeatedly invited Erivan to negotiate a separate peace, but the delegate of the Armenian Republic signed the Treaty of Sevres on Aug. 10, which provided a *de jure* recognition of the independent Armenian state.

Two months after the signature of the Treaty of Sѐvres the Turks attacked Armenia. Abandoned by the Allied Powers and badly equipped, the Armenian Army put up little resistance to the Turks, who by the end of Nov. had occupied Kars and Alexandropol. After the Armenian Govt. had signed a treaty of peace, the troops of Soviet Russia led by Armenian Bolsheviks rushed to Erivan, and by an open telegram invited the Turks instantly to stop the operation.

S.S. Republic of Armenia. – A Soviet Armenian Govt. was established in Erivan in Dec. 1920 amid circumstances of famine and disruptions. Since that time the Armenian Communist party, has been governing the country. With the financial support of Soviet Russia and the Federated republics of Georgia and Azerbaijan, the Armenian Soviet Govt. established peace and a measure of prosperity. Barren land and marshes were reclaimed by a scientific system of irrigation, and considerable encouragement was given to cotton and tobacco growing. Copper mines at Allahverdi and Ghatar were in process of exploitation, and schemes of generating electric power were in progress.

Armenians Abroad. – The position of Armenians of Turkey stands to-day as follows: there are about 100,000 Armenians in Constantinople. When the French evacuated Cilicia in 1921, about 80000 Armenians migrated from that district to

Syria under deplorable circumstances. There they still remain, insecure and helpless. The Greek rout at Smyrna in 1922 drove about 100,000 Armenians to Greece and the Balkans. There are large or small communities of Armenians in the United States of America, Persia, France, Egypt and smaller groups in various European and Asiatic countries.

Nansen Settlement Scheme. – After five years of discussion, the League of Nations at last sent a commission in 1925 to Armenia headed by Dr. Nansen to report upon the possibilities of settling refugees within the frontier of the republic. Dr. Nansen recommended a loan of 900.000 pounds to the Armenian Govt. for this purpose, and the Council of the League has set up a commission to arrange the loan.

(A.S.)

NAA, f. 412, l. 1, work 676, p. 5–11.

BIBLIOGRAPHY


Ղամբարյան Ա. 2006, Հայկական հարցը 1912–1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ. հրատ., 232 էջ:

Safrastyan A., NAA, f. 412, l. 1, p. 1–4.

Safrastyan A., NAA, f. 412, l. 1, work 676, p. 5–11.

СТЕПАН ГАРИБДЖАНЯН
Кандидат исторических наук
Институт истории НАН РА

АРСЕН ТЕРТЕРЯН
(к 140-летию со дня рождения)



Крупный ученый-филолог, литературовед и педагог, один из основоположников высшего образования в Армении, доктор филологических наук, профессор, действительный член-академик учредительного состава Академии наук Армянской ССР, заслуженный деятель науки Арсен Арутюнович Тертерян родился 22 декабря 1882 г. (3 января 1883 г.) в селе Шушкенд (Шош) Нагорного Карабаха. Учился сначала в местной приходской и шушинской епархиальной школе, затем – в Эчмиадзинской семинарии Геворкян. По окончании учебу продолжил в Петербургском психоневрологическом институте, но не смог его окончить в силу материальных трудностей. Преподавал в приходских школах Шуши и Еревана. С декабря 1920г. работал в Ереванском государственном университете преподавателем истории армянской литературы и заведующим кафедрой армянской литературы. Преподавал также в Армянском педагогическом институте им. Х. Абовяна.

Основные научные труды А. Тертеряна посвящены закономерностям развития армянской литературы и эстетики, литературно-критической мысли XIX – начала XX вв., вопросам истории русской литературы и критики, литературных связей. Внес весомый вклад в развитие терминологии армянского литературоведения. Его перу принадлежат: «Шир-

ванзаде-романист армянской семьи и интеллигенции», «Нар-Дос», «Мурацан», «Творчество Ерванда Отяна», Исторический роман Раффи «Самвел», «Хачатур Абовян», «Эстетические воззрения Пароняна», «Брюсов и армянская культура», «Патриотическая поэзия Туманяна», «Армянские классики», «Ширванзаде-сатирик», «Ширванзаде-драматург», «Энциклопедия типов Ширванзаде», «В. Г. Белинский», «Перч Прошян» и др.

Арсен Тертерян умер 6 октября 1953 г.

Ниже впервые публикуется автобиография А. Тертеряна, хранящаяся в Национальном архиве Армении.

Автобиография Арсена Тертеряна

Июнь 1949 г.
Ереван

Родился 22 декабря 1882 года в селе Шушкенд Нагорного Карабаха. Начальное образование получил я в сельской школе. Для получения же среднего образования переехал в гор. Шуша, где и окончил местную Армянскую семинарию в 1902 г. Высшее образование получил в Эчмиадзинской академии, с окончанием в 1905 году специального курса в лицеях последней.

По окончании курса учения я посвятил себя педагогической и литературной деятельности. В 1905–1920 гг. состоял преподавателем литературы и истории в средних школах. С 1920-же года до настоящего времени, без перерыва, читаю лекции по истории армянской литературы в Ереванском государственном университете, в котором и веду кафедру по тому же предмету. Помимо университета, в течение десяти лет работал также в Государственном педагогическом институте.

В 1939 году, по работе в течение восьми лет в университете, я удостоен звания профессора. В связи с двадцатилетием установления Советской власти в Армении удостоен звания заслуженного деятеля науки. В 1943 году предоставлена мне степень доктора филологических наук. Впоследствии же избран в действительные члены Академии наук

Армянской ССР. С первых же дней Ноябрьской революции в Армении участвую в деле социалистического строительства страны, сотрудничая в прессе, и в перестройке школы, равно как в интерпретации и издании армянских классиков.

Имею ряд переводов на армянский язык из трудов В. И. Ленина. Участвовал в составлении учебника «Трудовой школы». Состоял членом переквалификационной комиссии и экспертом во Всесоюзном соревновании молодых научных работников. Участвовал и в заочном обучении, составив учебник по истории армянской литературы для Заочного педагогического института. Принимал активное участие по редактированию армянских классиков, причем труды из этих классиков снабдил обширными введениями.

Научная моя деятельность начинается одновременно с педагогической. На обоих поприщах я работаю ровно сорок лет (с 1905 года).

Первый мой труд - «Культура армянского народа», вышел в 1905 году в еженедельнике «Тараз». С тех пор и до сегодняшнего дня я выпустил, как отдельными изданиями, так и в периодической печати более ста наименований научных трудов, посвященных преимущественно истории армянской литературы и, в частности, вопросам теории литературы. Существенная особенность указанных трудов заключается в том, что в них впервые в армянской критике выдвинут ряд армянских демократических авторов, преследовавшихся до того со стороны армянской буржуазной публицистики и критики.

Труды мои, как педагогические, так и литературоведческие, не раз получили положительную оценку советской общественности. Не раз я бывал награждаем, в частности, за подготовку новых научных кадров. Это положительное отношение нашло свое выражение, особенно, в период нашей Отечественной войны, когда армянские советские учреждения часто предоставляли мне возможность выступать с научными трудами, острием своим направленными против фашизма. Не только в печатных, но и в устных докладах я несколько раз выступал против фашистской идеологии. В этой серии я должен особо указать на мой доклад


«Две тенденции в немецком языке», зачитанном мною на научной сессии университета.

За время Отечественной войны мною написан ряд научных трудов, в которых я выявляю героическое прошлое армянского народа и глубокие отголоски этого прошлого в наши дни, когда народ наш вместе с братскими народами Союза ведет бурную схватку с гитлеризмом.

А. Тертерян [подпись]

Национальный архив Армении, ф. 20, оп. 10, д. 696, л. 154–157. Подлинник. Машинопись.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ
BOOK REVIEWS



THE ALEPPO RESCUE HOME: 1464 ACCOUNTS OF ARMENIAN GENOCIDE SURVIVORS. EDITED AND COMPILED BY EDITA GZOYAN.

(AGMI Publishing House. Yerevan, 2022, 832 p.)

Among the aftermaths of the Armenian Genocide were a great number of Armenian children and women kept in Muslim houses, harems or Turkish orphanages. According to some sources their number was up to 200.000. Their fate and ways of ending up in Muslim environment varied. But there was one common feature for all of them: the exclusion from the Armenian nation and in most cases the involuntary or forcible change of identity – from Armenian to Arabic, Turkish or Kurdish ones. And in the case of children those actions were subject to the second article of UN Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, paragraph E: Forcibly transferring children of the group to another group.

Self-evidently this great number of survived Armenians could not be disregarded in the process of the Armenian nation's revival. Already from 1916–1917 the orphan rescue work was initiated on those territories of Western Armenia that had come under the control of the Russian army. Subsequently this process covered almost all areas of the Ottoman Empire. If at the first stage – 1916–1917 – the process of collecting the Armenian orphans was carried out by individuals, then later it became more organized and systematized, including the Armenian and foreign charity organizations, the Armenian Church and, after World War I, the first truly international organization – the League of Nations. As a consequence, the process of rescuing and collecting Armenian children and

women from Muslim homes, harems and Turkish orphanages and returning them to the Armenian nation became a large-scale operation.

A big amount of literature – both academic and amateur – is available on the issue. But much of it has been written with a significant delay – up to several decades. Thus, it could be taken as a starting point to speak about the book *The Aleppo Rescue Home: 1464 Accounts of Armenian Genocide Survivors* published by the Armenian Genocide Museum-Institute Foundation. It is a collection of the testimonies of direct victims of the Armenian Genocide who have been rescued through the activities of the Aleppo Rescue/Reception Home.

The volume is edited and compiled by Edita Gzoyan, the Deputy Scientific Director of the Armenian Genocide Museum-Institute Foundation. It comprises 1464 accounts of survivors of the Armenian Genocide, who have been accepted by Rescue Home between 1922 and 1930.

The main part of the volume – accounts of the survivors – is prefaced by a short history of the book (pp. 9–10 in Armenian and pp. 11–12 in English) and an introduction (pp. 13–21 in Armenian and pp. 22-28 in English). A brief overview of the history of this volume presents some details, which help to have a better understanding of the process of its creation. The book has passed a long way to becoming reality – from 2014 to 2022. Everything started in Geneva at the archives of the League of Nations. 1464 accounts, encompassed in this book, were put in 14 notebooks. Unfortunately, 2 more notebooks were missing from the archive otherwise the number of accounts would be approximately 1700. It should be especially mentioned that the accounts are not presented "as is". All testimonies have undergone through the following actions: making the handwritten text into typed one and verifying, correcting the spelling of the original accounts, identifying and clarifying the place names, transcribing the names and surnames of the survivors from English into Armenian and finally translating the account into Armenian. All this is sure to help the readers not "to get lost" or confused while reading the accounts.

This brief overview is followed by an introduction, which could be described as a standing-alone review article, that helps the reader to have a basic knowledge and general information about the context of the historical events mirrored in the accounts. It opens with the legal definition of the crime – the forcible child transfer of the group to another group – in this case from the Armenian community to a Muslim one. During the Armenian Genocide tens of thousands of

Armenian children and women were taken, stolen, bought and sold, ending up in harems, brothels, various Muslim households and orphanages. It is clearly shown that the genocidal policy of the Turkish government toward the Armenian population of the Ottoman Empire was gender and age-specific, and the accounts are another important proof of that. If going a step further it can be stated that the forcible child transfer, forced marriages and sexual violence and sexual misconduct were the structural components of that genocidal policy, which is briefly presented in two separate sections. In particular, at the beginning of World War I, the Turkish government established a network of orphanages with the aim of collecting Armenian children. And this process was legally secured by government decrees and orders. Armenian children were also distributed among the Muslim households, factories, workshops, etc. For the smooth process of assimilation they were deliberately sent to villages or towns with zero Armenian population and no foreigners. On the other hand a special policy was adopted by the Turkish government to prompt the Muslim population to adopt the Armenian children.

And in case of a girl or a young woman the very commonly utilized methods were forced marriages and different kinds of sexual violence and misconduct. Two documents are presented which prove the intentional nature of forced marriages orchestrated by the Turkish government. The first one is dated December 30, 1915 and the second one – April 30, 1916. The former reads: "…the children be placed in orphanages and Muslim villages in which there are no Armenians or foreigners, and that the young women and girls be married off to Muslims, so that they will be raised according to Islamic principles". And in the second document "…the giving in a marriage of young and widowed women" is clearly mentioned.

A special section is dedicated to the international response, in particular, the reflection of the issues of forcible child transfer and forced marriages in official documents. Among those Article 4 of Mudros armistice, Article 142 of the Treaty of Sèvres are mentioned. The logical development of the topic of international response is the next section – The League of Nations and Protection of Women and Children in the Middle East. It is the brief overview of the activities of the League of Nations in protection of Armenian children and women after the active phase of the Armenian Genocide. In the case of women it was done in the context of the issue of trafficking included in the humanitarian mission of the League of Nations. It is specially mentioned that the League of Nations classified women and

children in the same category and marked them as "requiring special treatment and extra protection". The League had been involved in the issue of deported women and children in the Near East based on the Article 23c of its Covenant, and the responsible body was the 2nd Committee of the League of Nations. As a result of its efforts, the Assembly of the League of Nations adopted a resolution (December 15, 1920) which ended up by the creation of the Commission of Enquiry for the Protection of Women and Children in the Near East (February 22, 1921). The main goal of that newly formed body was "informing the Council as to the present situation in Armenia, Asia Minor, Turkey and adjusting territories regarding deported women and children". The Commission consisted of three members – Dr. William Kennedy, Miss Emma Cushman and Madame Gaulis later replaced by the famous Danish missionary and social worker Karen Jeppe.

The last part of this brief historical overview is dedicated to the Aleppo Rescue/Reception Home which was established in 1918 by the American Committee for Relief in the Near East (American Near East Relief since 1919) and then administered by the League of Nations and the Nansen Commission for Refugees. Thousands of liberated Armenians found shelter in the Reception Home run by Karen Jeppe. It is there that the liberated Armenians were interviewed, and those interviews were registered in the aforementioned notebooks. They were conducted between 1922 and 1930. And now the 1464 accounts are available in English and Armenian for the researchers and all those interested in the issue.

The main part of the book – 1464 accounts – is a valuable source on the History of the Armenian Genocide, presented in the bottom up format. It is not the general history or large scale pictures, but rather the mosaic made by 1464 "pixels". It is not an impersonal narrative that can be found in textbooks and most academic volumes but rather the story of the Armenian Genocide told by the victims themselves, presented from their perspective. And this effect is getting even stronger when considering the fact that the vast majority of the survivors' accounts are accompanied by their photos. Those accounts can also be considered as one of the earliest examples of the oral history regarding the Armenian Genocide.

These usually short, laconic accounts form a big picture which tells not only about the fates and histories of escape and rescue of the survivors or about the efforts of the Rescue Home personnel in order to help them (finding the relatives, training them in crafts, etc.). An attentive reader can see a more general picture

of the process of the Armenian Genocide; find out the elements of the genocidal policy of the Ottoman Empire, including the clear trend of collecting Armenian children by Turks, Kurds, Arabs, etc.

Many details can appear while reading the accounts. For example, some survivors were convinced during their stay with Turks, Kurds or Arabs that all Armenians have been annihilated. And it was a kind of surprise for them to learn that there were still many Armenians alive and that they could join them and return to their people. There were also cases when liberated survivors did not want to stay and returned to the Muslim families where they had spent the previous years.

If one made an attempt to find a suitable motto for this highly valuable volume it could be the slightly paraphrased slogan from the iconic poster of the American Committee for Relief in the Near East (Near East Relief) made by W.B. King in 1917 – Lest they perish. In this case it would be "Lest they vanish", vanish in the abyss of oblivion. This collection of accounts can help many descendants of the Armenian Genocide survivors to collect some information about their ancestors, and this is not just a theoretical probability. In the process of creating the book one of the visitors of the Armenian Genocide Museum asked for any information about his ancestors. The only things he knew were their names and birthplace. And quite luckily the information about one of them could be found among the accounts in question.


Summing up it should be mentioned that the reviewed volume is an important contribution to the corpus of already available literature on the history of the Armenian Genocide with a special focus on the personal histories of the Armenian Genocide survivors. The only serious remark that can be made about this book is that it should have been published much earlier.

ARAM MIRZOYAN

PhD in History

Armenian Genocide Museum-Institute Foundation

mirzoyan.aram@gmail.com




ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1800–1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (եռագրություն)


ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 2022)

XIX դարը Եվրոպայի պատմության համար հեղափոխությունների և վերափոխումների ժամանակաշրջան էր: Մարդու և քաղաքացու իրավունքները, ժողովրդավարությունը, ազատ շուկայական հարաբերությունները նոր հնարավորությունների սկիզբ դարձան: Որպես ժամակակի կարևոր իրադարձություն, եվրոպական ազգային և ազատագրական շարժումները լայն արձագանք գտան ժամանակի հայ պարբերական մամուլում: XIX դարում արևմտահայությունը նույն իրավազուրկ վիճակում էր, ինչ վիճակում գտնվում էին Բալկանյան և Դանուբյան իշխանությունների ժողովուրդները, որոնք համառ պայքարի էին լծվել՝ վերականգնել իրենց անկախությունը: Ժամանակի հայ պարբերականները ուշիուշով հետևում էին քրիստոնյա ժողովուրդների ազգային վերածնության շարժումներին, ջանում հնարավորինս լուսաբանել եվրոպական ժողովուրդների ազատագրական պայքարի դրվագները:



XIX դ. եվրոպական ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ հայ հասարակական մտքի համակողմանի ուսումնասիրության խնդիրը կարևոր է հայ ժողովրդի պատմության առավել խոր ուսումնասիրության կարոտ բազմապիսի



հարցեր լուսաբանելու տեսակետից: Կարևոր նշանակություն ունի այդ շարժումների ճիշտ ընկալումը, քանի որ ազատագրական պայքարին վերաբերող որևէ հարց պատմական ճշմարտության տեսանկյունից հանրությանը ներկայացնելը արդի պատմագրության խնդիրն է:

Այդ խնդիրը տարիների տքնաջան աշխատանքով և բարեխղճությամբ կատարում է պատմական գիտութուների դոկտոր, պրոֆ. Ֆելիքս Մովսիսյանը՝ մեզ ներկայացնելով ուսումնասիրությունների ծավալուն մի շարք, որտեղ նոր մոտեցմամբ է տրվել ժամանակի հայ պարբերական մամուլի գնահատականը եվրոպական ազգային ազատագրական շարժումների վերաբերյալ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանը ընդգրկում է յոթ տասնամյակ, որի շրջանակներում ներկայացված են տարբեր ժողովուրդների պայքարի պատմությունն ու արձագանքները, դրանց տրված տարբեր գնահատականները:

Այս պարագայում հեղինակի կարևոր խնդիրներից մեկը կառուցվածքային հստակ բաժանում կատարելն էր: Կարծում ենք, հեղինակը ճիշտ լուծում է տվել՝ ուսումնասիրությունը բաժանելով ժամանակագրական երեք մասերի՝ **1800–1820-ական թթ., այնուհետև 1830–1840-ական թթ. և 1850–1870-ական թթ.**:

Այսպիսի բաժանմամբ Ֆ. Մովսիսյանին հաջողվել է մի կողմից ընդհանրական դիտարկումների հիման վրա ներկայացնել ողջ հիմնահարցը, խնդրո առարկա ժամանակաշրջանի առանձնահատկությունները, մյուս կողմից՝ կոնկրետ վերլուծությունների միջոցով վերհանել առկա մոտեցումները, նորովի և հիմնավորված ցույց տալ այս կամ այն պարբերականի դիրքորոշումները միևնույն հարցի շուրջ՝ միաժամանակ գիտական շրջանառության մեջ դնելով նոր մոտեցումներ: Ֆ. Մովսիսյանի եռագրության մեջ՝ առաջին անգամ մեզանում, առկա վիթխարի նյութը ներկայացվում է համակարգված ձևով:

Ուսումնասիրությունների շարքի ներածական մասում հիմնավորվում է աշխատանքի նպատակը. թեև XIX դ. եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն իր վրա էր կենտրոնացրել հայ հասարակական մտքի, հասարակական հոսանքների ուշադրությունը, այնուամենայնիվ

դրանց վերաբերյալ հայ պարբերական մամուլի ու հասարակական մտքի գնահատականը հայ պատմագիտության մեջ ամբողջությամբ ուսումնասիրված չէ:

Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում քննարկվող ժամանակաշրջանի գաղափարական այն բազմազանությունը, որ առկա էր XIX դ. հայ հասարակական մտքի մեջ, և որի արդյունքում միևնույն իրադարձությունների վերաբերյալ տարբեր, երբեմն հակասական, իրարամերժ մոտեցումներ էին ցուցաբերվում: Արևմտահայությունը, գտնվելով ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգի տակ, անկախություն և ազատություն ձեռք բերելու հույսերը կապում էր կամ եվրոպական Մեծ տերությունների կամ Ռուսաստանի հետ: Ժամանակի պարբերական մամուլը ջանում էր հնարավորինս շատ լուրեր ու տեղեկություններ տպագրել եվրոպական ժողովուրդների ազատագրական պայքարի հերոսական դրվագների մասին՝ հաճախ անուղղակիորեն իր ընթերցողների մեջ պայքարի ձգտում առաջացնելու նպատակով:

Արևմտահայությունը սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրթական ու մշակութային կյանքով մեծ ընդհանրություններ ուներ Բալկանյան և Դանուբյան իշխանությունների ժողովուրդների հետ: Հեղինակը նշում է, որ համահունչ էին նաև այս ժողովուրդների և հայության ազատագրական ծրագրերը, որոնք հետամտում էին ազատագրական պայքարում ստանալ Ռուսական կայսրության աջակցությունը:

XIX դ. սկզբի ազգային-ազատագրական պայքարն ուղղված էր նապոլեոնյան նվաճումների, ավստրիական և օսմանյան կայսրությունների տիրապետության դեմ: Այդ պայքարին և հայ հասարակական մտքի արձագանքներին է վերաբերում ուսումնասիրությունների առաջին մասը՝ **«Հայ հասարակական միտքը 1800–1820-ական թթ եվրոպական ազգային-ազատագրական շարժումների մասին»**: Այստեղ հիմնականում շեշտը դրվում է Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների պարբերականների ուսումնասիրության վրա՝ իրավացիորեն նշելով, որ Մխիթարյանները իրատեսորեն են ներկայացրել XIX դարի սկզբում Եվրոպայում ստեղծված քաղաքական իրավիճակը և անկախ պարբերականների թույլ տված առանձին վրիպումներից ու որոշ անճշտություններից, դրանց մոտեցումները արժեքավոր են հայ հասարակական մտքի դրսևորումների տեսակետից:

Բարձր գնահատելով Մխիթարյանների աշխատություններն ու տեղեկատվությունը XIX դ. առաջին կեսի եվրոպական ազգային ազատագրական պայքարի վերաբերյալ, Ֆ. Մովսիսյանը միաժամանակ նկատում է, որ նրանք

մանրամասն լուսաբանել են նապոլեոնյան նվաճումներն ու պատերազմները առանց նյութի բծախնդիր ընտրության, և թեև իրենց աշխատություններում ու պարբերականներում ձգտել են անկողմնակալ տեղեկություններ տալ եվրոպական ժողովուրդների պայքարի մասին, սակայն ոչ միշտ են հաջողել: Այսուհանդերձ, XIX դարի սկզբի ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ հայ պատմագրության մեջ Մխիթարյան հետազոտողների աշխատություններն իրենց հաղորդած տեղեկատվությամբ եզակի են, կարող են անգամ սկզբնաղբյուրի դեր կատարել:

Խնդրո առարկա ուսումնասիրությունների շարքի առաջին գլուխը եզրափակվում է հայ հասարակական մտքի՝ դանուբյան և հույն ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ գնահատականներով: Եթե Մխիթարյան միաբանության պատմաբաններ Ա. Գալֆայանի և Ղ. Հովնանյանի կողմից Դանուբյան իշխանությունների ժողովուրդների ազատագրական պայքարի ընթացքը ներկայացվում է զուտ իբրև տեղեկատվություն, ապա Գրիգոր արք. Զաքարյանը, Հովհաննես արք. Գառնակերյանը, Ներսես արք. Աշտարակեցին փորձում են ելք գտնելու հույսը կապել Ռուսաստանի հետ:

Ուսումնասիրության երկրորդ մասում, որ վերնագրված է **«Հայ հասարակական միտքը 1840–1850-ական թթ եվրոպական ազգային-ազատագրական շարժումների մասին»,** անդրադարձ է կատարվում իռլանդական և բելգիական ազգային-ազատագրական պայքարների՝ քիչ ուսումնասիրված արձագանքներին:

Առհասարակ, 1840-ական թվականներին Բելգիայում, Նիդերլանդներում, Իսպանիայում և Պորտուգալիայում ծավալված քաղաքական իրադարձությունները, այս ժամանակաշրջանի ազգային շարժումները Մխիթարյանները ներկայացնում են հանգամանորեն, բավական հավաստի, շեշտը դնելով ստացված լուրերի բազմազանության վրա՝ հավատարիմ մնալով, սակայն, Եվրոպայում առկա քաղաքական հավասարակշռության, գոյություն ունեցող միապետությունների պահպանման իրենց դիրքորոշմանը: Նրանք այդ պայքարը թեպետ անվանել են հեղափոխություն, սակայն ճիշտ են նկատել, որ այն նպատակ էր հետապնդում հասնել ազգային անկախության ու միասնության:

Ֆ. Մովսիսյանն անդրադառնում է նաև «Արշալույս Արարատյանի» հրապարակումներին՝ նշելով որ թերթը՝ հավատարիմ իր երկփեղկված դիրքորոշմանը, մի կողմից չէր դրվատում Օսմանյան կայսրության դեմ ուղղված ազատագրական պայքարն ու շարժումները, մյուս կողմից հասկանում էր, որ ոտքի

ելած եվրոպական ժողովուրդները պայքարում են իրենց ազատության համար: Հայ հասարակական միտքն անտարբեր չի մնացել լեհերի պայքարի նկատմամբ:

1830–1831 թթ. լեհական ապստամբության ժամանակ հայ պարբերականներ լույս չէին տեսնում և անմիջական արձագանքների չենք հանդիպում, սակայն հետագայում այդ պայքարին հետադարձ հայացք են գցել Մխիթարյանների ու արևմտահայ լիբերալ հոսանքը ներկայացնող պարբերականները: Ինչ վերաբերում է 1846–1848 թթ. լեհական պայքարին, ապա այն լուսաբանել են արևմտահայ ազգային պահպանողական հոսանքի և Վիեննայի Մխիթարյան միաբանների հրատարակությունները: Հեղինակի դիտարկմամբ, 1840-ական թվականներին արևմտահայ պարբերականները թեև ջանացել են անկողմնակալ լուսաբանել լեհերի պայքարի մասին ստացված լուրերն ու եվրոպական մամուլի հրապարակումները, բայց և այնպես չեն շեղվել իրենց գաղափարական ուղեգծից ու լեհերի ազատագրական շարժումն, ընդհանուր առմամբ չեն դրվատել:

Ուսումնասիրության երկրորդ մասը ոչ միայն վերաբերում է XIX դ. կեսերի եվրոպական ազգային ազատագրական շարժումների արձագանքներին, այլ բազմակողմանի քննություն է տվյալ ժամանակի Եվրոպայում տեղի ունեցող դեպքերի, հայ մտավորականության կողմից ազգային և եվրոպական արժեքների քարոզչության վերաբերյալ: Հայության երկու հատվածները երբեմն միևնույն հարցերը դիտարկում էին տարբեր հայեցակետից և այս առումով Ֆ. Մովսիսյանն այն միտքն է արտահայտում, որ արևմտահայ պահպանողականների համար 1840–1850-ական թթ. ազգային ինքնապահպանության խնդիրը դարձել էր սևեռուն գաղափար, ըստ որի, դիտարկում էին նաև այլ ժողովուրդների պայքարի հեռանկարները: Գալով արևելահայ մամուլին՝ այստեղ ավելի նկատելի էին դառնում ազգային լուսավորության նոր, ազատամիտ գաղափարները:

Հեղինակն անդրադառնում է նաև եվրոպական շարժումների նկատմամբ հայ եկեղեցու դիրքորոշմանը՝ ցույց տալով, որ ցարական Ռուսաստանի կազմում հայոց եկեղեցին անվերապահորեն կողմնակից էր ցարիզմի՝ եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու քաղաքականությանը: Հետաքրքրական է Ներսես Աշտարակեցու դիրքորոշումը: Մի կողմից նա Արարատյան աշխարհի ազատության և Մայր Աթոռի անկախության ջերմեռանդ փափագողն էր, մյուս կողմից շարունակում էր մնալ ռու-

սամետ դիրքերում, երբ խոսքը վերաբերում էր Ռուսաստանի դեմ ըմբոստացած լեհերի պայքարի ճնշմանը:

Առանձնակի ուսումնասիրության առարկա է եվրոպական ժողովուրդների պայքարի արձագանքը հայ գրականության մեջ, ինչին անդրադարձել է Ֆ. Մովսիսյանը՝ նշելով, որ XIX դ. հայ պարբերականներում տպագրված բազմաթիվ հոդվածները, հրապարակումներն ու եվրոպական մամուլից թարգմանությունները առ այսօր լուրջ ուսումնասիրության կարիք են զգում, մինչդեռ դրանց հեղինակները մեծ ներդրում ունեն հայ հասարակական մտքի ձևավորման և զարգացման գործում: Անդրադառնալով Հ. Պարոնյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Պատկանյանի, Մ. Թաղիադյանի, Ս. Պալասանյանի և այլոց մտավոր ժառանգությանը՝ հեղինակը միաժամանակ նշում է, որ այդ հեղինակները ազատության և անկախության համար պայքարի ելած ճնշվող ժողովուրդների պաշտպաններ էին, մանավանդ որ եվրոպական շատ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն աղերս ուներ հատկապես արևմտահայության իղձերի հետ:

Հեղինակը առանձնահատուկ ուշադրության է արժանացնում հայ հասարակական մտքի և նոր գրականության մտահոգությանը ոչ միայն հայության հետ ընդհանրություններ ունեցող և բախտակից ժողովուրդների, այլև հեռավոր Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ճակատագրով, ցույց տալիս, թե ինչպես են նրանք հետևել ու ժամանակին անդրադարձել բազմաթիվ ժողովուրդների ազատագրական պոռթկումներին, դրվատել նրանց ըմբոստ ու ազատատենչ ընդվզումը, ցավ ու կարեկցանք արտահայտելով նրանց կրած պարտության համար:

Հանգամանորեն է ներկայացված ուսումնասիրության առավել ընդգրկուն երրորդ մասը՝ **«Հայ հասարակական միտքը 1850–1870-ական թթ. եվրոպական ազգային-ազատագրական շարժումների մասին»**: 1850–1870-ական եվրոպական ազատագրական շարժումները նոր հնչեղություն ստացան, պայմանավորված այն հանգամանքով, որ այդ ժամանակահատվածում հայ պարբերական մամուլի էջերում հանդես եկան հասարակական-քաղաքական հոսանքները: Հոսանքների առկայությունը նպաստեց եվրոպական ազատագրական շարժումների նկատմամբ հայ հասարակական մտքի զարգացմանը: Աշխատանքի այս հատվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ XIX դ. 50–70-ական թթ. պարբերականների շրջանում կային այնպիսիք, որոնք ներկայացնելով եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրա-

կան պայքարը, նպատակ ունեին ոգևորել հայ երիտասարդությանը, մինչդեռ որոշ պարբերականներ մշտապես չեզոք դիրք էին գրավել:

Ֆ. Մովսիսյանի ուսումնասիրությունները կատարվել են պատմական քննության և արժևորման սկզբունքներով, որի արդյունքում հեղինակը կարողացել է սթափ գնահատել եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ խմբագիրների որդեգրած դիրքորոշումները: Նա ցույց է տվել, որ պայքարի նկատմամբ չկա միանշանակ դիրքորոշում և այն տարբեր կերպ է ընկալվել ու մեկնաբանվել ինչպես հայ պարբերական մամուլի, այնպես էլ հասարակական-քաղաքական հոսանքների կողմից: Բնութագրվում են ազգային-պահպանողական հոսանքի պարբերականները, որոնց մեջ կային այնպիսիք, որոնք հավաստի ներկայացնելով իրադարձությունները, միաժամանակ ճիշտ եզրահանգումներ էին անում, օրինակ, իտալական ազատագրական պայքարի վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մասյաց աղավնի» պարբերականի դիրքորոշումը հայ պատմագրության մեջ ուսումնասիրված չէ, Ֆ. Մովսիսյանը առանձնակի անդրադառնում է այդ պարբերականին, ցույց տալով, որ դրա թղթակիցներն ու խմբագիրը՝ հայ ազգային-պահպանողական հոսանքի երևելի դեմքերից Գաբրիել Այվազովսկին, անտարբեր չէին իտալացիների պայքարի նկատմամբ: Նրանք այդ պայքարի պատճառը համարում էին ավստրիական իշխանությունների կողմից նրանց նկատմամբ մշտապես իրականացրած քաղաքական, տնտեսական և հոգևոր ճնշումներն ու շահագործումը: Ֆ. Մովսիսյանն ընթերցողի ուշադրությանն է հրավիրում մինչ այժմ գրեթե չուսումնասիրված մի հանգամանք՝ «Մասյաց աղավնի» ամսագրի դիրքորոշումը անկախության համար իտալական երկրորդ պատերազմի վերաբերյալ: Նա համոզիչ փաստերով հիմնավորում է, որ ամսագիրը իտալական ժողովրդի անկախության համար պայքարը ներկայացնում է եվրոպական մամուլի հիման վրա՝ հիմնականում չհիշատակելով օգտագործած աղբյուրը:

Առկա նյութերի վերլուծության հիման վրա Ֆ. Մովսիսյանը ցույց է տալիս, որ Գ. Այվազովսկին չի բավարարվում սոսկ թարգմանաբար ներկայացնելով եվրոպական պետություններից ստացված պաշտոնական լուրերն ու հաղորդագրությունները: Նա հաճախ հանդես է գալիս դրանց ինքնատիպ վերլուծություններով և եզրակացություններով, իսկ երբեմն էլ կատարում է բավական հետաքրքիր կանխատեսումներ: Ամսագրի գնահատականները հիմնականում անաչառ էին, կանխատեսումները՝ իրականանալի:

Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Մեղու Հայաստանի» լրագիրը 1860-ական թվականներին ոչ միայն ձգտում էր վերլուծել իրադարձությունները, այլ հանդես էր գալիս նաև սեփական դիրքորոշմամբ:

Ֆ. Մովսիսյանի ուշադրությունից չեն վրիպել նաև «Համբավաբեր Ռուսիոյ», «Փորձ» և «Արձագանք» պարբերականների գնահատականները, որտեղ ներկայացված են պայքարում աչքի ընկած գործիչների ձեռնարկած քայլերը:

Առանձնակի անդրադարձ է կատարվել ազգային-պահպանողական հոսանքի երևելի դեմքերից Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցի հրապարակումներին: Ճիշտ ընկալելով իտալական ժողովրդի պայքարի նպատակը՝ Տերոյենցը ձգտում է եվրոպական մամուլով հնարավորինս շատ լուրեր հայտնել այդ մասին՝ փորձելով պահպանել անկողմնակալություն: Բայց որքան էլ որ նա ջանում է հավատարիմ մնալ իր որդեգրած «չեզոքությանը», իշխանությունների դեմ պայքարի ելած հայրենասերների գործողություններին բացասական գնահատական է տալիս և Ջ. Գարիբալդիին ու նրա համակիրներին համարում «խռովարարներ»:

Լիբերալ հոսանքի պարբերականների դիրքորոշման կապակցությամբ Ֆ. Մովսիսյանը այն իրավացի դիտարկումն է անում, որ դրանց արձագանքները հիմնահարցի վերաբերյալ տարբեր են: Որոշ պարբերականներ չեզոք դիրքերից են ներկայացրել եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը և բավարարվելով միայն թարգմանական նյութերով, դրսևորել են զգուշավոր կեցվածք: Օրինակ, «Մասիս»ը քողարկված համակրանքով է ներկայացրել Ջ. Գարիբալդու պայքարը և մերթ ընդ մերթ հանդես եկել նրա երկրպագուի դիրքերից:

Անդրադառնալով «Մշակ» և «Հյուսիս» պարբերականներին, հեղինակը ցույց է տալիս, որ դրանք ոչ միայն մանրամասն շարադրել են իրադարձությունների ընթացքը՝ պայքարի արդարացի բնույթը ցույց տալու համար, այլև ակնածանքով իրենց ընթերցողի ուշադրությունը հրավիրել են այնպիսի գործիչների վրա, որոնց կարիքը, ըստ խմբագիրների, կար նաև հայ ժողովրդի շրջանում: Դեմոկրատական հոսանքի պարբերականները, որոնք ազատության գաղափարի ջերմ երկրպագու էին, ամենայն մանրամասնությամբ են անդրադարձել Իտալիայում ծավալված պայքարին, ըստ արժանվույն են գնահատել այդ պայքարի ակնառու գործիչներին:

Ֆ. Մովսիսյանի ծավալուն այս ուսումնասիրությունն ունի սկզբնաղբյուրների, գրականության, պարբերական մամուլի հարուստ ցանկ: Ուսումնասիրությունն ամբողջական պատկերացում է տալիս մի կողմից XIX դ. Եվրոպայի պատմության, դարակազմիկ իրադարձությունների, մյուս կողմից՝ հայ հասարակական մտքի, քաղաքական, մշակութային իրողությունների մասին, պարունակելով հարուստ տեղեկատվություն՝ հայ պարբերական մամուլի և քաղաքական մտքի հետագա ուսումնասիրողների համար:

Եռագրությունը նաև պատգամ է ապագա ուսումնասիրողներին: Հեղինակը ոչ միայն հանգամանորեն ներկայացնում է հիմնահարցը, այլ նաև նշում է, որ եվրոպական մյուս ժողովուրդների, հատկապես՝ իսպանացիների, բելգիացիների, իռլանդացիների, գերմանացիների, ինչպես նաև հարավսլավոնական, բալկանյան ու դանուբյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, այդ շարժումների վերաբերյալ գրականության և մամուլի արձագանքները ուսումնասիրության լուրջ կարիք ունեն:

Ուսումնասիրությունն ամբողջական վերլուծություն է, որտեղ հեղինակը օգտագործած գրականության, մամուլի նկատմամբ ցուցաբերել է անաչառ մոտեցում: Մի քանի տասնյակ պարբերականների ուսումնասիրությունը, դրանց գիտական բնութագիրն ու ընդհանրացումները խոսում են հեղինակի՝ հիմնահարցի խոր իմացության, կատարած քրտնաջան ու բարեխիղճ աշխատանքի մասին:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
sargsyansuren@yandex.ru

Հրատ. պատվեր N 1031
Ստորագրված է տպագրության 28.04.2023 թ.:
Չափսը՝ 70x100$^{1}/_{16}$: 17.5 տպ. մամուլ:
Տպաքանակը 150 օրինակ:

Խմբագրության հասցեն. 375019, Երևան-19,
Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, հեռ. (+374 10) 521362, 010.564180

Адрес редакции: 375019, Ереван-19,
пр. Маршала Баграмяна 24/4, тел.: (+374 10) 521362, 010.564180

24/4, Marshal Baghramyan
Ave., Yerevan, 375019. Tel: (+374 10) 521362, 010.564180

www.hayagithimnadram.am
Email: banberhayagitutyan@gmail.com, info@haygithimnadram.am

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն փպարան, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.
Printing House of the “Gitutuyn” Publishing of the NAS RA, 375019,
Yerevan, Marshal Baghramian ave., 24.
Типография издательства «Гитутюн» НАН РА, 375019,
Ереван, пр. Маршала Баграмяна, 24.